ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅՈՑ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

ՀԱՅՈՑ ՃԱԿԱՏԱԳՐՈՒՄ

А II 90031

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Կ – 294

Խմբագիր՝ Ավագ Հարությունյան

Գրախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Համլետ Հարությունյան
պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Արարատ Հակոբյան

Կ – 294 Կարապետյան Հ. Ն., Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում, Երևան, Հայաստանի ազգային արխիվ, 2004. 128 էջ:

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող այս աշխատությունը պրոֆեսոր Հ.Ն.Կարապետյանի երկարատև աշխատանքի արգասիքն է:

Տարիներ շարունակ արխիվներում բեղմնավոր պրպտումների արդյունքում հեղինակը կարողացել է ի մի բերել և համակարգված ձևով ներկայացնել Սևրի պայմանագրին առնչվող միջազգային դիվանագիտության հիմնահարցերը, բացահայտել Եվրոպայի և Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումները Հայկական հարցի և Առաջին Հանրապետության ճակատագրի հարցում:

Անաղարտ մայրենիով և հետաքրքրաշարժ ոճով շարադրված այս աշխատությունը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն շրջանակների համար:

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99941-910-2-0

© Կարապետյան Հ. Ն.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՆԱԽ՝ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌՈՎ

Աշխարհում չիրականացված հրաշքներ շատ չեն եղել: Իսկ քչերից մեկն էլ տեղի է ունեցել 1920թ. օգոստոսի 10-ին, Փարիզի Սևր արվարձանում, բյուրեղապակյա իրերի ծեռնարկության դահլիճում, որից էլ՝ «Սևրի պայմանագիր» անվանումը: Դրանով Թուրքիան հայտարարել է, որ «ճանաչում է Հայաստանը որպես անկախ պետություն, ինչպես որ դա արել են գլխավոր դաշնակից տերություններ՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան և ճապոնիան՝ իրենց դաշնակից երկրների[1] հետ միասին»:

Դա սոսկ հռչակում էր: ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին դեռ պետք է ներկայացվեր ենթադրվող տարածքների սահմանի ճշտորոշումը՝ վերապահելով ուրիշ այլ պարտականություններ, որոնք վերաբերում էին Հայաստանին դեպի ծով ելք տալուն և հետագայում նրա սահմանների ապահովման հարցերի լուծմանը:

Այս աշխատությունը շարադրելու համար հեղինակը օգտվել է Երևանի և Մոսկվայի արխիվների նյութերից, փաստաթղթերի ժողովածուներից, համապատասխան գրականությունից, մամուլից, խնդրի բացահայտման համար բավարար համարելով առկան, առհասարակ ցանկալի համարելով նաև բազմալեզու նյութերի ընդրկումը:

Եվ դարձյալ Սևրը կմնար հայոց պատմության ճշմարիտ, բայց և տարակուսելի էջը, որին նրա հեղինակները տեր չկանգնեցին, չարաշահողի առջև դռները բաց թողնելով:

---

[1] Հայաստան, Բելգիա, Հունաստան, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինիա, Սերբիա-Խորվաթիա-Սլովենիա, Չեխոսլովակիա:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԷՋԵՐ ՄԻՆՉՍԵՎՐՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ա. 19-ՐԴ ԴԱՐ

Հենց միայն Թուրքիան ու Ռուսաստանը, դեռ 19-րդ դարում, քանիցս միմյանց և այլոց հետ ստորագրել են համանման մի շարք փաստաթղթեր:

- 1828թ. փետրվարի 10-ին Պարսկաստանի հետ կնքված ով Ռուսաստանին էին զիջում Երևանի ու Նախիջևանի խանությունների տարածքները:

- 1853-1856թթ. Ղրիմի պատերազմի ավարտից հետո Ռուսաստանը Թուրքիային է «վերադարձնում Կարս քաղաքը՝ նրա միջնաբերդով հանդերձ, ինչպես նաև օսմանյան տիրապետությունների այն մասերը, որոնք գրավվել են ռուսաց զորքերի կողմից»:[1]

1878թ. փետրվարին Սան-Ստեֆանոյի նախնական ռուս-թուրքական պայմանագրում նկատի ունենալով, որ մինչ այդ տեղի ունեցած պատերազմի ընթացքում գրավված հայաբնակ վայրերից ռուսական զորքերի դուրս գալուց հետո Թուրքիայի կողմից կարող էին լինել վտանգավոր «բախումներ և բարդություններ», սուլթանի կառավարությունը «պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ, և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից ու չերքեզներից»:[2] Սակայն, նույն տարվա հուլիսին, Բեռլինում կայացած վեհաժողովում վերանայվում և անց են

---

[1] Сборник договоров России с другими государствами, Москва, 1952, сс. 44-46. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում, Երևան, 1972, էջ 82:

[2] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 92: Сборник договоров России, сс. 159-175. Լեո, Հայկական հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915; ՀՍՀ, հ. 10, էջ 170:

կացվում հայության ապահովության մասին պայմանների վերը նշված ակնարկները: Սա հանրահայտ է:

Իսկ մինչ այդ 1878թ. մայիսին, Մեծ Բրիտանիան և Ռուսաստանը Սան-Ստեֆանոյի պայմանագրում փոփոխություններ կատարեցին, ըստ որի. «Հայաստանի վերաբերյալ խոստումները պետք է տրվեին ոչ թե բացառապես Ռուսաստանի, այլ նաև՝ Անգլիայի անունից»:[1]

Նման ցանկության համար պետք է Անգլիային գովել: Սակայն, նույն տեղում Անգլիան տարակուսանք հարուցող մտահոգություն է արտահայտում. «Համաձայնվելով չառարկել ռուսաց կայսրի՝ իր նվաճումները Հայաստանում պահպանելու ցանկությանը, Նորին Մեծության (Բրիտանիայի) կառավարությունը չի թաքցնում, որ Ռուսաստանի սահմանների ընդլայնման հետևանքով հավանաբար կարող է ծագել թուրքական բնակչության անդորրությանն սպառնացող լուրջ վտանգ, որից պահպանելու պարտականությունը այսուհետև կնկնի հատկապես Անգլիայի վրա»: Այդ էլ բավարար չհամարելով Անգլիայի կառավարությունը «ի գիտություն է ընդունում Նորին Կայսերական Մեծության (Ռուսաստանի - Հ.Կ.) հավաստիացումն այն մասին, որ ապագայում Ռուսաստանի սահմանը չի ընդլայնվի Ասիական Թուրքիայի կողմից»:[2]

Սա ուղղակի վերաբերում է այդ հարցում Ռուսաստանի ընդհանուր դիրքորոշմանը: Ստացվում է, որ Անգլիան ցանկալի չի համարում Ռուսաստանի մուտքը Արևմտյան Հայաստան կամ նույնն է թե՝ Արևմտյան Հայաստանի միավորումը Ռուսաստանին: Անգլիայի քաղաքական մտքին հասու էր այն պարզ ճշմարտությունը, որ Հայաստանին ու հայ ժողովրդին անհամեմատ հաճելի կլիներ թուրքական սուլթանի լուծը թոթափելը և Ռուսաստանին միավորվելն ու ռուսաց ցարի գահին եթարկվելը: Անգլիան առարկում էր դրան: Բայց ի՞նչ էր նա կամենում, և ի՞նչ նպատակ էին հետապնդում անգլիական քաղաքական գործիչների ցավակցական, արտասվաթոր արտահայտությունները թուրքական բեռան տակ հեծող հայ ժողովրդի հասցեին:

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 100:
[2] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 102:

1878թ. հուլիսին անգլիական և ոչ միայն անգլիական, տրամադրությունը իր արտահայտությունը գտավ Բեռլինի կոնգրեսում: Այնտեղ պետք է վերանայվեր հայությանը վերաբերող 16-րդ հոդվածը պարունակող Սան-Ստեֆանոյի պայմանագիրը: Կոնգրեսի բացումից ընդամենը ինն օր առաջ, 1878թ. հունիսի 4-ին, Կ.Պոլսում Անգլիայի և Թուրքիայի միջև հատուկ դաշնագիր էր ստորագրվել, որը տվյալ դեպքում կարելի է անվանել ընդդեմ և Ռուսաստանի և Հայաստանի: Նրանում ամեն ինչ անսքող է, տառացի-բառացի: Մեծ Բրիտանիայի կայսրուհին և Թուրքիայի սուլթանը իրենց նշանակած ներկայացուցիչների միջոցով վճռել էին. «Հոդված 1. Եթե Ռուսաստանը, իր ձեռքում պահելով Բաթումը, Արդահանը, Կարսը կամ նրանցից մեկն ու մեկը, այսուհետև երբևիցէ փորձ անի տիրելու Ասիայում Նորին Կայսերական Մեծություն սուլթանի ունեցած այն երկրներից որևէ մի մասին, որը հաշտության վերջնական դաշնագրով պիտի որոշվի, այն ժամանակ Անգլիան պարտավորվում է միանալ սուլթանի հետ, զենքի ուժով այդ երկրները պաշտպանելու համար»:[1]

Աջևում կոնգրեսն էր: Սուլթանը ահաբեկված՝ թե չլինի մի թիզ հող կորցնի նվաճած հայոց և այլոց տարածքներից, դիմեց Անգլիայի օգնությանը: Մեծ Բրիտանիայի թագուհու անունից գոհացուցիչ խոստում էր տրվել, և Բեռլին մեկնած անգլիական դեսպանները պետք է այն չդրժեին:

Սան-Ստեֆանոյի 16-րդից Բեռլինում 61-րդ դարձած հոդվածից դուրս են մղվում «Հայաստանի Թուրքիային վերադարձվելիք վայրերից» և ընդհանրապես Թուրքիայի «հայաբնակ մարզերում» բարելավումներն ու բարենորոգումները նախքան «ռուսական զորքերի դուրս բերումը», «անհապաղ կենսագործելու» բառերն ու գաղափարները:

Ընթերցենք Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը. «Բարձր Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման իրագործել հայաբնակ մարզերում տեղական կարիքներից հարուցված բարելավումներն ու բարենորոգումները և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից և քրդերից: Բարձր Դուռը տերություններին պարբերաբար կհաղոր-

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 104:

դի այն միջոցների մասին, որոնք ինքը ձեռք է առել այդ նպատակի համար, իսկ տերությունները կհսկեն դրանց կիրառմանը»:[1]

Այլ կերպ ասած, Եվրոպայի ազդեցիկ և շահագրգիռ տերությունները նսեմացնելու էին Թուրքիայի նկատմամբ Ռուսաստանի տարած հաղթանակի նշանակությունը և արգելակելու նրա դերի բարձրացման հնարավորությունը այնտեղ, որտեղ մինչ այդ իշխող էին, ինչպես ասվեց, ազդեցիկ տերությունները ի դեմս, մասնավորապես, Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի:

Նրանցից ոչ մեկի համար գաղտնիք չէին, որ Ռուսաստանը օգտվելով պատերազմում հաղթողի իր դիրքից, պիտի ձգտեր իրեն միավորել Արևմտյան Հայաստանը: Գաղտնիք չէր և այն, որ այդպիսի միավորման կողմ էր և արևմտահայությունը:

Բ. ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ

Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող վճիռների մի նախօրինակ եղել է 1914թ. սկսված Առաջին Աշխարհամարտի ընթացքում, երբ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան ընդհանուր հայտարարի են բերում փոքրասիական տարածքները միմյանց միջև վերաբաժանելու իրենց պայմանները և դրանց ներկայացնում իրենց մյուս դաշնակից Ռուսաստանին: Վերջինս համաձայնվում է պայմանով, եթե իրեն կմիացվեն Էրզրումի, Տրապիզոնի, Վանի ու Բիթլիսի վիլայեթները՝ մինչև Տրապիզոնից դեպի արևմուտք որևէ կետում ծովափ դուրս եկող հատվածը: Այնպես որ, այդ պահանջը առաջ էլ է եղել, բայց Ռուսաստանին, այլ ոչ թե Հայաստանին միացնելու պայմանով և ոչ այն մանրակրկիտ գծագրմամբ, ինչպես վիլսոնյանն էր լինելու:

Այս առնչությամբ հնարավորություն է ստեղծվում պատասխանելու այն հարցին, թե այդ դեպքում նշված տարածքները արդյո՞ք Ռուսաստանին էին միավորվելու: Չէ՞ որ

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 128:

այդ ժամանակ Հայաստանի անկախության և նրա ինքնուրույն պետականության հարց անգամ չի եղել: Անկախ դրանից, հայ ժողովուրդը ըմբռնումով կընկալեր այդ միացումը, տեսնելով իր տարածքների ամբողջականությունը մեկ միասնական, քրիստոնյա պետության՝ Ռուսաստանի, հովանու ներքո: Դրա իրատեսական լինելու տարրերը ակնհայտ դարձան պահանջարկի հայտնի դառնալու հենց սկզբից: Ռուսաստանի նշված պահանջները կառավարությունը ավելի վաղ շարադրել է 1916թ. ապրիլի 26-ի՝ Պետրոգրադում Ֆրանսիայի դեսպան Մորիս Պալեոլոգին հղած հուշագրում, որը նրան մատուցել է արտգործնախարար Ս.Սազոնովը: Դեսպանը նույն օրը հայտնել է իր կառավարության համաձայնությունը, որին մայիսի 23-ին միացել է նաև Մեծ Բրիտանիան:[1]

Սակայն. 1917թ. հոկտեմբերին ժամանակավոր կառավարության տապալումը էապես փոխեց Ռուսաստանի վերաբերմունքը թե Արևմտյան Հայաստանի, և թե կովկասյան ճակատի ու երեկվա դաշնակից Անտանտի տերությունների նկատմամբ: Հարցը միանգամայն այլ ընթացք է ստանում:

Այդ առումով, ուշագրավ է Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ.Լլոյդ Ջորջի 1918թ. հունվարի 5-ի հետևյալ հայտարարությունը. «Թեև մենք չենք սպառնում թուրքական կայսրության պահպանմանը թուրք ժողովրդի բնարմատ հողերի շրջանակներում, նրա մայրաքաղաք Կ.Պոլսով, այնուամենայնիվ Միջերկրական և Սև ծովերի միջև անցուղին պետք է համաձայնեցվի և չեզոքացվի, իսկ Արաբիան, Հայաստանը, Միջագետքը, Պաղեստինը պետք է ստանան իրենց հատուկ ազգային պայմանների ճանաչումը»: «Սևրի հաշտության պայմանագիրը և Լոզանում ստորագրված արձանագրությունները» ժողովածուի ուշագրավ առաջաբանում նշվում է, որ ԱՄՆ-ի պետական քարտուղար Ռ.Լանսինգը դեռ 1918թ. սեպտեմբերի 21-ին կազմել էր տարածքային հարցերի վերաբերյալ հուշագիր, որը պետք է ներկայացվեր նախագահ Վ.Վիլսոնին և հարկ կլիներ պատրաստվել հաշտության հետագա բանակցություններին: Ըստ այդմ, Հայաստանը և Սի-

---

[1] Севрский мирный договор и акты подписанные в Лозанне, Москва, 1927, с. IV. (Այսուհետև Севрский договор).

րիան հանձնվելու էին մեկ կամ մի քանի պետության հովանավորությանը, որոնցում նայած տեղական և միջազգային շահագրգռությունների բնույթին, անց էր կացվելու բաց դռների քաղաքականություն:[1]

Ռուսաց պետականությունը սևրյան փաստաթղթի ստեղծմանը չի առնչվում: Փաստաթուղթը գլուխ բերելու համար հայ ազգային գործիչներին օժանդակել են արևմտյան տերությունների պետական-քաղաքական գործիչները, դիվանագետներն ու հասարակական անձինք: Տվյալ պահին Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը մշակող-իրականացնող գործիչները սկզբունքորեն դեմ են եղել Սևրի պայմանագրին՝ որպես այդպիսին: Չնայած դրան, փաստ է և այն, որ Ռուսաստանում ասպարեզ ելած և շուտով իշխանության գլուխ անցած գործիչներն են համաշխարհային պատերազմի թոհ ու բոհի մեջ առաջինը հռչակել Արևմտյան Հայաստանի ազատագրության գաղափարը և արծածել անկախ Հանրապետություն ստեղծելու պահանջը, ինչը կատարվել է 1917թ. հունիսին բանվորների ու զինվորների խորհուրդների առաջին համագումարում: Այնտեղ Վ.Լենինը խոսքն ուղղելով ժամանակավոր կառավարությանը՝ բոլշևիկների անունից հայտարարեց, թե ձեր ձեռքին է և ուժը, և իշխանությունը, ինչու՞ չեք իրականացնում առանց զավթումների հաշտության ծրագիրը և ստեղծում անկախ Հայաստան:[2]

Իսկ արդեն հետագայում, խորհրդային կառավարությունը 1917թ. նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին) հռչակեց «Մենք հայտարարում ենք, որ Թուրքիան բաժանելու նրանից Հայաստանը խլելու մասին պայմանագիրը պատռված է և ոչնչացված: Հենց որ դադարեցվեն ռազմական գործողությունները, հայերին իրավունք կվերապահվի ազատորեն որոշելու իրենց քաղաքական ճակատագիրը»:[3]

Հարց է ծագում. այդ ո՞ր պայմանագիրն է, որ ոչնչացված էր և ինչպե՞ս պետք է դրանից հետո հայերին ինքնորոշվելու իրավունք վերապահվեր, մանավանդ որ Թուրքիայից

---

[1] Севрский договор, сс. VIII, IX.
[2] Վ.Ի.Լենին, ԵԼԺ, հ. 32, էջեր 356, 360:
[3] Севрский договор, с. IV.

Հայաստան խլելու մասին պայմանագիրն էր «պատռված և ոչնչացված» հռչակվում: Չէ՞ որ այդ այն պայմանագիրն էր, որով Ռուսաստանը նախապես, պատերազմը դեռ չավարտված, Ֆրանսիայի և Անգլիայի հետ համաձայնություն էր կնքել Արևմտյան Հայաստանի տարածքները, որ այդ ժամանակ գրավված էին ռուսական զորքերի կողմից, դուրս բերել թուրքական տիրապետությունից և միացնել Ռուսաստանին:

Բայց նկատենք, որ վերը վկայակոչված հռչակման մեջ ավելորդ մեծահոգություն է ցուցաբերված Թուրքիայի նկատմամբ. մի բան էր Թուրքիան բաժանելը, տրոհելը, և բոլորովին այլ «նրանից Հայաստանը խլելը»: Ցավոք սրտի, նույն հարցի հետ առնչվող հայերեն պատմագիտական երկերում վերը բերված քաղվածքը, որպես կանոն, բերվում է ամբողջապես թացն ու չորը միատեղ: Այդ *խլել* ասվածը Ռուսաստանին էր վերաբերվում իսկ հայության համար, հասկանալի իմաստով, մեծ չէր տարբերությունը. Ռուսաստանը խորհրդային կլիներ, թե ոչ խորհրդային:

Երբ դեռ պատերազմը շարունակվում էր և Ռուսաստանը հաղթող ու գերակշիռ ռազմաքաղաքական ուժ էր, իր դաշնակից Անգլիայի ու Ֆրանսիայի հետ բանակցելով համաձայնության էր եկել, որ իրեն միացվեն Էրզրումը, Տրապիզոնը, Վանն ու Բիթլիսը, նաև դեպի Սև ծով ելքով Տրապիզոնին մոտակա մի ափաբաժին: Սա Ֆրանսիայի հետ 1916թ. ապրիլին, իսկ Մեծ Բրիտանիայի հետ՝ հաջորդ ամսին:[1]

Նոյեմբերի 20-ի փաստաթղթում այդ և նման միացությունն էր որակվեց «Թուրքիայի բաժանում», փաստաթուղթն էլ «Հայաստանը խլելու մասին պայմանագիր»: Ինչու՞ պետք է նախ այդ փաստաթուղթը պատռվեր և նոր միայն հայերին ինքնորոշվելու իրավունք վերապահվեր: Ինչո՞վ պիտի այդ փաստաթուղթը և հատկապես նրանում Հայաստանի միավորմանը վերաբերող հանձնառումը խանգարեր հայերին «ազատորեն որոշելու իրենց քաղաքական ճակատագիրը»:

Վերջին այդ միտքը, ինչպես անշուշտ նկատեց ընթերցողը, կիսով չափ հակադարձ համեմատական էր 1917թ. հունիսին խորհուրդների առաջին համագումարում Հայաստանի

---

[1] Севрский договор, с. IV.

անկախ հանրապետություն ստեղծելու մասին Վ.Լենինի՝ վերը նշված հռչակմանը:[1]

Անդրադառնանք երկրորդ՝ Հայաստանի համար լիապես նպաստավոր, հակադարձ համեմատականին:

Խոսքը վերաբերում է Ժողկոմխորհի 1917թ. դեկտեմբերի 29-ին ընդունած և 1918թ. հունվարի 3-ին ճշգրտմամբ հրատարակված «Դեկրետ Թուրքահայաստանի մասին» փաստաթղթին: Որքան էլ, գուցե, անսպասելի թվա, մենք այն կհամարեինք սևրյան փաստաթղթի նախօրինակ տարբերակի հրպարակում:[2]

Վ.Լենինը Արևմտյան Հայաստանում ռուս զորքերի գոյությունը համարում էր անեքսիա, որը նվաճում է ու բռնակցում, և որը նա սկզբունքորեն դատապարտեց: Բայց այս դեպքում փաստը նա արդարացնում է, հռչակելով. «Եթե այդ բանակը Հայաստանը դարձներ անկախ հայկական հանրապետություն, ապա դա ավելի լավ կլիներ»: Նա առաջադրում է միանգամայն նոր քաղաքական պահանջ. «Ժողկոմխորհը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»:[3]

Այնուհետև, շարադրվում են նախնական երաշխիքները, որոնք անհրաժեշտ էին հարցի լուծման նպատակով ազատ հանրաքվե անցկացնելու համար:

Ըստ «Դեկրետի» տարածքները հանձնվելու էին հանրաքվեով: Առջևում կտեսնենք, որ նույն այդ հողերը սևրյան վճռի ի կատար ածման փաստաթղթով Հայաստանին էին միավորվելու իրավարարի սահմանագծմամբ: Վերջին հաշվով ձևը, պարզապես, որպես ձևականություն էլ մնաց, ընդունված վճիռների հետ մեկտեղ: Ոչ մի վերամիավորում: Այսինքը, Վ.Լենինն առաջադրում է իր քաղաքական պահանջը. «Ապացուցել, որ դուք ազատագրում եք Հայկական Հանրա-

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 191, 193:

[2] Правда, 1917, 31 декабря, 1918, 3 января.

[3] Հոկտեմբերյան սոցիալիստական ռևոլյուցիան և խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում, Երևան,1960, էջ 156-57:

պետությունը, համաձայնության մեջ եք մտնում յուրաքանչյուր երկրի բանվորների և գյուղացիների պատգամավորների խորհրդի հետ, որ դուք ազատ հանրապետության կողմնակից եք, այն ժամանակ ռուսական հեղափոխության արտաքին քաղաքականությունը կդառնա իրոք հեղափոխական, իրոք դեմոկրատական»: «Թուրքահայաստանի մասին դեկրետ» փաստաթուղթը իր բուն էությամբ սևրյան հռչակումների առաջնեկն է, Սևրի պայմանագրի պարունակության փաստաթղթային մի տարբերակի նախահռչակումը:

Երկաթը տաք-տաք են ծեծում: Արևմտյան Հայաստանի հսկայական տարածքները, 1914թ. սկսված և շարունակվող պատերազմի ընթացքում, ռուսական զորքերը գրավել էին և առայժմ այնտեղից դեռ լիովին դուրս չէին բերված: Հայերն էլ ստեղծում էին իրենց զինական ուժերը, որոնք կարող էին աջակցել ռուսական բանակին կամ բանակը կարող էր աջակցել նրանց ազատագրված հողերին տիրակալելու, այնտեղից հարկադրաբար փախած հայերին իրենց ապրելատեղերը վերադարձնելու գործում:

Արդեն 1918թ. մարտի 3-ին Ռուսաստանը Բրեստ-Լիտովսկում դաշինք կնքեց հակաանտանտյան քառյակ դաշինքի տերությունների հետ:[1] Ռուսաստանը այսուհետև դուրս գալով Անտանտից մերձենում է երեկվա հակառակորդ կողմի՝ Քառյակ դաշինք կազմող Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի ու Թուրքիայի հետ, միատեղ հռչակելով, որ իրենց միջև «վերջ է տրված պատերազմական վիճակին», որ «նրանք որոշել են այսուհետև միմյանց հետ ապրել հաշտ ու համերաշխ»: Ըստ այդմ, պայմանագիրը հռչակում էր. «Ռուսաստանը կանի այն ամենը, ինչ որ իրենից կախված է, որ ապահովի իր զորքերի դուրս բերումը Արևելյան Անատոլիայի նահանգներից և վերջիններիս կանոնավոր վերադարձը Թուրքիայից»: Այդ ճակատներում Թուրքիայի դեմ ռուս բանակների հետ ուս ուսի, որպես հայրենակից եղբայրներ, հայ կամավորների ջոկատները կռվել էին, որպեսզի սատար կանգնեն թուրքական բանակների կողմից հետապնդվող, պատերազմական այս ու այն վայրերում շուրջկալված հայ

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 425:

բնակչությանը: Մինչդեռ, հիմա հայի հույս ու ապավեն տերության զինվորները դուրս էին գալիս գրավված հայկական հողերից:

Փաստաթղթի 4-րդ հոդվածը իր մի մասով հնչում էր որպես անհետաձգելի ռազմական հրահանգ. «Ռուսական զորքերը պետք է անհապաղ դուրս բերվեն նաև Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերից: Ռուսաստանը չի միջամտի մարզերի պետական-իրավական և միջազգային-իրավական նոր կազմավորման գործին, այլ այդ մարզերի բնակչությանը հնարավորություն կտա դրացի պետությունների, մանավանդ Թուրքիայի համաձայնությամբ, հաստատել նոր կարգ»:[1]

Հազար անգամ ավելի լավ կլիներ, եթե Ռուսաստանը միջամտեր Արդահանի, Կարսի, և, եթե հարկ լիներ, նաև հայոց մյուս մարզերի գործերին, քան թե՝ խնդիրները թողներ Թուրքիայի համաձայնությամբ «նոր կարգ» հաստատելուն: Եվ դարձյալ լավ կլիներ, եթե Ռուսաստանը ջանք գործադրեր, որ այդ թոհ ու բոհի ժամանակ տրոհված ու բզկտված Հայաստանում, սպառնալիքի շեմին, մի հայ զինվոր լիներ Ռուսաստանի նախընտրությամբ կամ պարզապես մի ռուս զինվոր՝ որպես արթուն պահապան հայոց աշխարհի:

Թուրքիայի հետ նույն օրը, մարտի 3-ին, ստորագրված լրացուցիչ պայմանագրում, ռուսական կողմը հատուկ նաև «պարտավորվում է զորացրել և արձակել թուրքահպատակներից և ռուսահպատակներից կազմված հայկական չեթեները»:[2] Այսինքն, այն ոչ բանակային թերզինված խմբերը, որոնք հայ ժողովրդի համար մահու և կենաց դաժան իրավիճակում ազգապահպան մի դեր պիտի կատարեին և ... Հազիվ էլ թե կարողանային կատարել:

«Թուրքահայաստանի մասին դեկրետի» վրա խաչ քաշվեց: Մի հուշ և մի տպավորություն մնաց. Ռուսաստանը համենայն դեպս դեմ չի լինի, հանգամանքները ներելու դեպքում, սատար կանգնել Արևմտյան Հայաստանի հողերը Արևելյանին միացնելուն:

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 426:
[2] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 430-433:

Բրեստ-Լիտովսկյան վճիռը նշանակում էր՝ վերջ 1917թ. դեկտեմբերի 29-ին ընդունված Արևմտյան Հայաստանի հողերի ազատ ինքնորոշման իրավունքի պաշտպանության որոշմանը, որին երկու ամիս հինգ օր հետո (1918-ի մարտի 3-ին) հաջորդեց նույն այդ հողերը Թուրքիային կանոնավոր վերադարձնելու մասին վերը նշված վճիռը:

Ակնհայտ է դառնում, որ հայոց քաղաքականության խնդիրը

- պահը ճիշտ ընտրելն ու այն խորությամբ կշռադատելն է,
- ժողովրդի ժամանակավոր և մնայուն բարեկամներին միմյանցից զատելը,
- բարեկամի թե ոչ բարեկամի կարողացածն ու կամեցածն իրար հետ չշփոթելը,
- այլոց խոստումների մեջ կեղծը շիտակից զատելը,
- ցանկությունների մեջ հնարավոր փոքրը անհնարին մեծի հետ համադրելն ու իրականանալի ցանկալին գործի վերածելը:

Մոսկովյան կառավարությունը, ճիշտ է, գործնականում չի հակադրվել, որ երկրամասի տեղական ուժերը դիմադրեն երկիր ներխուժող թուրքական զորքերին: Բայց այս այն դեպքն էր, որ այդ ուժերին օգնել էր պետք, որը բրեստյան վճիռով փակի տակ էր դրված: Թուրքական զորքերը գրավեցին Կարսը, ապա Ալեքսանդրապոլը, դուրս եկան Երևանի մատույցների տակ և ճամփա բռնեցին դեպի Բաքու: Սարդարապատի դաշտում հայոց բանակն ու աշխարհազորը կանգնեցրին թշնամու բանակի երթը: 1918թ. մայիսի 28-ին Հայաստանը հռչակվեց անկախ հանրապետություն: Հունիսի 4-ին Բաթումում թուրքական կողմը Հայաստանին պարտավորեցրեց ստորագրել պայմանագիր, որով ազգային պետականության հաստատումը ճանաչվում էր Հայաստանի ընդամենը երեք քառորդից էլ պակաս տարածքի վրա:

Ի վերջո, 1918թ. սեպտեմբերի 20-ին, դարձյալ Ռուսաստանի կառավարությունը, արտգործժողկոմ Գ. Չիչերինի ստորագրած նոտայով, չեղյալ հայտարարեց Թուրքիային կովկասյան տարածքների բրեստ-լիտովսկյան զիջումը:

Ճիշտ է, բրեստ-լիտովսկյան զիջումը մերժվեց, ինչը Ռուսաստանի կողմից իրոք համարձակ դիվանագիտական քայլ էր, և հայկական պետականությանը վերադարձրեց բավական մեծ տարածքներ: Բայց միջանկյալ այդ պատմությունը (բրեստյանը) խաթարեց Արևելյան Հայաստանի պետականությանը Արևմտյան Հայաստանի այն տարածքները վերամիավորելու հնարավորությունը, որտեղ ամիսներ առաջ ռուսաց բանակն էր կանգնած, որոնք Ռուսաստանի կառավարության «Թուրքահայաստանի մասին դեկրետով» կարող էին Արևելյանի հետ միատեղ ՀՀ հաստատման շեմին նրա հենադաշտի բաղկացուցիչ մաս կազմել:

Բայց, դա էլ այն դեպքում, եթե պատմության հանգամանքները Ռուսաստանին դաշնակից Անտանտի տերությունների կազմից դուրս բերած և նրան դեմ հանդիման կանգնեցրած չլինեին: Միշտ է հայ մարդը մտորում և հաճախ ինքն իրեն հարց տալիս՝ միթե՞ Հայաստան աշխարհը այլևս չի միավորվելու և նրա կորուսյալ հողերը հատ-հատ կամ միասին երբևիցե չեն գումարվելու որպես ազգային պետականության ամբողջություն:

Սևրի պայմանագիրը այդ հարցի հետ սերտ առնչություն ունի:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՏԱՐԱԾԱՇՆՈՐՀ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԽՄՈՐՈՒՄԸ

(1918-1920 թթ.)

Առջևում սպասվում էր պատերազմում հաղթած տերությունների վեհաժողովը, որտեղ պահանջներ ներկայացնելու և գործի անցնելու առիթ էր ստեղծվում: Հայ Եկեղեցու հորդորմամբ և հատկապես նվիրյալ ազգապահպան Պողոս Նուբար Փաշայի ջանքերով, հանդես է գալիս նախաձեռնող խումբը: 1918թ. հոկտեմբերի 15-ին գաղթօջախներում տարածվում է առաջիկայում ազգային համագումարի հրավիրակոչ տեղեկագիրը: Ընտրվելու էր «ամբողջ աշխարհի խաղաղության վեհաժողովի առջև ազգային շահերը պաշտպանող մարմին»:[1]

Նախաձեռնող այդ մարմինը վաղօրոք ձևավորվելու էր որպես Առաջին Աշխարհամարտում հաղթած տերությունների Փարիզում վեհաժողովում Արևմտյան Հայաստանն ու հայ գաղթօջախները ներկայացնող հայոց ազգային պատվիրակության. նախագահ Պողոս Նուբար, անդամներ Գաբրիել Նորատունկյան, Հովհաննես Մասեհյան, Հովհաննես Զավրիև, որին փոխարինել է Ջեյմս Մալքոմը Լոնդոնից:

Պատվիրակությունը նկատի ունենալով, որ «ազգի մի մասը արդեն անկախ հանրապետություն է հիմնել Կովկասում», հայտարարում է *ամբողջական Հայաստանի անկախությունը* և իր 1918թ. նոյեմբերի 30-ի հայտարարագրով այդ մասին զեկուցում Անտանտի կառավարություններին:[2]

Դրան զուգընթաց գրող և հրապարակախոս Ավետիս Ահարոնյանի ղեկավարությամբ և Միքայել Պապաջանյանի ու Համո Օհանջանյանի անդամակցությամբ ստեղծվում է Հայաստանի Հանրապետության պատվիրակություն, որը

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1, թթ. 1-3:

[2] Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919. էջ 3:

А 900031

ամբողջական Հայաստանի վերստեղծման համար հանդես էր գալու ՀՀ անունից ու նրա խնդիրներով:[1]

1918թ. դեկտեմբերի 9-ին Անտանտը տեղեկացրեց, որ «Հայերին պետությունները ճանաչել են որպես պատերազմող կողմ»: Դա էլ հիմք ծառայեց դաշնակից պետությունների վեհաժողովին ՀՀ մասնակցության համար:[2]

Հ.Յ.Դ. և ՀԺԿ կառավարական կոալիցիան հայոց պատվիրակներին հրահանգեց «ջանալ հաջողացնել» Կովկասյան Հայաստանի և Թուրքիայի հայկական վեց վիլայեթների միացումը «սեփական ելքով դեպի ծով»:[3] Կազմվեց Անտանտի պետությունների մոտ ուղարկվող պատվիրակության հրահանգ, որի հիմնական դրույթներն են՝

- Նախկին ռուսահայ և տաճկահայ նահանգներից կազմել մեկ պետական մարմին՝ Միացյալ Հայաստան, որի բաղկացուցիչ մասերը լինելու են.

Ա) Անդրկովկասի բոլոր [հայկական] հողամասերը, Տաճկահայաստանից հայկական բոլոր վեց վիլայեթները, բացի՝ ոչ-հայաբնակ ծայրագավառների, բայց սեփական ելքով դեպի ծով (կարող էին լինել տարածքների ճշգրտման բնույթի կրճատումներ), նաև Գանձակի և Թիֆլիսի տարածքները, դարձյալ բացառյալ ծայրագավառները,

Բ) Արևմտյան Հայաստանից նշվում են Վանը, Բաղեշը, Էրզրումը՝ իրենց շրջաններով՝ դարձյալ առանց ոչ-հայաբնակ վայրերի,

Գ) նպատակահարմար է գտնվում կարևորություն տալ դեպի ծով ելքին:

Տարածքայինից բացի նշվում են հետևյալ քաղաքական հանգամանքները. «Հայաստանը ունենալու է քաղաքական և ռազմական ներքին ինքնավարություն և ինքնուրույնություն»: ՀՀ անկախությունը սահմանափակվելու էր այնչափ միայն, որչափ դա անհրաժեշտ կլիներ ապահովություն և աջակցություն ձեռք բերելու համար: Պարունակվել են նաև այլ հոդվածներ Հայաստանի անկախությունը, չեզոքությունը

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 18, թ. 3:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 2:
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 10:

Академия наук Армянской ССР Фундаментальная библиотека

ապահովելու, դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, հարևան տերությունների հետ մերձենալու և մինչև իսկ ֆեդերատիվ կապեր հաստատելու վերաբերյալ:

Փաստաթուղթը բաղկացած է միջազգային կապեր, ներքին կանոններ և հարցադրումներ պարզաբանող ու սահմանող 25 կետերից, և ստորագրված է մինիստր-նախագահ Հ.Քաջազնունու կողմից 1918թ. դեկտեմբերի 7-ին:[1]

Ի վերջո, երկու պատվիրակությունները միատեղ կազմած փաստաթուղթը վերնագրում են «Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ», որը հղում են նշված հասցեով: Ի պատասխան, ստացվում է Ազգերի Լիգայի Խորհրդի հուշագիրը, որում Հայկական հարցի լուծման ձևը համարվում է այն, որ Հայաստանի մանդատը հանձնվի Լիգայի Խորհրդի տրամադրությանը: Նույն տեղում էլ հայտնվում է, որ դեռ պարզված չէ, թե որն է լինելու նման պարտավորություն ստանձնող երկիրը, և ինչպիսին կարող էին լինել հովանավորության ձևերը (տնտեսական օժանդակություն, ռազմական աջակցություն և այլն): Այլ կերպ ասած, այնուամենայնիվ, ձևերը հայտնի էին, մնում էր դրանք կիրառել: Սերունդների պահանջը նրանում էր, ըստ որի. «պետք է նկատի առնվեր ողջ թե մեռած բոլոր հայերի ձայնը»:[2]

1917թ. հոկտեմբերի 25-ի հեղափոխական շրջադարձից երկու շաբաթ անց, նոյեմբերի 8-ին, Ռուսաստանում հռչակվել էր խաղաղության մասին հանրահայտ դեկրետը: Ձգտելով աշխարհում տիրապետող դիրքի ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնն 1918թ. հունվարի 8-ին կոնգրեսում քաղաքական դրույթներով ելույթ էր ունեցել, որոնք հայտնի են որպես «14 կետեր»: Ստացվում է, ըստ էության, երկու հակադիր քաղաքական ուղերձ: Բուն 14 կետերից բացի Վ.Վիլսոնի խորհրդական գնդապետ Էդվարդ Հաուզը շարադրել է նշված կետերից յուրաքանչյուրի լրացուցիչ պարզաբանումները, որոնք լայն տարածում են ստանում աշխարհում: Մինչ այդ, 1918թ. հունվարի 5-ին, իր դրույթների հռչակմամբ հանդես էր եկել Մեծ Բրիտանիայի վարչապետ Դ.Լլոյդ Ջորջը՝ դարձյալ

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թթ. 11-12:

[2] Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ, էջ 3:

որպես արդարացի ու բարեգործ հաշտություն կնքելու հավաստիացմամբ:[1]

Դ.Լլոյդ Ջորջը առիթ է ունեցել ասելու, որ Վ.Վիլսոնի հռչակումներում չկա որևէ մի դրույթ, բացի ծովերի ազատության պահանջից, որը անհամատեղելի լինի Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունների ծրագրային հրապարակումների հետ: Եվ այդպես էլ նա իր միտքը ամփոփում է մեկ բառով՝ «համընկնում»:[2] Դա կարելի է գուցե վերագրել սոսկ հռչակումների հեղինակային տեքստին: Մինչդեռ, նույնը չի կարելի ասել գնդապետ Է.Հաուզի բացատրությունների մասին, որպիսի նրբություններ չկան մյուս հռչակումներում:

Վ.Վիսլոնի դրույթները վերաբերվում էին աշխարհի բաժանմանը: Է.Հաուզի բացատրությունները նպաստելու էին դրան: Նպատակը մեկն էր. ապահովել ԱՄՆ-ի համաշխարհային գերակայությունը:[3] Վ.Վիլսոնի երազանքն էր այլևս «անել այն, ինչ կցանկանար ԱՄՆ-ը»:[4]

Կազմողները 14 կետերով առաջարկում են «Կովկասը դիտել որպես թուրքական կայսրության հիմնահարցի մի մաս»:[5] Կոչ էր արվում առաջիկա հաշտության կոնֆերանսում Թուրքիայի մեծ մասը՝ Կ.Պոլսի և նեղուցների հետ միասին, հանձնել ԱՄՆ-ին: 14 կետերից միայն 12-րդն էր վերաբերվում ոչ-թուրք ժողովուրդներին, և պարտավորեցվում էր երկրում նրանց համար հաստատել «ինքնիշխանություն, ապահովել կյանքի աներկբա անվտանգություն և միանգամայն անխախտ պայմաններ ինքնուրույն զարգացման համար»:[6]

Դա կարող էր վերաբերվել նաև հայերին: Բայց ամեն ինչ՝ Թուրքիա պետականության և նրա անխախտ սահմանների ներսում: Մնացյալը՝ պետք է երևար հետո, որը այնքան էլ

---

[1] Д.Ллойд Джордж. Правда о мирних договорах, т. 1, Москва, 1957, сс. 68-71. Н.Иноземцев, Внешняя политика США в эпоху империализма, Москва, 1960, сс. 142-147.
[2] Д.Ллойд Джордж, указ. соч., с. 71.
[3] Архив полковника Хауза, т. IV, Москва, 1944, с. 148.
[4] Там же, т. IV, с. 241.
[5] Архив полковника Хауза, т. IV, с. 151.
[6] Д.Ллойд Джордж, указ. соч., с. 71.

հեռու չէր: Դա երկրի ներսում հայերի ֆիզիկական ոչնչացումն էր, երկրից դուրս հայերի դեմ սկսված ջարդարար կոտորածն ու նոր տարածքների բռնակցումը հայությանը բոլոր խոստումներ տվողների անտարբեր հայացքի առջև:

Ըստ այդ փաստաթղթի ու Հաուզի մեկնաբանությունների ենթադրվում էր ԱՄՆ-ի մանդատ տալու քողի տակ Թուրքիայի տարածքի մեծ մասը Կ.Պոլսով հանդերձ, մտցնել ԱՄՆ-ի հովանու տակ: Ընդհանուր առմամբ 14 կետերը, բացահայտ թե քողարկված, հակառակ էին Անգլիայի ու Ֆրանսիայի հզորացմանն ու ազդեցության ընդարձակմանը:[1]

Այդ ընթացքում Դ.Լլոյդ Ջորջը և Ժ.Կլեմանսոն առիթ են ունեցել խնդրելու Է.Հաուզին, որ նա իրենց անունից հայտնի Վ.Վիլսոնին, որ կցանկանային, որպեսզի ԱՄՆ-ը ընդունի Հայաստանի և Կ.Պոլսի մանդատը: Է.Հաուզը այդ մասին հայտնել էր 1919թ. մարտի 17-ին, համոզված, որ «դրա հետ ԱՄՆ-ը կհամաձայնեն հենց որ նման առաջարկ լինի»:[2]

Հայաստանի տեղն ու դերը քաղաքական ասպարեզում բարձր է գնահատվել: Հետագա տարիների որոշ մեկնաբաններ, ուռճացնելով և իմաստափոխելով իրողությունը, պնդում են, թե Հայաստանը ծգտում էր դեպի ԱՄՆ սոսկ նրան սրտի մտոք ծառայելու, իսկ ամերիկյան հեղինակներ էլ կան, որոնք գտնում են, թե հայերը գնում են ԱՄՆ, միայն այդ երկրից իրենց փրկության բարիքները կորզելու: Անտեսվում է իրողությունը, որը ինքնին պետք է երկկողմ լինի, եթե ժողովուրդներն են շփվում, այլ ոչ՝ երկդիմի դիվանագետները: Ճշմարտության ապացույցը նշված դեպքերի օրերից մինչև այս տողերը գրելու պահը անցած տասնամյակներն են դեպքերի իրենց ամբողջությամբ հանդերձ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո հաղթած տերությունների ղեկավարները ձևացնում էին, թե տառապյալ մարդկության նկատմամբ ուզում են ար-

---

[1] ԱՄՆ-ի դիրքի մասին տես - А. Кунина. Провал Американских планов завоевания мирового господства в 1917-20гг., Москва, 1954. А.Березкин, США активный организатор и участник интервенции против Советской России, Москва, 1949.

[2] Архив полковника Хауза, т. IV, с. 277.

դարամիտ և հոգատար լինել: Անպայման նաև այդ տպավորությունից դրդված, 1918թ. մայիսի 28-ին փոքրիկ մի հողակտորի վրա հռչակված ՀՀ Թուրքիայի տիրապետության տակ գտնված բնարմատը Հայաստանի սահմանային մասի հետ միավորվելու և ամբողջական պետություն դառնալու օրինականություն է դրսևորում: Այդ և համանման այլ խնդիրների լուծումից, Ազգերի Լիգան ձևավորվելու վաղ օրերից, իր հռչակումներում ներկայացնում է որպես իր իրականությանը ենթակա պարտականությունը: Զուգընթաց կիրառության ձև է դառնում անկախությունը կորցրած երկրներին հովանավորող մանդատների շնորհումը՝ որպես խնամակալություն:

1918թ. հունվարի 5-ին Դ.Լլոյդ Ջորջը հայտարարել էր, որ Հայաստանը, ինչպես նաև Արաբիան, Միջագետքը, Սիրիան և Պաղեստինը «իրավունք ունեն խնդիր դնելու, որ ճանաչվեն իրենց յուրահատուկ ազգային պահանջները», գտնելով, որ «հիշյալ տերությունների նկատմամբ անցյալ իրավունքների վերականգնումը այլևս անհնար է»:[1]

1919թ. հունվարի 21-ին ԱՄՆ-ի պետքարտուղարության կազմած քարտեզների համաձայն Թուրքիան տրոհվելու էր երեք պետության, որոնցից մեկը լինելու էր Հայաստանը (մյուսները՝ բուն Թուրքիան և Կ.Պոլիսը): Հունվարի 30-ին եվրոպական տերությունները հռչակեցին, որ օսմանյան կայսրությունը դադարել է գոյություն ունենալուց:[2]

Հայ արտաքին քաղաքական կողմնորոշումը մշակող անձինք աշխատում են, օգտվելով իրավիճակից, նպաստ բերել ժողովրդի դարավոր իղձերի իրականացմանը: Ազգասիրական, բարոյական մղումներով նրանք անկեղծ հավատով ձգտել են կապեր հաստատել Փարիզի վեհաժողովի ղեկավարների հետ, որոնց վիճակված էր բախտորոշ դեր խաղալ հետպատերազմյան հարցերը տնօրինելիս:[3]

---

[1] Д. Ллойд Джордж, Военные мемуары, т. 5, Москва, 1934, с. 56. В. Шпилькова. Империалисти политика США в отношении Турции (1914-1920). Москва, 1960.

[2] В. Шпилькова, указ. соч., с. 62.

[3] Paris Peace Conferance, v.1-6, 8-12, Washington, 1942-1947. История дипломатии, 2-е изд., т. 3, Москва, 1965, с. 140-66.

1919թ. սկզբին, երբ տերությունների ղեկավարների միջև դեռ ընթանում էին պատերազմի ավարտի բանակցությունները, կարծիք է տարածվում, թե ԱՄՆ-ը պատրաստ չէ Թուրքիայի մանդատի պատասխանատվությունը ստանձնելու: Չնայած դրան, հնարավոր էր գտնվում, որ նույն Միացյալ Նահանգները, հանուն Հայաստանի, նման քայլի կգնան:[1] Եվ այդ պահից հարցը այդպես մնում է օրակարգում չլուծված:

Հաղթած դաշնակից տերությունների 1919թ. հունվարյան խորհրդակցության ժամանակ այն կարծիքն է եղել, որ Հայաստանի արևմտյան տարածքները միավորվելու են արևելյանին որպես ամբողջություն:[2] Սա գրի է առել բրիտանացի դիվանագետ Հ.Նիկոլսոնը Փարիզի վեհաժողովի իր հուշագրքում: Մի փոքր առաջ անցնելով, մեջ բերենք ևս մի քաղվածք. «1919թ. մայիսի 19-ը, երկուշաբթի: Լոնդոնից կառավարության անդամների մեծ մասը եկել է Թուրքիայի ապագան քննելու: Արտգործնախարար Քերզոնը պնդում է, որ թուրքերը հեռացվեն Եվրոպայից: Իսկ ռազմական նախարար Ու.Չերչիլն էլ ցանկանում է թուրքերին հանգիստ թողնել, խնդրելով, որ ամերիկացիներին տրվի նեղուցների և Կ.Պոլսի մանդատ, իսկ Հայաստանին էլ Տրապիզոնի հետ միատեղ»:[3] Սակայն. այս ամենը եղել է պարզապես խոսակցություն:

Հայ ժողովրդի ազգանվեր զավակները աշխարհի առաջ ջանք են գործադրում հայրենիքի բնարմատ հողերը ի մի բերելու, բազմացրիվ հայ ժողովրդին ազգային դրոշի ներքո որպես միասնական պետություն ամբողջացնելու համար: Զուգընթաց գործել են Պողոս Նուբարի և Ավ.Ահարոնյանի ղեկավարած պատվիրակությունները:

Սկզբնափուլում նշանակալից է եղել Փարիզում կայացած Հայ Ազգային համագումարի Ա նստաշրջանը 1919թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը: Վճռական ձայնի իրավունքով մասնակցել են հայ գաղթօջախների թվով 38 պատվիրակ: Նրանց թվում նաև Թիֆլիսում ապաստանած արևմտահայության ներկայացուցիչներ Վահան Փափազյանն ու Ավե-

---

[1] Г.Никольсон, Как делался мир в 1919г., Москва, 1945, с.180.
[2] Г.Никольсон, указ. соч., с.182.
[3] Г.Никольсон, указ. соч., с. 263.

տիս Թերզիբաշյանը:[1] ՀՀ կառավարությունն էլ խորհրդակցական ձայնով ներկայացուցիչներ է նշանակել Ավ.Ահարոնյանին և Հ.Օհանջանյանին: Ընտրվել է համագումարի դիվանի կազմը՝ Գ.Նորատունկյան (նախագահ), փոխնախագահներ՝ Ա.Տեր-Հակոբյան և Ա.Չոպանյան, ատենադպիրներ՝ Վ.Թեքեյան և Ն.Տեր-Ստեփանյան: Եվ այս անձինք, և ուրիշ գործիչներ շաբաթներ առաջ նախապատրաստական աշխատանք են կատարել: Վաղօրոք վեհաժողովին ներկայացվել է հայոց պահանջների վավերագիրը: Որպես կարևորագույն, անհետաձգելի խնդիր առաջադրվել է. «միավորել թուրքական ու ռուսական Հայաստանները՝ միակ ներկայացուցչության և միակ կառավարության ստեղծմամբ»:[2]

Այդ հարցը և բոլորի ուշադրությանն է առժանացել և կրքեր բորբոքել: Վ.Փափազյանը վկայում է. «Թէև բոլորը համակուած էին ազգային միահամուռ գործակցութեան ոգով, բայց շատ ալ վստահութիւն չունէին իրարու հանդէպ: Գլխաւոր պատճառը՝ դարձեալ արեւելահայ եւ արեւմտահայ հին հակամարտութիւններն էին, դրուած թէք մակարդակի վրայ»: Ամեն մեկը հավակնում էր առաջնության դափնին վայելելու կամ մտածելով այնպես, թե՝ «ռուսահայկական հողամասը Ռուսաստանի բաժինն է, պէտք չէ վտանգել նաեւ Թուրքահայաստանը՝ կապելով անոր հետ ու հանելով միջազգային իր դիրքէն»: Եվ վկայակոչվում է Պողոս Նուբարի կարծիքը. «Ուրէմն՝ Դուք ձեզի, մենք մեզի թողուցեք, որ մենք ալ ձեռք բերենք մեր հողը, եւ այն ատէն կմիանաք մեզի ու կունենանք Միացեալ Հայաստան»:[3]

Քննարկվել և վավերացվել են պատերազմի ընթացքում Թուրքիայի և Կովկասի հայության կոտորածների, տեղահանության և այլ աղետների հասցրած վնասների հատուցման չափերը: Նման բովանդակությամբ փաստաթուղթը Գևորգ Ե կաթողիկոսը նախօրոք ուղարկած է եղել վեհաժողովին, վնասների ամբողջական գումարը ցույց տալով 19 մլրդ. 130 մլն. 982 հազ. ֆրանկ: Այդ գումարի 14 մլրդ. 597

---

[1] Վ. Փափազեան, Իմ յուշերը, հ. 2, Գահիրե, 1957, էջ 42:
[2] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 36, թ. 1-2, նաև՝ գ. 20:
[3] .Վ. Փափազեան, Իմ յուշերը, հ. 2, էջ 44:

մլն. 510 հազ. ենթադրվել է տրամադրել արևմտահայոց պահանջներին, մնացյալ 4 մլրդ. 532 մլն. 472 հազարը՝ արևելահայոց պահանջների համար:[1]

Պողոս Նուբարը զեկուցել է պատվիրակության հիմնումից ի վեր (1912թ.) կատարած աշխատանքների և արդյունքների մասին: Վավերացվել է պատվիրակության հետագա աշխատանքների ծրագիրը:

Նշվել են նոր խնդիրներ և հեռանկարներ, մանավանդ, որ, ինչպես նախատեսվում էր, այսուհետ հայոց ազգային պատվիրակությունը ՀՀ պատվիրակության հետ ներկայացնելու էր որպես «ամբողջական Հայաստանի պատվիրակություն», պարտք ստանձնելով զբաղվել ազգային դատի և հարակից բոլոր հարցերի լուծմամբ:[2]

Ի՞նչ տվեց Ա նստաշրջանը: Հույսեր ու հավաստիացումներ մեծ տերությունների խոստումներով պարուրված: Այս միտումն է, որ զարգանալով էլ ավելին է լինելու Բ նստաշրջանի ժամանակ. խոստումներ, ավելի շատ խոստումներ...

1919թ. մայիսի 13-ին Դ.Լլոյդ Ջորջ, Ժ.Կլեմանսո, Վ.Վիլսոն «Երեքի» խորհուրդը սկսել է Թուրքիայի բաժանման առաջարկվող տարբերակների քննարկումը: Եղել է Հայաստանը (Արևմտյանը) ԱՄՆ-ի մանդատին հանձնելու կարծիք, պահանջվել դադարեցնել Թուրքիայի տիրապետությունը Եվրոպայում, նեղուցներում: Դրանով հարցի լուծումը չի ավարտվել: Եղել են առարկություններ: Վ.Վիլսոնը պնդել է Հայաստանի ու Կ.Պոլսի մանդատ ստանալու իր պահանջը՝ ցանկանալով նաև Անատոլիան, բայց հեռանկարը ընդլայնելով անհացել է: Մայիսի 21-ին առաջարկվել է նաև «Ռուսահայաստանի, Ադրբեջանի և ողջ Կովկասի» մանդատը հանձնել ԱՄՆ-ին, մինչև ռուսական հարցի լիակատար լուծումը: Բայց Վ.Վիլսոնը տարակուսել է: Վստահ չէ եղել, որ սենատը նման վճիռ կկայացնի այն էլ այդքան լայն շառավիղով: Չնայած Դ.Լլոյդ Ջորջը լիովին կողմ էր բաշխմանը:[3]

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 36, թ. 1-2:
[2] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 20:
[3] А.Миллер. Американксий план захвата Константинопола и проливов в 1919 году. "Вопросы истории", N 3, 1951, сс. 67-69.

Այլ է եղել Ֆրանսիայի վարչապետ Ժ.Կլեմանսոյի կարծիքը: Ասվում է, թե այդ հողի նա և Դ.Լլոյդ Ջորջը ընդհարվել են, ինչպես «իսկական շնակռիվը»:[1] Ժ.Կլեմանսոն հատկապես դեմ է եղել ԱՄՆ-ի Փոքրասիական թերակղզի թափանցելուն: Փարիզում, 1919թ. կայացած նիստերին, որոնց երեք առաջին դեմքերի հետ միասին մասնակցել են նաև արտգործնախարարները, անգլիական կողմը հարց է դնում, որ ԱՄՆ-ին, նեղուցների մանդատ տալու հետ մեկտեղ, նաև Հայաստանը տրվի Տրապիզոնով հանդերձ:[2]

Եվ բռնկել է Ժ.Կլեմանսոյի բողոքի ձայնը. «Եթե Կ.Պոլսից և Հայաստանից բացի Ամերիկային տրվի նաև նրանց միջև ընկած Անատոլիան, ապա ողջ եվրոպական աշխարհը կպառակտվի»:[3] Նշանակում է՝ մեկի համար ազգի ճակատագիր, մյուսի համար քմահաճույք:

Դրսաշխարհի հզորները Հայաստանը իրենց հաշվարկներում կտրատում ու տալիս առնում էին, իսկ նույն այդ օրերին, 1919թ. մայիսի 28-ին, ՀՀ կառավարությունը հանրապետությունը հռչակում է միացյալ ու ամբողջական, իրեն էլ միացյալ ու ամբողջական ՀՀ կառավարություն: Համապատասխանաբար, խորհրդարանի կազմն էլ համալրվել-ամբողջականացվել է 12 պատգամավորով, որպես արևմտահայերի ներկայացուցիչների: Երկու պատվիրակությունները այսուհետ հանդես էին գալու համատեղ, որպես միասնական, ամբողջական Հայաստանի պատվիրակություն. Պողոս Նուբար նախագահ, իսկ Ավ.Ահարոնյանը՝ փոխնախագահ:[4]

Արշակ Չոպանյանը, ավարտելով 1919թ. ապրիլից մինչև 19202. մայիսիը ազգային պատվիրակության փաստաթղթերի կարգավորումը, որպես եզրափակում, խորհրդակցում է գալիքի հետ. «Այս պահին, որ մեր դատը իրական յաջողութիւն է ունենում, այս պահին, որ դաշնակիցները վերջնականապէս ճանաչում են Հայաստանի իրաւական անկախութիւնը, մեր երկիրը նորագոյն դէպքերի հետեւանքով

---

[1] Марескоти А., Дипломатическая война, Москва, 1944, с. 297.
[2] Г.Никольсон, указ. соч., с. 263.
[3] А.Муллер, указ. соч., с. 70.
[4] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1, գգ. 50, 54, 255, 547-ի նյութերը:

գտնվում է տագնապալից կացութեան մէջ: Մեծ դժվարութիւններ են ցցվում այն խոստումների իրագործման առջեւ, որոնք պարունակում է դաշնագիրը, ծանր վտանգներ են սպառնում մեր ժողովրդին: Մեծ ճիգ է անհրաժեշտ այս դժուարութիւնները հաղթահարելու եւ վտանգները կանխելու համար: Մենք լիահույս ենք, որ մեր ժողովուրդը պիտի տա պէտք եղած կորովը, իմաստութիւնը, միաբանութիւնը եւ զոհաբերութեան ոգին՝ այս ծանր տագնապը հաղթահարելու եւ յաջողացնելու համար, որպէսզի մեր ազգի դարաւոր երազը իրագործուի, իսկապէս կազմելով միացեալ Հայաստանը, բայց ճշմարտապէս անկախ ու կենսունակ»:[1]

1919թ. օգոստոսին Կ.Պոլսում ԱՄՆ-ի գերագույն կոմիսար ծովակալ Բրիստոլը մեծ վեզիրին հղած ուղերձում հայտնել է, որ եթե Թուրքիայի կառավարությունը միջոցներ չձեռնարկի հայության նկատմամբ, թուրքերի և մյուս մահմեդականների գործադրվող բռնությունների ու սպանությունների դեմ, ապա դա կստիպի իրեն կատարելու քայլեր, որոնք կհանգեցնեն օսմանյան կայսրության անդամահատմանը:[2]

1919թ. ամռանը լուր է տարածվում, թե անգլիական զորքերը ուր որ է Կովկասից վերադառնալու են իրենց երկիրը: ԱՄՆ-ի ներկայացուցիչները ի պատասխան հայտնել են, թե իրենք մի ամսից հետո զորք կբերեն Հայաստան, որը անգլիացիներին ժամանակավորապես ետ կպահի վերադարձի մտքից: 1919թ. օգոստոսի 9-ին Ավ.Ահարոնյանը վարչապետ Ալ.Խատիսյանին գրել է. «Վիլսոնի ծրագիրներն ու սկզբունքները կատաստրոֆի ենթարկվեցին իմպերիալիզմի գայլային ախորժակի և ժանիքների տակ, և աշխարհի բախտը այսօր ավելի շփոթ է, ավելի անհաստատ, քան պատերազմից առաջ»:[3]

Նշվածից 5 օր առաջ Ավ.Ահարոնյանը ՀՀ կառավարությանը տեղեկացնում է, որ մի երկու օրից հետո Հայաստան է ճանապարհվելու ամերիկյան «զինվորական խոշոր միսիա գլխավորությամբ գեներալ Հարբորդի», 40 հոգուց բաղկա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 54, «Եզրափակում»:
[2] В.Шполькова, указ. соч., с. 80.
[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 35:

ցած, որից «երեքը՝ գեներալ, մի քանի գնդապետ, բազմաթիվ ինժեներներ, տնտեսագետներ, քաղաքագետներ»: Նպատակն էր «հիմնավորապես ուսումնասիրել Հայաստանը աշխարհագրական, ազգագրական, տնտեսական և զինվորական տեսակետներից», որը պետք է «ճշգրիտ տեղեկություն տա ԱՄՆ-ի կոնգրեսին ու կառավարությանը [Հայաստանի] ճամփաների, նավահանգիստների, բնական հարստությունների, զինվորական ու տնտեսական կարողությունների, ինչպես նաև [հայ ժողովրդի] կարիքների և նրան օգնության հասնելու միջոցների մասին»: Միաժամանակ, ի գիտություն Ալ.Խատիսյանի շեշտվում է, որ այդ միսիան «հատուկ ուղարկվում է նախագահ Վիլսոնի ցանկությամբ» և, ըստ երևույթին, «վճռական նշանակություն է ունենալու Ամերիկայի մանդատը Հայաստանի ընդունելու վճռի վրա», որը չի կայացվելու, մինչև որ այդ տեղեկությունները ստացվեն: Ամերիկացիք առանձնապես հետաքրքրվել են, թե իրենք «որքան ժամանակ և որպիսի քանակով են զորք պահելու Հայաստանում»: Ինչպես երևում է, ամերիկյան միսիոներները ահաբեկված են. այդ ընթացքում համոզմունք է եղել, թե Հայաստանի մանդատը ԱՄՆ-ի ընդունելու համար բավական կլինի այնտեղ ուղարկել 27-30 հազարանոց մեկ դիվիզիա, հայկական 50-60 հազարանոց բանակին միացած:[1]

Հուլիսի վերջին Անգլիան Օ.Ուորդրոպին նշանակել էր քաղաքացիական ներկայացուցիչ Անդրկովկասում: 1919թ. օգոստոսի 13-ին Փարիզում հանդիպելով Ավ.Ահարոնյանին Օ.Ուորդրոպը հավաստիացրել է, թե իր համար Անդրկովկասի բոլոր ժողովուրդներն էլ հավասար են և նա բնավ խտրություն չի դնելու և ամեն ինչ կանի, որ բոլորը (Անդրկովկասի ժողովուրդները - Հ.Կ.) գոհ մնան և հաշտ ու խաղաղ ապրեն»: «Բոլորը հավասար են» ասվածը դիվանագետի համար պատրաստի բառեր են, երբ շատ հաճախ կողմերից մեկը ոճրագործ է լինում կամ մարդասպան: Ավ.Ահարոնյանը խորհուրդ է տալիս կառավարությանը «ուշի ուշով հետևել» «անկողմնակալ դիվանագետի քայլերին»:[2]

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 36-38:
[2] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 54, թ. 39-40:

Հայաստանի տարածքների ամբողջական միավորման նախապատրաստական աշխատանքների նպատակով դաշնակից տերությունների գերագույն խորհուրդը 1920թ. փետրվարին Լոնդոնում ստեղծել է Հայաստանի սահմանները որոշող միջազգային հանձնաժողով,* կազմում երկուական անդամ Անգլիայից, Ֆրանսիայից, Իտալիայից, Ճապոնիայից: Հանձնաժողովի աշխատանքներին հրավիրվել են Պողոս Նուբարը, Ավ.Ահարոնյանը, Կ.Պոլսի Զավեն Պատրիարքը, Հովհաննես Մասեհյանը և գեներալ Գաբրիել Ղորղանյանը: Փաստորեն. այդ հանձնաժողովի աշխատանքով Հայաստանին միավորման ենթակա տարածքների ճշտորոշումը, որի մասին ստորև նույնպես կասվի, մոտեցավ իր ավարտին: Ըստ պատշաճի հարկ է հիշատակել վերը նշված երկրների ներկայացուցիչների անունները. Ռոբերտ Վանսիտարտ, Գրիբեն, Կամերեր, Շարդինյի, Գալլի և Կաստոլդի, Իսաբուրո Գոշիդա և Կիուզզի Աննո:[1]

Հանձնաժողովի առաջին նիստը կայացել է 1920թ. փետրվարի 21-ին: Ընդհանուր առմամբ եղել են, ըստ Ավ. Ահարոնյանի, մոտ երկու տասնյակ նիստեր, քննարկումներ: Մասնակիցները աշխատել են քարտեզի վրա՝ մատիտը ձեռքներին: Ծագած հարցերին պատասխաններ ու բացատրություններ են տվել, փաստաթղթեր մատուցել Հայաստանի ներկայացուցիչները: Ուշադրության բևեռում եղել են Տրապիզոնի, դրա հետ մեկտեղ նաև Հայաստանին դեպի Սև ծով ելք տալու հարցերը: Այդ հարցերի նկատմամբ առարկություններ են ունեցել թե տերությունները և թե սեփական հանգրվան ստեղծելու հավակնորդ հույներ, լազեր, վրացիներ... Երբ քննարկողները շեշտել են հարցը նման քննարկման միջոցով լուծելու բարդությունները, Հայաստանի ներկայացուցիչները առիթ են ունեցել ասելու, թե այդ դեպքում տվեք մեզ 40-50 հազարանոց հայկական բանակ կազմակերպելու զենք ու հանդերձանք, նաև ձեր դրոշները հովանի դարձրեք մեզ և, այդ դեպքում, «մենք կարող ենք գրավել մեր հողերը» (Ավ.

---

* Commision Internationale pour les Frontieres de Les L Armenie.

[1] Ավ.Ահարոնեան, Սարդարապատից մինչեւ Սեւր եւ Լոզան, Պոսթոն, 1943, էջ 44:

Ահարոնյան): Քերզոնի քարտուղար Վանսիտարտը հատուկ արձանագրել է հայերի այդ հայտարարությունը:[1]

Մտածենք, որ այդ պահանջն ու նման թվերը մեկ անգամ չէ, որ հայերը տերություններին ներկայացրել են: Եվ, թերևս, դրան որպես արձագանք Մեծ Բրիտանիան ստանձնում է առաջիկայում Հայաստան ուղարկել 40 հազար հրազեն, որը, դժբախտաբար, կարաբին է եղել, որին հայերը վարժ չէին:

Փետրվարի 21-ի առաջին նիստը ավարտվել է անորոշ: Երկրորդ նիստն սկսվել է Զավեն Պատրիարքի հարց ու փորձով (Ո՞րչափ հայ կա այժմ Թուրքիայում): Պատասխանը եղել 100 հազար և որոշ հիմնավորում: Նաև ինչպիսի՞ հարաբերություն ունեն հայերը տվյալ ծովափնյա տարածքում «լազերի, քրդերի, թաթարների և թուրքերի հետ», պատասխանել է քաջատեղյակ Ավ.Ահարոնյանը: Գոհացրել է: Որպես տվյալ զրույցի վերջաբան Ավ.Ահարոնյանը գրում է. «Մենք դուրս եկանք ամենքս սրտապնդված, մենք կունենանք Սև ծովի ափը: Քրդերի, թուրքերի պատճառած մտահոգությունը ցրված է: Փաշան և Պատրիարքը շնորհավորեցին ինձ»:[2]

Քննարկումները նպատակ են հետապնդել Հայաստան ամբողջական պետության ընդլայնումը արևելյան ու արևմտյան մասերով հանդերձ: Իսկ նախապես դրվում էր նաև Ադրբեջանի ու Վրաստանի հետ սահմանները ճշտելու հարցը: Զգացվում է թուրքական լայնարձակ կայսրությունը նվաճված տարածքներից թոթափելու միտումը: Այդ ձևով Սևրյան փաստաթղթի մյուս բաժիններում թուրքական մեծապետական գերիշխանությունից դուրս դրվեցին Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը, Հեջասը, Եգիպտոսը, Մարոկոն, Թունիսը, Լիբիան և զանազան այլ տարածքներ:[3] Թեև դա սկզբում, ըստ էության, մեկի ազդեցությունից մյուսին անցնելն էր, այնուամենայնիվ, հետագայում նշված տարածքների անկախանալու համար հող ծառայեց:

---

[1] Ավ.Ահարոնեան, նշվ. աշխ., էջ 44:
[2] Ավ.Ահարոնեան, նշվ. աշխ., էջեր 47, 50:
[3] Севрский договор, с. 32.

Հայաստանի սահմանները որոշող հանձնաժողովը 1920թ. մայիսի 16-ի նիստում սահմանների հարցի հետ քննարկել է նաև մանդատի հարցը: Հավակնորդ չլինելու պատճառով որոշվել է առաջարկել Ազգերի Լիգային իր հովանու տակ վերցնել «նորակազմ Հայոց պետությունը»: Ցանկալի է համարվել երկրի մանդատը հանձնել ԱՄՆ-ին: Հաջորդ օրը հայ գործիչները այցելել են Լոնդոնում ամերիկյան դեսպանին: Նա ասել է, որ առ այժմ անհնար է մանդատը ստանձնել, քանի որ երկիրը գտնվում է «ներքին շփոթի» մեջ: Եթե լինի, ապա՝ «բավական» ուշ:[1]

Հանձնաժողովը հայ գործիչների մասնակցությամբ հերքել է տարածված այն թյուրիմացությունը, թե Արևմտյան Հայաստանի հնուց ի վեր հայաբնակ վայրերում այլևս հայ բնակչություն չկա.և բնակեցնելու համար էլ հայություն չկա:[2] Գործին մեծապես նպաստել է Գաբրիել Ղորղանյանը: Նա Ավ.Ահարոնյանի հրավերով 1920թ. փետրվարի 12-ին ժամանել է Լոնդոն և անհապաղ լծվել նրա հանձնարարականների և իր մտադրությունների կատարմանը: Փետրվարի 13-ին նա Ֆրանսիայի արտգործնախարարությանը մանրամասն տեղեկություններ է հաղորդել Հայաստանի և Թուրքիայի սահմանների, հատկապես հայոց կողմից պահանջվող տարածքների մասին: Այդ նպատակով նա մատուցել է համապատասխան քարտեզներ, իր իսկ գծագրումներով, պարզաբանումներով և գրավոր հավաստիացումներով: Այդ բոլորը, և հետագա այլ աշխատանքները նա կատարել է 1920թ. փետրվարի 17-ին Լոնդոնի կոնֆերանսում ընտրված այն հանձնաժողովի հետ միասին, որը հատուկ պետք է զբաղվեր հայերին հանձնվելիք տարածքների սահմանագծմամբ:

Զուգընթաց, նա հանձնաժողովին ներկայացրել է լրացուցիչ գրություններ՝ ձևավորվող հայոց պետության տարածքի ռազմապաշտպանական միջոցների ու հնարավորությունների, ինչպես նաև անպայման ուշադրության արժանի վաղվա օրվա հնարավոր սպառնալիքներին պատրաստ լինելու միջոցների ու ձևերի մասին: Եվ կարևորը. նա չի ժխտել դրսի

---

[1] Ավ. Ահարոնեան. նշվ. աշխ., էջ 51-52:
[2] Ավ. Ահարոնեան, նշվ. աշխ., էջեր 44-4, 54, 57:

ռազմական օգնության անհրաժեշտությունը: Բայց դա օդից կախված հնարավորություն էր՝ կարող էր լինել կամ չլինել: Ահա նրա վճռական խոսքը. «Հայերը խիզախ ժողովուրդ են: Նրանք ընդունակ են ամուր պաշտպանվելու, իսկ եթե դաշնակից տերությունները կարողանան նրանց բավականաչափ զենք տալ ... նրանք կկարողանան կանխել բոլոր պատահականությունները»:[1]

Տարիներ են անցել: Հայրենիք սիրող գեներալի խորհուրդները, հուսանք, որ ուժասպառ չեն լինի մինչև ... երանության վաղվա օրը:

* *
*

Արևմտյան Հայաստանի տարածքների հարցը առավել հանգամանորեն քննարկվել են դաշնակից տերությունների ղեկավարների իտալական Սան Ռեմո քաղաք-ամառանոցի Դեվաշան հանգստավայրում, 1920թ. ապրիլի 18-26-ը:[2] Պարտված Թուրքիայի հետ քննվող պայմանագրի Հայաստանին վերաբերվող մասը նախաքննության ավարտական փուլ հանձնելու համար բանակցությունների են նստում Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի ղեկավարներ Դ.Լլոյդ Ջորջը, Ա.Միլերանը և Ֆ.Նիտտին: Քննարկումներին մասնակցել են նաև տվյալ երկրների պաշտոնական այլ անձինք: Առանձին դեպքերում հանդես են եկել նաև Հայաստանի ներկայացուցիչներ, իսկ հարկ եղած դեպքերում հրավիրվել են փորձագետներ:

Սկզբում ներկայացվել է Ազգերի Լիգայի Խորհրդի հուշագիրը՝ ի պատասխան Լոնդոնյան խորհրդակցության, որը առաջարկել էր, որպեսզի Հայաստանի հովանավորությունը նախանձեռնի Լիգայի Խորհուրդը: Վերջինս եզրակացրել է, որ «հայ ազգի ապագան լավագույնս կապահովվի, եթե Լիգայի անդամներից մեկը կամ մի այլ պետություն ընդունի Հայաստանի մանդատը»: Սակայն պարզվել է, «որ կան հանգամանքներ, որոնք նման հնարավորություն չեն ընձեռում»:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 565, թթ. 221, 224:
[2] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 612:

Ուստի ցանկալի է համարվել, որպեսզի ԱՄՆ-ը ստանձնի մանդատը: Բայց, ինչպես նշվում է արձանագրությունում, դա չի ստացվել և այդ հարցը պատրանք է դուրս եկել: Հիմքեր են եղել հուսալու, որ Նորվեգիան կստանձնի. նա ունի լավ բանակ, միջոցներ, ելք դեպի ծով: Բայց հարցադրումը առաջին իսկ պահից ընթացք չի ստացել: Հարց է ծագել արդյոք ճի՛շտ չի լինի, եթե դաշնակից երկրների գերագույն խորհրդի առջև այդ խնդիրը դրվի: Նման հարցադրումը որակվել է որպես «հայեցողական»: Բայց բացատրվել է. չէ՞ որ հայերն ունեն ռազմական ուժեր և եթե Նորվեգիան կամ մի այլ երկիր պարտք ստանձնի, ուրեմն՝ հարցը լուծված կհամարվի:[1]

Սկզբնափուլի քննարկումը հարցի լուծման ձևերի և միջոցների որոնումն է: Նախապես տերությունների միացյալ ուժով և խոստումներով հավաստիացվել է, որ հնարավոր է «կատարյալ ամբողջական Հայաստան վերստեղծել»: Ըստ էության այդ միտումն էլ ունեցել է Հայաստանը գլխավոր դաշնակիցների կողմից դաշնակից հռչակելը: Համոզմունք է եղել, որ «Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանը կստարված հարց է»: Եղել են տարածքների հետ կապված որոշ «վարանումներ, որոնք էլ կարող էին վերջ ունենալ մինչև մայիսի 10-ը», երբ սպասվում էր թուրքական պատվիրակության այցը Փարիզ: Դա՝ մի կողմից: Մյուս կողմից, ակնկալվում էր Վ.Վիլսոնի պատասխանը, որը վերաբերվելու էր Հայաստանի մանդատը ստանձնելուն: Բայց, ինչպես նշվում է արձանագրությունում, դա պատրանք է դուրս եկել: Հակառակություն է ծագել, հատկապես Իտալիայի կողմից երզրումը Հայաստանին մաս հռչակման առթիվ:[2]

Անդրադարձ է եղել նաև հայոց ինքնապաշտպանական ուժերին: Հարց է դրվել, որ զորքի թվաքանակը 25 հազարից հասցվի 40 հազարի և երաշխիք տրվի, որ հայերն իրենք կարողանան իրենց հողերը գրավեն սեփական ուժերով: Հայ դիվանագետները հավաստիացրել էին, որ կաշխատեն ուրիշներին հոգս չպատճառել և իրենց ուժերով հանձնվելիք տարածքները միավորել որպես ամբողջական Հայաս-

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 614-615:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 115-119:

տանի ձևավորում: Այդ հոգատարությանը ուրախությամբ միջամտել է Հունաստանի վարչապետ Է.Վենիզելոսը, ասելով. «Շատ լավ եք արել, որ դուք ձեր ուժերով կգրավեք ձեր երկիրը: Եթե դուք դաշնակիցների օգնությունը խնդրեիք, այդ օգնությունը չէիք ստանալու, երկրորդ, որ ավելի ծանր է, երգրումը կկորցնեիք»:[1]

Որպես մանդատի թեկնածուներ, թվարկվել են նաև Իտալիան, Ֆրանսիան և այլ երկրներ: Պատճառաբանվել է, որ ոչ միայն զենք չկա, այլ նաև «զորքեր գտնել չեն կարող»: Հիմնականը ներկաների փոխադարձ հարցումներն են և այլ երկրների հիշատակումներ, իսկ արդյունքը՝ նույնական մերժումը: Ազգերի Լիգան չի կատարելու իր պարտքը, իսկ Հայաստանն էլ միջոց չունի և անկարող է: Այնուամենայնիվ, երկու ոչ այն է առաջարկ, ոչ այն է միտք եղել է. գլխավոր դաշնակիցները հանդերձավորեն ՀՀ զինված ուժերին, իսկ Պողոս Նուբարն էլ ձեռնարկի Թուրքիայում հայկական այն տարածքի ռազմական օկուպացմանը, որը ենթադրվում է որպես «հայկական պետությանը» հանձնման ենթակա: Այս երկու միտքը արձանագրվել է գլխավոր դաշնակից տերությունների քննարկմանը ներկայացնելու համար: Այդպես էլ դեռ ներկայացվելու՞ է:

Շոշափվել է նաև մի այլ հարց:

- Ի՞նչ ռազմուժ ունի Մուստաֆա Քեմալը, արդյոք թուրքերը ի վիճակի կլինե՞ն ներխուժելու Ռուսահայաստան: (Նկատենք, որ սա 1920թ. ապրիլի 20-ին է, իսկ սեպտեմբերի 29-ին թուրքերը գրոհելու են Հայաստանի վրա): Դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար մարշալ Ֆ.Ֆոշը պատասխանել է. «Եթե հայերի բանակը կազմավորվի, բավական կլինի պաշտպանելու հայկական սահմանները: Իսկ թե ե՞րբ և ինչպե՞ս, պարզ չէ»: Լսենք Իտալիայի վարչապետ Ֆ.Նիտտիի սառը դատողությունը. «Կասկած չկա, որ Հայաստանը գտնվում է շատ դժվարին դրության մեջ»: Իսկ Ֆ.Ֆոշը գործից է խոսում. «Դաշնակիցները չեն կարող փոքրամասնություններին պաշտպանել Թուրքիայում, առանց ռազմուժի»:[2]

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 122, 124:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 631, 633:

Եվ դարձյալ առաջ է մղվում Հայաստանին ԱՄՆ-ի մանդատ շնորհելու հայտը. կլինի լավ, չի լինի վատ: Շեքսպիրյան Համլետի ասույթն է. «Լինել թե չլինել»: Այդ խնդիրը հայոց համար ոչ թե խոստումներ տալն ու հավաստիացումներն էին լինելու, այլ՝ գործնական քայլերը: Հայաստանին օգնել ցանկացողները կարող էին Թուրքիային նախազգուշացման մի խոսք հղել, եթե անհնար էր քայլ կատարելը: Սպառնացող աղետը կռահողներ եղել են: Տեղում արձանագրվել է. «Հայերի համար հաճելի չի լինի նրանց թղթի վրա տալ մի տարածք, երբ մենք մտադիր չենք օգնելու»:[1]

Քննարկում էին, իսկ գլխավոր հարցերը մնում էին թաքստոցում: Ֆ.Նիտտին Պողոս Նուբարին հարցնում է. «Կարծու՞մ է արդյոք Պողոս Նուբար Փաշան, որ Հայաստանն ի վիճակի կլինի վերակառուցել իր բանակը և միջոցներ ծեռք առնի նոր պետության ապահովության համար»: Մոտավորապես նույն տարակուսանքն ուղղել է Պողոս Նուբարին Դ.Լլոյդ Ջորջը: Իսկ Պողոս Նուբարը հարցնողների տարակուսանքները փարատելու պատասխանն է տվել. ինքը կասկած չունի, որ հայերը կարող են հաստատվել երզրումում և ամրապնդել իրենց դիրքերն այնտեղ: Գրեթե նույն հարցը Ֆ.Նիտտին ուղղել է Ավ.Ահարոնյանին: Պատասխանն այն է, թե Մ.Քեմալի բանակը «կանոնավոր զորքեր չեն», իսկ հայոց «գլխավոր դժվարությունն էլ զինամթերքի և հանդերձանքի պակասն է»:[2]

Դ.Լլոյդ Ջորջը հավանաբար Պողոս Նուբարի և Ավ.Ահարոնյանի պահանջներին ի պատասխան ամպամած միտք է արտահայտել հայերին 40 հազար հրացան տրամադրելու մասին: Խոստման հետ միասին նա հակիրճ մի դասախոսության բեկոր է մատուցել. «Մինչև հիմա ուրիշ ազգեր են կռվել հանուն հայերի: Հայերը պետք է զինվեն և հնարավորություն ստանան անձամբ գործելու: Եթե նրանք ի վիճակի չեն պաշտպանել իրենց սեփական սահմանները, ապա ինքը կարծում է, որ աշխարհում նման մի ժողովրդից ոչ մի օգուտ չկա և դաշնակից կառավարություններից ոչ մեկը, այս

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 645:
[2] Հայաստանը ... փաստաթղթերում, էջեր 651, 655:

պարագաներում պատրաստ չի լինի օգնելու նրանց, անգամ մեկ գումարտակով»:[1]

Այստեղ են ասել թե՝ միանգամից ասեիք, էլ ու՞ր եք քաշքշում և հայոց մեծ ազգին ծաղրում ու ծանակում:

Հունաստանի վարչապետ Է.Վենիզելոսը, որը նախապես ներկա է գտնվել այդ քննարկմանը, ոգեշունչ ճառ է արտասանել. «Ձենք մատակարարեք այդ մարտնչող ժողովրդին, տվեք նրանց զինամթերք ու հանդերձանք, վարժեցրեք նրանց զենքերի օգտագործման մեջ և հրավիրեք նրանց պաշտպանել իրենց սեփական սահմանները»:[2]

Հավանաբար, այդ խոսքերը ոգեշնչող են եղել: Բանակցությունների ընթացքում Վանի և Բիթլիսի վերամիավորման հարցը առանց վեճերի է վճռվել: Լուրջ վեճեր են հարուցել Սվազի ու Դիարբեքիրի հարցերը:

1920թ. ապրիլի 20-ի նիստում Սան Ռեմոյում հայտարարվել է. «Հայկական սահմանային հանձնաժողովը, որը գումարվել է Լոնդոնում, մտադիր է երգրումը հանձնել Հայաստանին, քանի որ, եթե այս մեծապես հզոր ամրոցը թողնվի Թուրքիայի ձեռքին, մշտապես սպառնալիք կդառնա Հայաստանի անվտանգությանը»:[3]

Ակնհայտ է, որ Լոնդոնի խորհրդակցությունը լայն ծավալով է քննարկվել տարածքների միավորման հարցը իր լուծումները հասցնելով մինչև վերջնական հաստատումը տանող հաջորդ փուլերը: Դաշնակից տերությունները հեշտությամբ չէին վճիռներ կայացնում և դիրքորոշում մշակում:

1920թ. ապրիլին Քերզոնը Ավ.Ահարոնյանին տեղեկացնում է, որ լուծվում է Հայաստանի համար «զենք ու ռազմամթերք հայթայթելու խնդիրը»: Ավ.Ահարոնյանը այս քայլը որակում է որպես «հիմնական փոփոխություն դեպի» հայոց «կառավարությանն ու պետությանը», ըստ որի Հայաստանը Բրիտանիայի համար անվանվում է «կրտսեր դաշնակից»:[4]

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 658:
[2] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 630:
[3] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 630:
[4] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 190, թ. 115:

Դաշնակիցների և թուրքերի միջև հաստատման ենթակա պայմանագրի նախնական տեքստը Հայաստանին վերաբերվող բաժնով, 1920թ. մայիսի 11-ի ժամը 16-ին Ֆրանսիայի վարչապետ և խաղաղության վեհաժողովի նախագահ Ալ.Միլերանը հանձնում է Թուրքիայի վարչապետ Թևֆիկ Փաշային, հունիսի 11-ին պատասխանելու վերջնական ժամկետով: Թուրքերը մեկ ամիսը քիչ համարելով, խնդրել են մեկ ամիս ևս, բայց մերժում ստացել:[1]

Փաստաթուղթը մշակվել էր Սան Ռեմոյի կոնֆերանսում, լրացվել, ճշգրտվել բելգիական Սպա ամառանոցում, և որի արարողությանը հայ ժողովուրդը սպասում էր մեծ հույսերով և դարեր ի վեր: Պաշտոնական հրավիրատոմս է տրվել նախապես միայն Ավ. Ահարոնյանին, որը ինչ-որ պատահարի բերումով չի կարողացել մասնակցել: Այդ պարտականությունը լրացուցիչ հրավիրատոմսով կատարել է Պողոս Նուբարը: Նախապես հրավիրաքարտեր են տրված եղել հայ պատվիրակության 6 քարտուղարների և 3 լրագրողների համար:[2]

Եղելությունը բացառիկ էր: Որոշ ժամանակ անց, հայ պատվիրակներ Ավ.Ահարոնյանը և Պողոս Նուբարը գնացել են Սպա: Նրանք այդտեղ դարձյալ մտահոգված են եղել սպասվող վեհաժողովում իրենց ակնկալած հաջողությամբ: Գործնական հանդիպումներ են ունեցել Բելգիայի արտգործնախարար Հիմանսի, Հունաստանի վարչապետ է.Վենիզելոսի, ֆրանսիական դիվանագետ Ֆ. Բերտելոյի և այլոց հետ հիմնականում վերջին պահի կասկածի ու տարակուսանքի սպասումները ցրելու համար: Բոլոր տեղաշարժերի ու հոգսերի ժամանակ Ավ.Ահարոնյանի հետ ու նրա կողքին է գտնվել նաև գեներալ Ղորղանյանը, քանի որ հոգսերն ու ակնկալիքները նաև ռազմական էին:[3]

Քննարկվել, ճշտորոշվել է Վանի հարավային սահմանի հարցը. նպատակահարմար է գտնվել Հայաստանի այդ կողմի սահմանն անցկացնել այդտեղով, ընդգրկելով թուրքերի զբաղեցրած այն մեծ տարածքը, որտեղ հայերը կոտո-

---

[1] Севрский договор, с. XVII.
[2] Ավ.Ահարոնեան, Սարդարապատից մինչև Սեւր եւ Լոզան, էջ 76:
[3] Ավ.Ահարոնեան, նշվ. աշխ., էջ 86:

ռածների պատճառով փոքրամասնություն էին կազմում և որը տվյալ ժամանակ գրավել էին թուրքերը: Նկատենք, որ լոնդոնյան նիստին մասնակցած դաշնակից տերությունները հրաժարվել են այնտեղ պահպանական զորքեր ուղարկել: Խոսքը գործից հեշտ է եղել: Ծագել է նաև փոխառության հարց. «10 մլն. ֆունտ ստերլինգ հայ բանակի հոգսերի համար»: Տեսակետ է եղել, որ դա միայն ԱՄՆ-ը կարող է տրամադրել և որ նրա գործը միայն առաջարկներ անելն է:[1]

Եվ այսպես, Թուրքիայի հետ պայմանագրի տեքստը պատրաստելու համար գործի են ներգրավվել մի քանի հանձնաժողովներ, որոնք կատարել են տևական տքնաջան աշխատանք: Խնդիրներից գլխավորը, բնականաբար, ՀՀ սահմանների վերանայումն ու ճշտորոշ գծագրումն էր:[2]

Միաժամանակ դրվել է Հայաստանին հովանավորելու մանդատը ԱՄՆ-ին շնորհելու հարցը:[3] Այդ հարցի ուշագրավ վերլուծություն է կատարել ամերիկահայ պատմաբան Ռիչարդ Հովհաննիսյանը: Դա սերտ առնչություն ունի Սևրի պայմանագրի ստեղծման և հայոց ճակատագրում նրա խաղացած դերի հետ: Ըստ այդմ, 1920թ. մայիսին, մինչև Սևրի պայմանագրի հաստատումը, Վ.Վիլսոնը ուղերձով դիմել է ԱՄՆ-ի կոնգրեսին: Գործին աջակցել է Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն, մոտիկից շահագրգռություն են հանդես բերել նաև ամերիկահայ բնակչության լայն խավերը:

Ընթացքը նախապես լուսաբանել և վերլուծել է նաև «Նյու-Յորք Թայմսը»: Բայց, ժամանակ անց ասվել է, թե մանդատի անհրաժեշտությունը հնացել, իրեն սպառել է, քանզի պատերազմն ավարտվել է և այլևս հնարավոր չէ մանդատն ընդունել: Եվ Վ.Վիլսոնի այն հայտնի ասույթը, թե Հայաստանի մանդատի լուծումը «մեզ տրամադրված է որպես պատվի գործ», խամրել է: Չնայած դրան, Վ.Վիլսոնը ՀՀ-ը ճանաչեց «դե ֆակտո» (փաստացի): Հայաստանի մանդատի հարցը Վ.Վիլսոնը փորձել է լուծել կոնգրեսի վրա ճնշում գործադրե-

---

[1] Ավ.Սահարոնեան, նշվ. աշխ., էջ 18-20:
[2] Севрский договор, с. XVI.
[3] Տես - Ованнисян Р., Соединенные Штаты Америки и Армения: Мандат и границы, ՊԲՀ, 1995, թ. 2, էջ 119-136:

լով, որպիսի ձևին դեմ են եղել շատերը, այդ թվում նաև ԱՄՆ-ում հայերի նկատմամբ բարեացակամ վերաբերմունքը չթուլացնելու նրբանկատությամբ Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն: Կոնգրեսը տատանվում է, իսկ Վ.Վիլսոնը պնդում է. «Համոզված եմ, որ կոնգրեսը կհարգի մարտնչող հայ ժողովրդի հույսերն ու սպասելիքները»: Այնուամենայնիվ, հարցադրումն ու քննարկման բնույթը փոխվում են, իսկ սենատը (ներկայացուցիչների պալատի համաձայնությամբ) որոշել է, որ «կոնգրեսը հարգանքով հրաժարվում է գործադիր իշխանությանը վերապահել Հայաստանի մանդատը ստանձնելու իրավասություն, ինչպես որ խնդրվում է նախագահի ուղերձում»: Այսինքն, մերժում է:

Միջազգային հարաբերությունների հանձնաժողովը 1920թ. մայիսի 27-ին 11 ձայնով 4-ի դեմ մերժել է Վ.Վիլսոնի առաջարկը: Նպատակին հասնելու համար Վ.Վիլսոնը իր առաջարկած բանաձևում փոփոխություններ է մտցնում: Դա այն իրավիճակում, երբ ամերիկյան մամուլը լեցուն էր առաջիկա հինգ տարիներին ավելորդ ծախսեր չանելու քարոզչությամբ: Նման գործի համար ոչ նպաստավոր մթնոլորտում, մայիսի 29-ից սկսվել են բանավեճերը կոնգրեսում և հապճեպ ավարտվել հունիսի 1-ին, Հայաստանի մանդատը մերժելու վճռով: Հայության համար դա մեծ ողբերգություն էր:

Ըստ Ռ.Հովհաննիսյանի քննարկումն անցել է իրարամերժ դատողությունների լարված մթնոլորտում, այն է.

1. Հայաստանի սահմանները դեռ պարզորոշված չեն,

2. ԱՄՆ-ին առաջարկում են վատթար հողեր, երբ Անգլիան ու Ֆրանսիան ջոկել են լավերը.

3. ԱՄՆ-ի կանայք ինչու՞ պիտի իրենց որդիներին Հայաստանի համար կռվելու ուղարկեն,

4. Դեմ են 60 հազարանոց հայ բանակին կերակրել,

5. Եթե Հայաստանում ամերիկյան մի զինվոր էլ լինի, կկասեցնի բոլոր վտանգները,

6. ԱՄՆ-ի մայրերը կուզե՞ն, որ իրենց որդիները կռվեն Հայաստանում,

7. Հայերն արժանի են օգնության իրենց ընդհանուր բարեխղճությամբ,

8. Հայերը ապրելու և աշխատելու իրավունք ունեն:[1]

* *
*

1920թ. մայիսի 5-ից հունիսի 13-ի Փարիզում Հայ ազգային համագումարի Բ նստաշրջանին ներկա էին 16 պատգամավոր և 10-ից ավելի հրավիրվածներ: Նրանք շարունակել են ավարտուն տեսքի բերել Ա նստաշրջանում քննարկված հեռանկարային հարցերը և ջանքեր են գործադրել համազգային համերաշխության ուժով հայրենիքի տարածքապետական միասնություն հաստատելու համար: Հենց այդպես էլ Գ.Նորատունկյանը, որպես համագումարի տվյալ նստաշրջանի նախագահ, նշելով ԱՄՆ-ի կողմից հայոց մանդատի ձախողումը, հույս է հայտնում, որ Վ.Վիլսոնը գուցե պարտք կստանձնի լուծել Հայաստանի այն սահմանները, որոնք Ազգերի Լիգան պատրաստակամ է հաստատելու:[2]

Պողոս Նուբարը չի տարակուսում, որ Ազգերի Լիգան, այնուամենայնիվ, կլուծի Հայաստանի մանդատի հարցը:

Նստաշրջանում անդրադարձ է եղել նաև Սան Ռեմոյի քննարկումներին: Ելույթ ունեցող Արշակ Չոպանյանը զարմանք է հայտնել, որ Սան Ռեմոյում հայոց պետականության սահմանները չեն նշվել իրենց բնական, ամբողջական չափերով: Սակայն, նույնպես վստահ է, որ ԱՄՆ-ի նախագահը նպաստելու է հայոց բոլոր բնամարտ տարածքները պետական նույն հովանու ներքո միավորելուն: Արտահայտվողներից յուրաքանչյուրը նույն սուրբ երազանքի խոսքն է բերում. լինելու է Հայաստան աշխարհը ոչ թե ցրիվ-ցրիվ ու բաժան-բաժան, այլ ամբողջական, որովհետև աշխարհում կամեցող ու կարող մեծավորներ կան, որոնց մեջ ամենից փայլատակողն ու խոստումնալիցը վճիռներ կայացնող Վ. Վիլսոնն է:

Մանդատի ձախողման նախօրերին զուգընթաց Ազգային համագումարի Բ նստաշրջանում հայտարարվել է, թե հարցականի տակ է դրվում երգրումը Հայաստանի նախա-

---

[1] Ованнисян Р., указ. соч., сс.133, 135.
[2] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 48, թ. 1-5: Զաւէն Արքեպիսկոպոս, Պատրիարքական յուշերս, Կահիրէ, 1947, էջ 287:

տեսվող սահմանագծից ներս թողնելու հարցը: Այնպես որ, որքան ավելի բորբոքվում և իրական է թվում հայոց հողերը ի մի բերելու հարցը, նույնքան էլ, հակառակ ծայրից, հարձակումներն ու անհավանականությունն են բողբոջում: Նստաշրջանը ԱՄՆ-ին դիմում է ուղարկել, որը Արշակ Չոպանյանի բնութագրմամբ եղել է բողոք և ըմբոստացում անիրավության դեմ: Իսկ հուսառատ Պողոս Նուբարը մնացել է նույն անկոտրում և հավերժ հավատացյալը. «Ինչ-որ ալ ըլլայ, - ասել է նա, - պէտք է շարունակենք մեր ջանքերը մինչեւ վերջին վայրկեանը: Մեր ազգը, այնքան ահռելի տարակուսանքներէ եւ զոհողութիւններէ ետք, պիտի ողջունէ վերջապէս փրկութեան արշալոյսին ծագումը»:[1]

Երեսից ցավակցություն է եղել, թիկունքից՝ ահաբեկում:

Քերզոնը սովորություն է ունեցել միակողմանի դիտողություններ անել իրեն այցի եկած հայ գործիչներին և խորհուրդներ տալ: 1920թ. ապրիլի 8-ին նրա հետ Լոնդոնում հանդիպելուց 4 օր հետո Ավ.Ահարոնյանը «տեսակցության համառոտ արձանագրությունը» ուղարկել է Երևան, արտգործնախարար Ալ.Խատիսյանին: Ըստ այդմ, լորդը «սպառնացել է հայերին զենք չտալ, եթե նրանք չդադարեցնեն թաթարների ջարդը», հակառակ Ավ.Ահարոնյանի «բուռն բացատրության, թե երբեք այդպիսի ջարդեր չեն եղել»: Ապա ասում է՝ «լորդի այդպիսի հայտարարությունը թվում է անհետևողական և տարօրինակ, քանի որ ինքը, մի ամիս առաջ լորդերի պալատում հայտարարել է, թե հայերը գառնուկներ չեն», և նրանք էլ կամ ինքնապաշտպանության պետք է դիմեն կամ հակահարձակման: Այդուհանդերձ, որոշ ժամանակ անց Քերզոնը հայոց պատվիրակությանը «պաշտոնապես գրել է, թե բրիտանական կառավարությունը որոշել է հայ բանակը զինել և ռազմամթերք տալ նրան: Նույնն է հայտարարել է Լ.Ջորջը համայնքների պալատում, մի քանի շաբաթ առաջ»: Դրանից հետո փոփոխություն է եղել. այլևս վերջ է դրվել հայերին զենք տալուն: Ավ.Ահարոնյանը զարմանում է, թե այդ ինչպես է, որ, նույնիսկ այն ժամանակ, երբ հայերին

---

[1] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 48, թ. 6:

էին «վերագրում պատահական ջարդերը, [դաշնակից տերությունները] արգելք չեղան մեզ [հայությանը] զենք տալու որոշման, ինչու՞ հանկարծ այսօր, այդպիսի հանկարծական փոփոխություն», բացի մի հաղորդումից, թե հայերի ու թաթարների միջև ընդհատումներ կան: Ավ.Ահարոնյանը ենթադրում է, որ դա նրանից է, որ «անգլիական կառավարությունը հույսը կտրել է, թե կովկասյան ժողովուրդները և, մասնավորապես, հայերը բոլշևիկների դեմ կերթան, և այս պատճառով անօգուտ է համարում մեզ զենք տալ և կամ Ղարաբաղում և Զանգեզուրում նոր անցքեր են տեղի ունեցել հօգուտ մեզ և անհամապատասխան հայեցակետերին, ուստի մեզ զենք մերժելով, աշխատում են մեզ ճնշել և ետ քաշվել»: Պարզ է. հայերը կկռվեն բոլշևիկների դեմ, կարժանանան Անգլիայի և մյուս դաշնակից տերությունների օժանդակությանը: Ավ.Ահարոնյանը գտնում է, որ հայերի հանդեպ դիրքորոշման այդ փոփոխության պատճառը «թաթար ու վրացական ներշնչումն է»: Եվ անմիջապես անցում է կատարվում զորավար Անդրանիկին: Ավ.Ահարոնյանը հետին թվով ցավ է հայտնում, որ նման իրավիճակում Անդրանիկը հեռացել է Զանգեզուրից. դեպք, որը արդեն շուրջ մեկ տարվա վաղեմություն ուներ: Այդ նա է ասել. «Երբ մենք հեռանում ենք, մեր ժողովուրդն ու մեր հողը հանձնում ենք թաթարներին»: Հիշելով Անդրանիկի հեռանկարը, Ավ.Ահարոնյանը այժմ դեմ է արտահայտվում հայապահպան մյուս անձանց՝ Համազասպի ու Գուլխանդանյանի հեռանալուն: Քերզոնյան մի պահանջ, որը «դառնում է բոլորովին նման Զանգեզուրից Անդրանիկի հեռացնելուն»:[1]

Եվ ինչ է ստացվում. երեկ Թոմսոնը հրահրեց, որ Անդրանիկը դուրս մղվի, այսօր Քերզոնն է հեռվից նույնը կատարում այլ հայապահպանների նկատմամբ՝ գործը գլուխ բերելով շողոքորթ խոստումներից մինչև ուղղակի դուրս հրավիրման դրդումները: Երեկ կենդանի մարդիկ ընկան բրիտանական դիվանագետների ծուղակը, այսօր նույնը սպասվում էր մի խոստումնաշատ փաստաթղթի:

Ավ.Ահարոնյանը իր գրագրություններում բացատրում է, որ դա արվում է հայությանը բոլշևիկների դեմ ընբոստաց-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 110-112:

նելու համար. եթե նրանք զենք չստանան Ղարաբաղում և Զանգեզուրում օգտագործելու համար, որը դարձել է «անհամապատասխան անգլիական հայեցակետերին», ստիպված կլինեն հրաժարվել հօգուտ բոլշևիզմի և ի վնաս դաշնակից տերությունների գործելուց:

Այդ ընթացքում անգլիական դիվանագիտությունը ակնհայտ կերպով բացասական դիրք է բռնում հայոց ինքնապաշտպան հրամանատարներ Դրոյի և Համազասպի նկատմամբ: Եվ դա էլ մասնավորապես թաթար-վրացական ներշնչմամբ: Ստացվում է ոչ միայն հայությանը զենքից զրկել, այլև հրահրել հայ-ադրբեջանական և հայ-վրացական հակասություններ: Օ.Ուորդրոպը, որը Մեծ Բրիտանիայի քաղաքականությունն էր կիրառում Անդրկովկասում, Ավ.Ահարոնյանի գրչով բնութագրվում է որպես «թաթար և վրացական ինտրիգի» զոհ և իր հեռավորությունից ՀՀ կառավարությանը խնդրում է, որ այդ միտքը բացատրվի Ուորդրոպին և նրան բերեն այդ գիտակցությանը: Դատապարտվել է Դրոյի և Համազասպի նկատմամբ նաև Քերզոնի ընդգծված թշնամանքը: Ավ.Ահարոնյանը առանձնապես պարսավում է նաև զորավար Անդրանիկի նկատմամբ նրա դիրքը, որը հանգեցրեց Զանգեզուրից զորավարի հեռանալուն: Չէ՞ որ հենց անգլիացի գեներալ Թոմսոնն էր, որը Զաբուղի ձորից դեպի Շուշի տանող կես ճանապարհից ետ դարձրեց ազատարար հայ զորավարին: Եվ այդ քայլը, ինչպես այդ ժամանակ, այնպես էլ հետագայում, ինչպես որ եղել է, այնպես չընդունվեց ու չբացատրվեց: Անդրանիկին դուրս էին մղում, իսկ նա ազգի համար ավելորդ բարդություններից էր խուսափում՝ տեսնելով թիկունքում խմորվող հակառակությունը:

Եվ հետո, եթե մենք այսօր համակերպվենք և հեռանանք ասպարեզից, ոչ մի երաշխիք չունենք, որ վաղը մեր աչքի ընկնող գործիչներին չեն պահանջի հեռացնել և ողջ նախարարական կազմը և պառլամենտը:

Սկսվելով որպես Հայաստանի արևմտյան տարածքների վերամիավորման հարց, գործողությունները կամա թե ակամա պիտի որ դուրս գային իրենց ափերից՝ ընդգրկելով նաև Արևելյան Հայաստանի հյուսիսային, ինչպես և արևել-

քում Զանգեզուրի, Արցախի և դեպի հարավ-արևմուտք Նախիջևանի տարածքները:

Երբ եղել է պահ, որ հայոց արևմտյան տարածքների հարցը խաղաղվել է, Ավ.Սահարոնյանը ՀՀ կառավարությանը հեռվից պատգամ է հղել միայն արևելյան կողմի (այսինքն անդրկովկասյան) լարվածության առթիվ. «Թուրքիայի կողմից մեր սահմանների հարցը կարելի է լուծված համարել: Մեր կովկասյան սահմանների մասին գրել եմ պաշտոնական իմ զեկուցագիրը: Խոսեցի այստեղ և Թոփչիբաշևի և Չխեիձի հետ,* և երկուսով էլ խույս են տալիս կտրական պատասխանից, և ըստ երևույթին չէին կամենա այդ կարևոր հարցը այստեղ փոխադրել, քանի որ կարողանում են Ձեզ այդտեղ խեղդել: Մենք միջոցներ պիտի փնտրենք այս հարցը արագ լուծելու: Համենայն դեպս Ձեզ հայտնում եմ, որ ես մտադիր չեմ հրաժարվել ոչ Ղարաբաղից, ոչ Զանգեզուրից և ոչ Նախիջևանից: Եթե դուք տարբեր կարծիք ունեք՝ ինձ միայն պիտի դատապարտեք, որ ես համաձայնվեմ: Ինձ համար մահացու է ստորագրել մի ակտ, որ մեզնից պիտի խլի Ղարաբաղ, Զանգեզուր ու Նախիջևան կամ նույնիսկ դրանցից որևէ մեկը: Ես մնում եմ այն խորին համոզման, որ այս երեք գավառներից որն էլ խլեն մեզնից, մեր պետության ապագան կը վտանգվի: Ես չպիտի զիջեմ»: [1]

Այս նամակն ու նման տրամադրությունը 1920թ. մարտի 21-ին փարիզյան լրագրերից մեկում տպագրված «թուրք-ադրբեջանական հարձակողական և պաշտպանական դաշնագրի» արձագանքն են եղել: Իր սուր ծայրով դա ուղղվել է հայ պետականության և նրա դիվանագետների գործունեության դեմ:[2]

Փարիզ եկած վրացի դիվանագետներն առանց Ադրբեջանի հետ համաձայնեցնելու իրավունք չեն ունեցել որևէ քայլ անելու: Բայց իրենք էլ ունեցել են իրենց «ուրույն» խնդիրը, այն է՝ զավթել Լոռին, Բորչալուն և Ախալքալակը:[3]

---

* Ադրբեջանի և Վրաստանի ներկայացուցիչները կոնֆերանսում:

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 290, թ. 87-90:

[2] Խոսքը «Թայմս»-ի մասին է, տես - ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 290, թ. 91:

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 290, թթ. 90-100:

1920թ. ապրիլի 8-ին Ավ.Ահարոնյանն ու Պողոս Նուբարը այցելել են Քերզոնին, ասել նրան. «Մենք խնդրում ենք Ձեզ աջակցել, որ կովկասյան սահմանավեճերը ժամ առաջ հարթվեն»: Ի պատասխան նա տվել է Դրոյի, Համազասպի ու Գյուլխանդանյանի անունները, որոնք ըստ նրան թյուրիմացության մեջ գցողների «թաթար գյուղեր են ավերել և կոտորած արել»: Ավ.Ահարոնյանը բավարարվել է միայն հիշեցնելով Արցախի դահիճ Սուլթանովի անունը, որը որպես բրիտանական ներկայացուցիչ, աջ ու ձախ հալածում էր հայ անգեն բնակչությանը: Քերզոնը կրկին պնդել է նույնը. իրեն տեղեկություններ է հայտնել նաև Ուորդրոպը, և այլևս հարկ չհամարելով կեղծիքի դեմ ճշմարտություն լսել, պայման է դրել հայերը զենքի օգնություն կստանան, եթե հայոց ռազմական ղեկավարությունից կհեռացվեն նշված մարտիկները: Ասել է՝ եթե հայերը զինաթափվեն: Եվ անցել է շողոքորթման. «Խնդրում եմ հավատալ, որ ես շատ բարեկամ եմ ձեզ»:[1]

Հետոյա անհրաժեշտ մի բացատրություն: Դրոյի, Համազասպի ու Գյուլխանդանյանի անունները տալիս նկատի է առնվել նաև Անդրանիկը: Լոնդոնյան հեռուներից եկած գրություններում և բանավոր պահանջներում պնդվել է, որ այդ հայ գործիչները վտարվեն Արցախից: Պատճառն մեկն էր. նրանք պայքարում էին հանուն Արցախի հայության ազատագրման և Հայաստան-Արցախ պետական միավորման: Դրան վճռականապես դեմ էին դաշնակից տերությունները և, մասնավորապես Մեծ Բրիտանիան, որի անմիջական հովանավորության ներքո էր գտնվում Ադրբեջանի գերիշխանությունը՝ Արցախով հանդերձ:

Անդրանիկը զորաբանակով գտնվելով Զանգեզուրում, 1918թ. նոյեմբերի 20-ին ուղևորվում է դեպի Շուշի: Դեկտեմբերի 1-ին անցել է սահմանային Զաբուղի ձորը: Շարունակության մասին Անդրանիկը հետագայում հայտարարել է «Շուշի իմ գնալը կանգնեցվել է Բաքվում դաշնակից զորքերի հրամանատար գեներալ Թոմսոնի հրամանով: Այդ հրամանը հենվել է Ադրբեջանի կառավարության նախագահ պ.-ն Խան Խոյսկու պնդման վրա»: Այդ հրամանը Անդրանիկին կես

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 101-102, 104:

ճանապարհին հանձնել է անգլիական բանակի կապիտան Սկուերը և ֆրանսիական կապիտան Կասվիլտը: Անդրանիկը ենթարկվել է այդ հրամանին, քանի որ տրված են եղել արցախցիների ցանկությունների կատարման երաշխիքներ:[1]

Այնպես որ, ինչպես սևրյան տարածքների խոստումներն են եղել, նույնն է նաև Թոմսոնի հավաստիացումը, ըստ որի զինադադարի խախտումը պիտի նկատվի թշնամական ակտ, որի դեմ ուղղվելու էր դաշնակիցների դիմադրությունը:[2]

Փաստորեն, սա սևրյան վճռի մի այլաձև նախատեսակ էր. Անդրանիկին կասեցրին, թուրքերին թիկունք կանգնեցին: Հաջորդը, որ բուն Սևրն էր, խոստումնաշատ փաստաթուղթը ստորագրվեց և ընդամենը տեր կանգնող չգտնվեց: Անդրանիկն էլ Զաբուղի ձորն անցավ որպես հավատացյալ, բայց վերադարձրին համոզմունքներին հակառակ:

Քերզոնը, անշուշտ, տեղյակ էր Անդրկովկասի ներքին բարդություններին ու այդ թվում մասնավորապես Արցախի նկատմամբ ադրբեջանական մոլեգնության մասին լոնդոնյան թերթերում տպագրված լուրերին: 1920թ. ապրիլի 27-ին Ավ.Ահարոնյանը հուզմունքով նամակ է հղել ՀՀ արտգործնախարարին. «Ղարաբաղի անցքերի մասին կանդացինք լրագրերում: Սա սպանիչ հոգեկան կացություն է, որ անհնարին է շարունակել: Լոնդոնից Փարիզ ու այստեղ՝ Սան Ռեմո, միշտ մեր հարցն է Գերագույն խորհրդի աշխատանքների նյութը»:[3]

Լորդը հեռվից եկած տեղեկություններին հանգամանորեն տեղյակ էր, մանավանդ ընդամենը մեկ ամիս առաջ, թուրք-թաթարական հարձակումներից հայությանը պաշտպանելու համար, ինքն էր հայտարարել, թե «բրիտանական կառավարությունը որոշել է այդ բանակը զինել և ռազմամթերք տալ նրան»:[4] Նա սկսեց ուշադրություն դարձնել, որ հայոց պետականությունը, նրա զինական ուժերը հանկարծ կապ չհաստատեն Ռուսաստանի հետ և նրանից որևէ օժան-

---

[1] ՀԱԱ, ֆ. 370, g.1, գ. 51, թ. 13: "Кавказское слова", 15.12.1919.
[2] Անդրանիկ, Հայկական առանձին հարուածող զորամասը, Պոսթոն, 1921, էջ 154-159:
[3] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ. 290, թ. 93:
[4] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ. 290, թ. 110:

դակություն ստանալու հնարավորություն չստեղծեն: Այդ հարցը քաղաքական և ռազմական շրջանակներում արդեն 1920թ. գարնանից լրջորեն արծարծվում էր: Ապրիլի 12-ին Ավ.Ահարոնյանը Ալ.Խատիսյանին հղած նամակում գնահատում էր պետությունների դեպի Ռուսաստան դարձի ակնհայտ քայլերը. «Ռուսաստանից անջատված մանր պետությունները նույնպես աշխատում են բոլշևիկների հետ բանակցությունների մեջ մտնել: Բալթյան պետություններից հետո Լեհաստանն է զրույց սկսել: Զարմանալի չէ, եթե վրացիք ու թաթարներն էլ մարդիկ ղրկած լինեն Մոսկվա: Անգլիան քաջալերում է բոլոր հարաբերությունները Մոսկվայի հետ, Իտալիան ևս առավել, նման ձայներ են լսվում Ֆրանսիայի, անգամ պահպանողական բանակում: Այդ բոլորը պետք է բացատրել նրանով, որ խաղաղությունն անհնարին է թվում առանց Ռուսաստանի, որովհետև Ռուսաստանն իր խոսքն ունի Արևելյան խնդրում, Պոլսի և նեղուցների հարցում»:[1]

Ավ.Ահարոնյանին պարզ էր, իհարկե, Քերզոնի բրիտանական թատերախաղի իմաստը: Այդ առթիվ Պողոս Նուբարը դաշնակից Մեծ Բրիտանիայի հասցեին մի խստաբարո նամակ է կազմել և թողել Ավ.Ահարոնյանի մոտ, որ երկուսի անունից հղի երևան, ի գիտություն: Ավ.Ահարոնյանի համար ստեղծվել է լուրջ մտախոհության առիթ. իմաստ ունի՞ արդյոք դաշնակիցների հասցեին, այն էլ նրանցից մեծ սպասելիքների շեմին, խստառոճ նամակ գրել Երևան. «Չէ՞ որ դա կարող է իր ծանր տպավորությունը թողնել Երևանում և մտածել կտա, որ Անգլիան, որը համարվում է ներկա պայմաններում մեր միակ հույսը, ձեռնթափ է լինում մեզնից: Այդ պատճառով խմբագրեցի նոր հեռագիր և զգալապես թուլացրի մեր խորհրդի խստությունը: Եվ որովհետև Փաշան բացակա էր, ստորագրեցի ինքս մենակ»:[2]

Մերթ ընդ մերթ կամ քաղաքականությունն է դառնում վիպերգություն, կամ հակառակը: Պողոս Նուբարի ջղերը, որ ոչ բանաստեղծի էին և ոչ էլ գրողի, չդիմացան, իսկ Ավ.Ահարոնյանը, որը նախ գրող էր, ապա քաղաքագետ ու դիվանա-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 107,108:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թ. 105:

գետ, անզուսպ քաղաքական գործողությունները բնութագրելու համար, գերադասեց զուսպ ոճը ...

Դեռևս 1919թ. հունիսի 1-ին Ավ.Ահարոնյանը որոշակի համոզմունք էր հայտնում. «Մեր մանդատը լինելու է Ամերիկան, Ուիլսոնը ընդունել է այդ պայմանական կերպով, սպասելով սենատի համաձայնության»: Նա կարծում էր, որ «Կովկասյան և նախկին թուրքաց Հայաստանները անպատճառ միանալու են»: Գործին տեղյակ է եղել և հոգատար կերպով հետևել Հունաստանի վարչապետ Վենիզելոսը՝ Ահարոնյանին հուսադրելով, որ «այդ մասին կասկած լինել չի կարող»: Դա Թուրքիայի հետ է.Վենիզելոսի պատերազմական տրամադրությունը հաջող օրերին է եղել: Բայց Վենիզելոսի հաղթական տրամադրությունը երկար չի տևել: Դեպքերի մեջ խորանալիս պարզվում է, որ ոչ թե հույների ուժերն են նվազում, այլ Մեծ Բրիտանիան է թուլացնում իր ճնշումը Թուրքիայի նկատմամբ, նվազեցնելով իր օժանդակությունը ազատասեր Հայաստանին: Նման մի անդրադարձ էլ եղել է հայ-թուրքական առնչություններում: Երբ Ռուսաստանը Թուրքիայի նկատմամբ բարեացակամ էր դառնում, առնվազն ուժեղացնում էր թուրքական ճնշումը Հայաստանի նկատմամբ: Դա առջևում էլ է լինելու: է.Վենիզելոսը անկեղծ էր: Ու թերևս նա էլ առաջինն է, որ այս ամբողջ նախասևրյան ու ետսևրյան պատմության մեջ կռահել, կանխորոշել է վաղվա օրը՝ Ավ. Ահարոնյանին ասելով. «Ոչ մենք հույներս, և ոչ դաշնակիցները, ձեզ օգնության չենք գալու: Կռվում եք, պիտի համոզված լինեք, որ հաղթելու եք, ապա թե ոչ՝ միտք չունի»:[1]

Այդուհանդերձ, 1919թ. հունիսին, նա համոզմունք է հայտնել, որ Վ.Վիլսոնը ընդունել է Հայաստանի մանդատը, իսկ այդ ընթացքում էլ Կովկասյան և Արևմտյան Հայաստանը միանալու են: Իսկ 1920թ. ապրիլի 20-ին է.Վենիզելոսը հռչակել է, որ միայն հունական զորքը բավական կլինի հարկադրել Թուրքիային ստորագրելու զինաթափման պայմանագիրը: Սևրյան փաստաթղթի խմորման փուլում նա կողմ է եղել Տրապիզոնը Հայաստանին միավորելուն: 1920թ. լոնդոնյան կոնֆերանսում նաև առիթ է ունեցել հայտարարելու.

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 290, թթ. 166-167:

«Հայերը արժանի են Տրապիզոն ունենալու»: Չնայած դրան, երբ Պոնտոսի հույները առարկել են դրան, նա ստիպված է եղել խոստովանել, որ թեև դեմ չէ իր հռչակածին, բայց ինքը չի կարող «այդ հարցում որևէ մասնակցություն ունենալ»:[1]

Եվ հույները պարտվել են այն դեպքում, երբ իրենց նկատմամբ դաշնակիցների ստանձնած օգնության պարտավորությունը կատարելիս իրենք միանգամայն ի վիճակի էին թուրքական բանակին պարտության մատնել: Ակնհայտ էր, որ հույն-թուրք պատերազմը պարզապես թեև ճարահատյալ, բայց և թուրքերի համար նպատակային կասեցում էր:[2]

Ուրիշ փաստեր էլ կան, որոնք վկայում են, որ հույն-թուրքական պատերազմի ընդհատումը Մ.Քեմալի կողմից կանխամտածված է եղել սկզբունքային հարցեր լուծելու համար: 1920թ. հունիսին Հունաստանի հետ պատերազմը ընդհատելուց հետո Մ.Քեմալի ձեռնարկումներից մեկն էլ, և թերևս ամենակարևորը, եղել է Ռուսաստանի հետ Մոսկվայում սկսած բանակցությունները: Եթե մի կողմից Անտանտի տերությունների հետ համաձայնություն է եղել հույն-թուրքական պատերազմը կանխելու համար, ապա մյուս կողմից էլ ջանք էր գործադրվում մոսկովյան բանակցությունները հաջողությամբ ավարտելու և դրանով իսկ նոր միջոցներ կորզելու համար: Թուրքական կողմը, անձամբ թուրք պատվիրակության ղեկավար արտգործնախարար Բեքիր Սեմի բեյը, Անկարայից ահազանգ էր ստանում. Ռուսաստանի հետ ըստ հնարավորին արագ և ըստ հնարավորին նպաստավոր պայմանագիր կնքել, որը պայմանավորված էր գերազանցապես Հայաստանի հետ թուրքական կողմի, Ռուսաստանի հետ հայերի պայմանագրի կնքմամբ և դրանով Թուրքիայի համար նպաստավորության չափով: 1920թ. օգոստոսի 10-ին Բեքիր Սամին Գ.Չիչերինին հայտնել է Անկարայից իրեն ուղղված նամակ-առաջարկությունը. «Իմ կառավարությունը ինձ համառորեն շտապեցնում է, որ ես արագ կերպով ավարտեմ բանակցությունները Խորհրդային Ռուսաստանի կառավա-

---

[1] Ավ.Ահարոնեան, Սարդարապատից մինչև Սեւր եւ Լոզան, էջ 24:

[2] Корсун Н.Г., Греко- турецкая война, (1919-1922), М., 1940. Миллер А.Ф., Очерки Новейшей истории Турции, М.-Л; 1948.

ության հետ և իրեն հայտնեմ մինչև օրս ձեռք բերված արդյունքների մասին»: Նամակում միաժամանակ հայտնվում է նաև այն մասին, որ «անգլիացիների և հույների գործողությունների հետևանքով Թուքիայի դրությունը օր առ օր վատանում է և Անատոլիայի կառավարությանը դնում է արտակարգ ծանր դրության մեջ»:[1]

Թուրքիան նեղ տեղն էր, Թուրքիային պետք է հասնել և օգնողը պետք է լիներ ... Խորհրդային Ռուսաստանը:

Մինչդեռ, 1920թ. հունիսին սկսված հույն-թուրքական պատերազմում հունական բանակի մի թևը ընկճելով թուրքերին՝ ամսի 22-ին գրավում է Բալիքեսիրը, հուլիսի 8-ին՝ Բուրսան և Արևմտյան Անատոլիան: Հունական զորքի մյուս մասը հաղթական քայլերով մտնում է Արևելյան Թրակիա: Դա արդեն պատմական օգոստոսի 10-ի շեմն էր:

Հույների հաղթական մուտքը Թուրքիայի խորքեր նաև Արևմտյան Հայաստանի տարածքների ազատագրման արդյունքում «բարեկամ և ուժեղ Հայաստանի» ստեղծման նպատակ ուներ: Ենթադրվել է նաև Տրապիզոնը վեր ածել «ինքնավար հունական միավորի» Դեպքերին քաջատեղյակ Վ. Փափազյանը վկայում է. «Հունաստանի արտգործնախարար Բալթաճիի տեղեկացումը Աթենքի հայոց դեսպան Չայանին, որ իրենք՝ հույները, իրենց կողմից Թուրքիային թելադրելիք պայմանների մեջ մտցրած են եղել նաև հայերին Սևրի պայմանագրով հանձնվելիք հողերի պահանջը, նաև այն մասին, որ որպես այդ պահանջի կատարման գրավական պիտի պահեն թուրքերի գրաված հողերի որոշ մասերը: Դա նշանակում է. 1. հարկադրել թուրքերին, որ ընդունեն Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը Սևրի դաշնագրի սահմաններում, 2. Հույների կողմից գրավված թուրքական հողերը պահել իբրև երաշխիք, մինչ այն ժամանակ, երբ առանց դիմադրության կազատվեն Հայաստանին վիճակված հողերը և թույլ կտան, որ այդ հողերից հեռացած հայերը վերադառնան և ստեղծեն այդտեղ իրենց պետությունը: Այդ վճռի դեմ ուղղված ամեն մի քայլ հույները կհռչակեին «Casus belli» - պատերազմի հրա-

---

[1] А.Хейфец, Советская Россия и сопредельные страны Востока. 1918-1920, М., 1964, с. 116. АВП СССР, ф.132, оп. 3, д.2, л.2.

հրման պատճառ, որի դեմ ընբոստանալու էին նաև հայերը՝ «իբրև երկու քույր ազգեր», ապագայում ավելի սերտ կապերով միանալու երաշխիքով»:[1]

Է.Վենիզելոսի մի դժգոհ դիտողությունը հայոց համար ուսանելի և զգուշողական է: Ա.Ահարոնյանին նա պատմել է, որ դաշնակիցներից օգնություն զենք է խնդրել, իսկ նրանք մերժել են, մինչև որ «Քեմալը կազմակերպվի, որ զարկի որ կողմն ուզում է», իսկ իրեն էլ օգնության փոխարեն «արգելել են առաջ շարժվել»: Եվ Վենիզելոսը մի «սխալ» թույլ տվեց դաշնակիցներին անվանելով «կատարյալ ապուշներ»,[2] երբ նրանք խորամանկ ու հաշվենկատ դիվանագետներ էին:

Չմոռանանք. Սևրի պայմանագիրն արդեն ստորագրված է, իսկ պարզ երկնակամարում խմորվում էին խռովահույզ սև ամպերը ընդդեմ Հայաստանի:

---

[1] Վ.Փափազեան, Իմ յուշերը, հ. 2, էջ 113:

[2] Ավ.Ահարոնեան, Սարդարապատից մինչև Սեւր եւ Լոզան, էջ 80:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐՆ ՈՒ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ

1920թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում տերություններն ու նրանց դաշնակից պետությունները Թուրքիայի հետ կնքեցին պայմանագիր:[1]

Պայմանագիրը բավական շատ հարցեր է ընդգրկում և բաղկացած է 13 մաս կազմող 433 հոդվածից:[2] Դրանց թվում է «Քաղաքական դրույթներ» վերնագիրը կրող երրորդ մասի 6-րդ բաժինը, որը կրում է «Հայաստան» վերնագիրը, իր պարունակած 6 (88-93) հոդվածներով: Այս պատմության հիմքում այդ 6 հոդվածներն են, մի քանի առնչվող հոդվածներով և դրույթներով հանդերձ:

Հոդված 88: «Թուրքիան հայտարարում է, որ ինքը, ինչպես որ դա արդեն արել են դաշնակից տերությունները, ճանաչում է Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն»:

Այդքանն է: Ուղղակի ճանաչում է, ոչ ավել, ոչ պակաս: Բայց հենց դա էլ արդեն խնդրի ամբողջ էությունն է՝ *ԱԶԱՏ ԵՎ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԸ*: Այդ հռչակումն արդեն երևույթ էր, որի իրականացումը կիմաստավորվեր որպես շրջադարձային մեծ իրադարձություն բազմադարյան հայոց պատմության մեջ: Դրանից բխեցվում էր՝

Հոդված 89: «Թուրքիան և Հայաստանը, ինչպես նաև բարձր պայմանավորվող կողմերը համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների գծորոշումը ներկայացնել ԱՄՆ-ի նախագահի միջնորդական վճռին և ընդունել նրա որոշումը, ինչպես նաև բոլոր այն միջոցները, որոնք նա

---

[1] Համառոտ շարադրանք ըստ - Севрский мирный договор и акты подписанные в Лозанне, Москва, 1927.

[2] Севрский договор, сс 3-163.

կարող է առաջարկել Հայաստանի դեպի ծով դուրս գալու և նշված սահմանի վրա ցանկացած Օսմանյան տարածքի ապառազմականացման վերաբերյալ»:

Նշանակում է վերստին լինելու է Արևմտյան Հայաստանը, ինչպես որ այն եղել է որպես Արևելյան Հայաստանի միացյալ ու ամբողջական ազգային պետության բնամարտ բաղկացուցիչ մաս:

Պակաս կարևոր չէր և այն, որ վերադարձվող տարածքներում ձևավորվելիք հայոց պետականության սահմանամերձ գոտու ռազմականացման թույլատրելիության հարցը ևս հանձնվում էր հայոց պետականության վճռին: Այլ կերպ ասած, բավական հոգատար է:

Հոդված 90: «Անկախ նրանից, թե 89-րդ հոդվածում նշված տարածքները ինչ սահմանագծմամբ են վերահանձնվելու և վերամիավորվելու բաղկացուցիչ մաս կազմող Արևելյան Հայաստանին լրիվ թե մասամբ, Թուրքիան այս վճռի կայացման օրից հրաժարվում է հանձնվող տարածքների նկատմամբ բոլոր տեսակի իրավունքներից և իրավահիմունքներից»: Ուստի, անկախ որևէ հանգամանքներից, տարածքների հանձնման մասին որոշումը կիրառելի է անվերապահորեն: Բոլոր դեպքերում, տարածքների հանձնումից բացի, Թուրքիան, որ հրաժարվում էր հանձնվող տարածքների նկատմամբ որևէ իրավունքներից, նաև պարտավոր էր համապատասխան պարհակ տրամադրել:

Երևում է, որ փաստաթղթի հեղինակները հակված չեն այն ամբողջական և լիակատար համարելու և իրենց կատարածին մոտենում են ընբռնումով, որը կարելի է նաև վերապահում անվանել: 90-րդ հոդվածի մասին, որպես հեղինակային կոլեկտիվի ամփոփիչ խոսք ասվում է. «Հաջորդ համաձայնագրերը կկարգավորեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն պայմանագրով և, որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տարածքի փոխանակման կապակցությամբ»:

Նկատենք և այն, որ տվյալ պահից անջատված և վերամիավորվող հայոց տարածքների նկատմամբ անխտիր կիրառվելու էին նույն այն իրավունքները, որոնք որ գործադրվել էին առհասարակ Թուրքիայից անջատվող մյուս երկր-

ների տարածքների նկատմամբ: Նշենք նաև, որ նույն հոդված 90-ում հղում էր կատարվում սևրյան պայմանագրի «ֆինանսական դրույթներ» մասի 241-244 հոդվածներին: Մասնավորապես ըստ հոդված 241-ի 1-ին մասի, այն տերությունները, որոնք անջատվել էին Թուրքիայից, պետք է մասնակցեին նրա ամենամյա պարտքերին մուծում կատարելուն:

Ավելի որոշակի, որը կարող էր հատուկ վերաբերվել նաև Հայաստանին, տվյալ հոդվածում ասվում էր, որ այն տերությունները, որոնք նոր են ձևավորվել Ասիայում և որոնց օգտին անջատվել էին կամ անջատվելու էին Թուրքիայից տարածքներ, պետք է կարողանային բավականաչափ երաշխիք տալ այն մասի համար վճարելու նպատակով, որը իրենց հասնում է ամենամյա պարհակներից:

Այս ամենով հանդերձ, այնուամենայնիվ, տարակուսանք ստացվեց: Հոդված 89-ով Թուրքիայի և Հայաստանի «սահմանահատումը թողնվեց ԱՄՆ-ի որոշմանը», իսկ հոդված 91-ում օգտագործվում է «Սահմանագծման հանձնաժողով» հասկացությունը, որոշակի նշելով, որ դա էլ «կստեղծվի երեք ամսվա ընթացքում», այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի և Թուրքիայի միջև տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ «89-րդ հոդվածում նախատեսվող որոշումը»:[1]

Հոդված 91-ում հնարավոր է գտնվել, որ Վիլսոնի սահմանագծումը վերաբերվի ոչ թե նշված վիլայեթների մինչ այդ եղած ամբողջական ու լրիվ տարածքներին, այլ պարունակի շեղումներ ու նաև ըստ տեղանքի յուրօրինակության՝ մասնատումներ: Հոդված առ հոդված խնդիրը բացահայտվում է և, ըստ նույն 91-ի, խոսք է գնում նաև «տարածքի մի մասի հանձնման» դեպքում սահմանագծման հանձնաժողովի մասին: Բայց, դարձյալ, դա սկզբունքի հարց չէ, այլ, ինչպես ակնհայտորեն երևում է, առնչվում է սահմանագծման ոչ թե առկա տարածքային չափերի, այլ նպատակահարմարության հետ:

Հոդված 92-ը հարցերի տեղիք է տալիս՝ առաջ քաշելով «Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելության» որոշելու անհրաժեշտությունը, հայ-

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջեր 676-677:

տարարելով, որ այդպիսիք կորոշեն գլխավոր դաշնակից տերությունները «հոգ տանելով սահմանազատումը տեղում գծելու մասին»:

Ինչու՞մն է բանը: Իրավասու՞ էին արդյոք գլխավոր դաշնակից տերությունները անդրադառնալու նաև Ադրբեջանին և Վրաստանին վերաբերվող հարցերին: Հավանաբար, այո, *անդրադառնալ* իրավասու էին, այդ թվում նաև Թուրքիայի հետ, և այն էլ նրա տիրապետության տակ գտնված հայկական տարածքների առնչությամբ, որում ոչ մի անթույլատրելի բան չկար, մանավանդ, որ կար Հայաստանի սահմանային շփում միաժամանակ և Ադրբեջանի ու Թուրքիայի հետ համատեղ, և Վրաստանի հետ: Հայաստան պետության նոր սահմանագծում էր կատարվում. կար նշված հարևանների հետ սահմանագծման փոփոխություն, պետք է լինել, ինքնին, նաև ճշտորոշում: Ուրիշ բան, որ այդ հոդվածներով առկա հիշատակումը քիչ թե շատ չի պարզորոշվում: Սակայն, չէ՞ որ դրա փոխարեն ասվում էր, թե «կորոշեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ»: Իսկ դա արդեն որոշելու հարց էր որո՞նք էին լինելու շահագրգռված տերությունները և ինչպիսի՞ շահագրգռություն էր հարուցելու նրանց համար ցանկալի սահմանագծումը:

Սևրյան փաստաթուղթը ստորագրած դաշնակիցները զուր տեղը չեն այդ ձևակերպումը կատարել. հայերի հարևաններ Ադրբեջանը և Վրաստանը ունեին իրենց նկատառումներն ու պահանջները, որոնք հենց փաստաթղթի ստորագրման պահին անթաքույց արտահայտում էին տեղիք տալով լուրջ առարկությունների և սահմանավեճերի. հիշատակենք միայն Նախիջևանն ու Արցախը մի բևեռում, Ախալքալակն ու Լոռին մյուս:

* *
*

Հետևենք բախտորոշ փաստաթղթի ասպարեզ գալուն: 1920թ. օգոստոսի 10-ի ստորագրումից 9 օր անց, օգոստոսի 19-ին, Ավ.Ահարոնյանը ՀՀ կառավարությանը հղել է այդ պատմական եղելության իր զեկույց-նկարագրությունը. «Ճաշից հետո, ժամը 4-ին, երկու օթոմոբիլներով Փարիզից

հասանք Սևր: Ինձ ուղեկցում էին երկու խորհրդականներ՝ Ա.Էնֆիաջյանը, բժշ. Հ.Նևրուզը և երկու քարտուղարներ: Սևրի հաղճապակու հայտնի գեղարվեստական գործարանի գլխավոր դահլիճը պատրաստված էր խաղաղության համաժողովն ընդունելու համար: Այդ դահլիճը ճակատի պատի տակ տեղ բռնեցին մեծ պետությանց պատվիրակները, իսկ աջ ու ձախ պատերի տակ երկու թևերով՝ փոքր դաշնակիցների տեղն էր: Հայաստանն իր տեղն ուներ ռումենների և չեխոսլովակների կողքին, ուր ես տեղ բռնեցի ձախ թևում, մինչդեռ մեր խորհրդականներն ու քարտուղարները տեղավորվեցին պատվիրակների թիկնաթոռների ետևում, հատուկ պատրաստված աթոռների վրա: Իմ առջևի սեղանի վրա դրված էր փոքրիկ քարտ, որի վրա գրված էր՝ Plenipotentiaire de Armenie:* Ժամը 4-ից անց էր, երբ գրեթե նստած էին բոլոր պետությունների ներկայացուցիչները, ներս մտավ համաժողովի նախագահ Ֆրանսիայի վարչապետ պր. Ա.Միլերանը, բացակայում էին միայն թուրք պատվիրակները, որոնք սպասում էին վարի հարկում: Նախագահի նշանի տակ նրանց ներս բերին»:[1]

Ա.Միլերանի հրավերով առաջինը թուրքերն են ստորագրել դաշնագիրը, ապա՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Ճապոնիայի ներկայացուցիչները, և անմիջապես հետո՝ ըստ այբբենականի, հայոց կողմից՝ Ավ.Ահարոնյանը: Ի նշանավորում երանելի փաստաթղթի ստորագրման, օգոստոսի 15-ին Փարիզում եղել է հանդիսավոր մաղթանք, երգ ու արտասանություն,- գրում է այսպես Ս.Վրացյանը և ավելացնում. «Բայց շուտով պիտի երգվեին և ուրիշ տեսակ երգեր, որոնց նշաններն արդեն երևում էին»: Դա էլ հենց ակնկալվող ողբերգությունն էր:

Այդուհանդերձ, վճիռը ինքնին, որպես այդպիսին, արդարացի էր, լինելով անհրաժեշտության նախաձեռնություն և խնդրի, որպես իրականացման նախափուլի, սկզբնաքայլ: Դրանում յուրօրինակ բացառություն էր Վ.Վիլսոնի մոտեցումը: Նա օգոստոսի 10-ի վճռից դեռ ամիսներ առաջ էր

---

* Հայաստանի լիազոր ներկայացուցիչ:

[1] Ս.Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Ե.,1993, էջ 468-69:

պատրաստվել թղթի վրա հանձնվելիք տարածքի սահմանագծումը իրականացնելուն, միայն թե վատառողջ լինելով, ուշացրել է: Սակայն, թուրքական կողմը, ընդհակառակը, իր համար, ճիշտ ժամանակին, օրը ցերեկով, փաստաթուղթն ստորագրողների աչքի առջև անցել է հակագործողության, որը, ինչպես ցույց կտրվի ստորև, պատերազմն էր:

Սևրի պայմանագրում անմիջականորեն Հայաստանին վերաբերվող նշված հոդվածներից բացի կային նաև այլ հոդվածներ, որոնք չնայած լինելով ընդհանուր բնույթի և ունենալով լայն ընդգրկում, առնչվում էին հայոց խնդիրների ու հոգսերի հետ: Այդպիսին է հոդված 125-ը: Նրանում ասվում է այն մասին, որ «18-ից բարձր տարիք ունեցող այն անձինք, որոնք բնակություն են հաստատել Թուրքիայից անջատված տարածքում և ռասայի առումով տարբերվում են բնակչության մեծամասնությունից, մեկ տարվա ընթացքում կարող են քաղաքացիություն ընտրել երկրներից մի քանիսում», որոնց թվում հիշատակվում է նաև Հայաստանը:

142-րդ հոդվածով վերանայվում, չեղյալ են համարվում այն գործողությունները, որոնք պատերազմական բարդ իրավիճակում կիրառվել են որպես բռնի դավանափոխություն: Օսմանյան կառավարությանը պարտավորեցվում է «ցույց տալ ամեն տեսակ աջակցություն 1914թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առևանգված, ներկալված և ազատազրկված ամեն ռասայի և ամեն կրոնի մարդկանց որոնելու և ազատելու համար»:[1]

Այս ոգով սևրյան փաստաթղթում թուրքական իշխանություններին մի շարք այլ առաջադրանքներ կան ու հանձնարարություններ, որոնք վերաբերվում են հանցագործներին որոնող, պատժող զանազան հանձնաժողովներ ստեղծելու, բռնազաղթած կամ ետին թվով սեփականացրած տները, այգիները, այլև նյութական մյուս արժեքները բացահայտելու, այդպիսիք իրենց տերերին վերադարձնելու և փոխհատուցման վճիռներ կայացնելու գործողություններին: Այդ նպատակով Ազգերի Լիգայի կողմից ստեղծվելու էին հատուկ հանձնաժողովներ: Միաժամանակ. պետք է հոգ տարվեր նման

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 678:

բարդություններից տուժած անձանց «անվտանգությունն ու ազատությունը ապահովելու համար»: Հատուկ հոդվածով կարգ էր սահմանվում լքված սեփականության հարցերը լուծելու համար:

Ինչպես Թուրքիայի տիրապետությունից անջատվող մյուս պետությունները, այնպես էլ ՀՀ՝ նշված վիլայեթների միավորումից հետո, ևս պարտավոր էին մասնակցել ամենամյա այն պարհակներին, որոնք կապված էին թուրքական տերության մինչև 1914թ. նոյեմբերի 1-ը ունեցած պարտքերի մարման հետ: Այդ կապակցությամբ, նշված հոդված 141-ի երկրորդ մասում բացատրվում էր. «Բալկանյան թերակղզու պետությունները և Ասիայում նորաստեղծ պետությունները, որոնց օգտին Թուրքիայից անջատվել են կամ եղել են անջատված տարածքներ, պետք է բավականաչափ ներդրումներ կատարեն (պարտքի այն մասը վճարելու համար, որը բաժին է ընկնում նրանց վերը նշված ամենամյա պարհակներին պատկանելու կապակցությամբ)»:

Այս նշանակում է, որ նշված հողերի վերամիավորումից հետո, Հայաստանը ևս նման մուծումներ կատարեր: Իսկ հոդված 144-ով «Օսմանյան կայսրությունը հանդիսավոր կերպով պարտավորվում է, հնարավորության սահմաններում, նպաստել, որպեսզի իրենց օջախները վերադառնան և իրենց գործերը վերսկսեն օսմանյան տերության ոչ թուրքական ցեղի այն քաղաքացիները, որոնք 1914թ. հունվարի 1-ից հետո գաղթել են դաժանություններից, սարսափից դրդված կամ արտաքսվել են որևէ այլ հարկադրական եղանակով»: Ըստ այդմ, պետք է գտնվեին և իրենց տերերին վերադարձվեին նրանց պատկանող անշարժ և շարժական գույքերը և մի ամբողջ շարք համանման այլ պարտավորություններ:

Պայմանագրի հոդված 351-ով վճռվում էր. «Բաթումի նավահանգիստի վրայով Հայաստանին ազատ մուտք է տրվելու դեպի Սև ծովը ճիշտ այնպես, ինչպես որ տրվում է Վրաստանին, Ադրբեջանին և Պարսկաստանին»:

Մի խոսքով, բացառիկ հոգատարություն է, և ամեն ինչ ըստ արժանվույն: 352-րդ հոդվածով Հայաստանին նույն պայմաններով դեպի Սև ծով ազատ մուտքի իրավունք էր տրվում նաև Տրապիզոնի նավահանգստով: Տվյալ հոդվածի

շարունակության մեջ արձանագրվում է. «Այս դեպքում Տրապիզոնի նավահանգստում Հայաստանին առհավետ, քանի որ ժամկետը չի սահմանված Ազգերի Լիգայի կողմից, վարձակալության կհանձնվի մի տեղամաս, որը կդրվի 341-344-րդ հոդվածներում նախատեսված ազատ գոտիների ընդհանուր ռեժիմի տակ և որը նախորոշված կլինի այդ պետությունից արտահանվող կամ ներմուծվող ապրանքների անմիջական տրանզիտի համար»:[1]

Ենթադրվում էր, որ ինչպես ռազմական գործողությունների ավարտը, այնպես էլ երկրների միջև դեռևս առկա վճիռների լուծումը պետք է լինեն խաղաղ ձևերով: Այդ մտայնությամբ էլ պայմանագրի 12-րդ բաժնի «Քաղաքացիություն» վերնագրի տակ փաստաթուղթը հագեցված էր մի քանի այնպիսի հոդվածներով, որոնք վերաբերում էին պատերազմի ընթացքում ազգային փոքրամասնությունների, հատկապես ոչ մահմեդական բնակչության նկատմամբ կիրառված հալածանքների, նրանց շարժական և անշարժ գույքը թալանելու, մարդկանց երկրներից արտաքսելու և զանգվածային հալածանքի ու սպանության դեպքերի նկատմամբ փոխհատուցման ձևերի կիրառությանը, որոնք բոլորն էլ ըստ էության մնացին թղթի վրա:[2]

Մինչդեռ, ստեղծվելու էին նաև միջնորդ հանձնաժողովներ՝ օժտված Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից որոշակի «հրամաններ տալու իշխանությամբ»: Իրականում, դա պարզապես պատրաստվում է դառնալ նավահանգստային տեղամասի հետ կապված հարցերով զբաղվող հանձնաժողով, որը բաղկացած էր լինելու Հայաստանի, Թուրքիայի և Ազգերի Լիգայի մեկական պատգամավորից: Նման կարգը կարող էր «վերանայվել յուրաքանչյուր տասը տարին մեկ անգամ»: [3]

Տարածքային զիջումների, նրանցում բնակչության և նրա գույքի վերադարձի հարցերում, տվյալ պարագայում որպես անհրաժեշտ որոշում, ավելին, թերևս, դժվար էր ակնկալել:

---

[1] Севрский договор, с. 112.
[2] Севрский договор, сс. 37-39.
[3] Հայաստանը ... փաստաթղթերում, էջեր 679, 681, 683:

Հողերի պատմական պատկանելիության այս փաստաթուղթը որևէ ժողովրդի իրավունքը չէր ոտնահարում, քանի որ անօրինաբար մեկից մի բան չէր վերցվելու և տրվելու ուրիշի: Պարզապես խաչ էր քաշվում անցյալ նվաճողական գործողությունների հանգեցրած արդյունքների և ստեղծած իրավիճակների վրա: Հայ ժողովուրդը ապրել, դիմակայել էր այդ հողերի վրա, կառուցել և իր ուժերի ներածին չափ ստեղծագործել էր դրսեկ տիրակալների իշխանության շրջանակներում: 1914-1916թթ. Եղեռնի զոհ դարձած շուրջ 2 մլն. հայությունը, հետագայում բնաջնջված, նույնպես և տեղահանված ու դեռ բռնի տեղահանության հարկադրական վտանգին ենթակա դժվարին պայմաններում գտնված հայ գերդաստանները այդ հողերում էին ապրել, իսկ ողջ մնացածներն էլ շարունակում էին ապրել իրենց մայր հողին ամուր կառչած: Եթե մեկն իրեն իրավունք էր վերապահել բոլոր միջոցներով դուրս մղելու բնակչության բնիկ կազմին և բնաջնջելու նրանց, ապա ի սկզբանե նույն հողի վրա ապրածը ինչու՞ չպետք է վերահաստատեր իր մայր օջախում ազատորեն ապրելու բնապատմական իրավունքը և պետականհասարակական իրավակարգը: Սևրի պայմանագիրը պարզապես այդ հարցի պատասխանն էր: Հետևենք դեպքերին:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆ - ՌՈՒՍԱՍՏԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Անտանտի տերությունները հակառակ էին Խորհրդային Ռուսաստանին: Սևրի պայմանագրի խմորմանը զուգընթաց Անգլիան օժանդակում էր Անտանտի կողմնակից Վրանգելին, որի զորքերը Ղրիմում և Կուբանում կռվում էին խորհրդային ուժերի դեմ: Մինչդեռ, Թուրքիայում Ռուսաստանին հետամուտ լինելով՝ հանձինս Մուստաֆա Քեմալի, ասպարեզ էին եկել հակաանտանտյան ուժեր, որոնց հետ Ռուսաստանը, ինքն էլ հակաանտանտյան, դաշնակցելու պարտավորություն էր հայտնել:

Այդ խմորումների հենց սկզբից ռուսական գործիչները ՀՀ կառավարությանը խորհուրդ էին տալիս զերծ մնալ Արևմուտքի հետ դաշինքից, իսկ հետագայում էլ չբարդացնել հարաբերությունները հակաանտանտյան Թուրքիայի հետ, և գործը նրա հետ ռազմական ընդհարման չհանգեցնել: Աստիճանաբար խորհուրդը սկզբունքային պահանջ է դառնում. հրաժարվել ակնկալվող և առժամանակ հետո նաև առկա Սևրի պայմանագրի ստորագրումից՝ եղած տարածքներն էլ կորստյան վտանգի չենթարկելու համար:

ՀՀ դեմ չէր Ռուսաստանի հետ որոշակի պայմաններով դաշինք կնքելուն: Սակայն, նա միևնույն ժամանակ չէր հրաժարվում դաշնակիցների հետ իր կապերից, ըստ որոնց հուսադրումների ուր որ է կասեցվելու էր Արևմտյան Հայաստանի բնարմատ տարածքների վերամիավորման վճիռը:

Խորհրդային Ռուսաստանի քաղաքագետներն ու դիվանագետները վստահ չէին, թե տվյալ իրավիճակում հայոց արևմտյան տարածքները կարող էին վերադարձվել հայերին: Ավելին, Ռուսաստանը Անտանտի կողմից իր նկատմամբ ակնհայտ թշնամանքի պատճառով իր համար նպաստավոր էր գտնում Քեմալի հետ մտերմանաքը՝ ընդդեմ Անտանտի:

Սա, հարցերը խիստ չլուծելու դեպքում, ՀՀ ու հայ ժողովրդի համար ստեղծում էր աննպաստ և մոտիկ հեռանկարում բարդություններով հղի իրավիճակ: Քաղաքականությունն ու դիվանագիտությունը պետք է գլուխ հանեին այդ բարդությունից: Հայոց դիվանագիտության ղեկի մոտ կանգնած անձինք այն մարդիկ չէին, որ դա չհասկանային: Նրանց առջև առկա էին հետևյալ դժվարությունները.

Ա) ՀՀ չէր հակվում, չէր կարողանում մերձենալ, առավել ևս բարեկամանալ Թուրքիայի հետ, քանի որ նա արմատապես հակառակ էր ու թշնամի իր ազգային ու տարածքային նկրտումներին,

Բ) մյուս կողմից էլ ՀՀ համար հեշտ էլ չէր Անտանտի տերություններից երես դարձնել, մանավանդ, որ զուգընթաց սկսվել և օր օրի խորանալով, ավարտի եզրին էին Թուրքիայի հետ Անտանտի և նրանց հետ (ըստ էության) նաև ՀՀ տարածաշնորհ պայմանագրի կնքման բանակցությունները:

Արդեն հայոց համար իր տեսակի մեջ բացառիկ Սևրի պայմանագիրը հայ պետականության քաղաքական ջանքերը լիովին ուղղում էր դեպի նրա խոստումների ժամ առաջ, շուտափույթ իրականացումը: Ահա մի իրողություն, որը մակերեսում վերը ասված բացառիկն էր, խորքում՝ այն, որ որքան էլ անտանտյան խոստումները շռայլ լինեին ու ոգեշունչ, հայ ժողովրդի պետական այրերը պետք է դարավոր խորհրդին ունկնդրեին, չուզենալով խլել կապերը բարեկամ ռուս ժողովրդի հետ: Բարդության մի փաստ էլ եղավ Ադրբեջանի խորհրդայնացումը 1920թ. ապրիլի 28-ին: Այդպիսով, Հայաստանի թիկունքում միաժամանակ հայտնվում են Ռուսաստանի երկու նոր բարեկամ երկուսն էլ, ամեն մեկը յուրովի, Հայաստանի անկախ ազգային պետության գոյությանը թշնամական միտումներով: ՀՀ բարին սպասելու առիթ չուներ, երբ Ադրբեջանի խորհրդայնացմանը աջակցում էին ռուսական կարմիր բանակի նման զգեստավորված քեմալական զորամասերը, որոնք ներխուժում էին Նախիջևանի գավառը՝ վիճելի հռչակված և ոչ վիճելի հայոց բնամարտ տարածքները անվերապահ Ադրբեջանին բռնակցելու պահանջով:

ՀՀ կառավարությունը վերստին կանգնում է ավանդական տեսակետի վրա կապվել Ռուսաստանի հետ, նստել կլոր սեղանի շուրջ և բանակցել:

Եվ այսպես, կրկին ու կրկին դեպի Ռուսաստան: Իսկ մինչ այդ, ընդհանրացնող մի քանի խոսք:

1914-1917թթ. պատերազմի ընթացքում դաշնակից տերությունների համաձայնությամբ Ռուսաստանին վերապահված էր իր տարածքին միացնել Հայաստանի արևմտյան մարզերը: ՀՀ հեռանալով Ռուսաստանից՝ հակվում է դեպի դաշնակիցները, հույս ունենալով նրանց աջակցությամբ Հայաստանի արևմտյան տարածքները միավորելու արևելյանին, մանավանդ որ այդ միջոցին ընթացքում էր և կնքվեց սևրյան փաստաթուղթը: Դրան հակառակ, Արևմտյան Հայաստանում տիրակալող քեմալականությունը սպառնալիք է ստեղծում ՀՀ դեմ և իրեն Ռուսաստանի աջակից հռչակում, չեզոքացնում դաշնակից տերությունների հակագործողությունները և, ի վերջո, չեղյալ դարձնում Սևրի պայմանագրում Հայաստանին տարածքներ շնորհելու մասին հռչակումները և դեռ Արևելյան Հայաստանից էլ զավթելով նրա հնամենի տարածքի մի խոշոր զանգված:

Այս բոլորը այն դեպքում, երբ դաշնակից տերությունները Հայաստանին ու հայ ժողովրդին աջակցելու հայտարարություններ էին անում, իսկ ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնն էլ խոստումներ էր տալիս, հրապարակորեն ձգտելով հավաստիացնել, որ իր տերությունը ջանք է գործադրում Հայաստանի մանդատը ստանձնելու և նրա դեմ ուղղված սպառնալիքները կանխելու համար:

Վուդրո Վիլսոնը հռչակում էր, Վուդրո Վիլսոնը ցանկանում էր, բայց քարը տեղից չէր շարժում ...

Այնուամենայնիվ, կշռադատելով 1920թ. ապրիլի 30-ին հայոց կառավարությունը առանց հապաղելու պատվիրակություն է ուղարկում Մոսկվա, հետևյալ կազմով. գրող և քաղաքականագետ Լևոն Շանթ՝ ղեկավար, անդամներ՝ Լևոն Զարաֆյան և Համբարձում Տերտերյան:

Պատվիրակություն ուղարկելու գաղափարը պատկանել է Ռուսաստանի կառավարությանը: Ապա ստացվել է նրա կողմից ՀՀ անկախությունը ճանաչելու հիման վրա երկու

երկրների միջև պայմանագրական հարաբերություններ հաստատելու և «բարեկամության դաշինք կնքելու» համաձայնություն:[1]

1920թ. հունիսի առաջին օրերին սկսված բանակցությունները վարել է արտգործժողկոմ Գ.Չիչերինը, ընթացքում նաև նրա տեղակալ Լևոն Կարախանը: Գլխավոր նպատակը եղել է «բարեկամության դաշինք կնքելը»: Հայ պատվիրակները ռուս դիվանագետների առջև դրել են իրենց պահանջները և անխոտոր մնացել հետևյալ կետերի շուրջ.

1. ՀՀ անկախության և սահմանների հարցը: Պահանջվում էր, որպեսզի Ռուսաստանը ճանաչի Ղարաբաղը, Զանգեզուրը, և Նախիջևանը որպես ՀՀ անբաժան մաս,

2. Սկզբունքով ընդունելի համարել Արևմտյան Հայաստանի վերամիավորումը առկա ՀՀ-ին: Այլ կերպ ասած, նախապես ստանալ Ռուսաստանի համաձայնությունը Սևրում ակնկալվելիք վճռին: Այդ խնդրի դեմ ըմբոստանալու էր Թուրքիայում խմորված Մ. Քեմալի գլխավորած շարժումը:

Մյուս պահանջները եղել են.

1. Ռուսաստանը չպետք է միջամտի ՀՀ ներքին գործերին և կոմունիստական գործունեություն ծավալի,

2. Հյուսիսային Կովկասում և Ռուսաստանում բնակվող հայերին թույլատրի վերադառնալ հայրենիք,

3. Հատուցի պատերազմի ընթացքում արևմտահայությանը հասցված վնասները,

4. Կատարի ներանդրկովկասյան տարածքների զանազան վերաբաշխումներ:[2]

Գ.Չիչերինը, ի պատասխան նախ այն միտքն է հայտնել, որ քեմալականները բոլշևիկներին պետք են: Ասել է, թե Ռուսաստանը նրանց հետ բարեկամական կապեր է հաստատում և նրանց հետ ունի հետագա համագործակցության լուրջ խնդիրներ, որոնք առնչվում են հայ-ռուսական հարաբերությունների հետ և դրանցում կարող են նպաստավոր դեր խաղալ: Թուրքիան ուզում է իր երկրից դուրս շպրտել արև-

---

[1] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 28, թ. 107: Ս.Վրացյան, նշվ. աշխ., էջ 479:

[2] Ս.Վրացեան, Հայաստանը բոլշեւիկեան մուրճի եւ թրքական սալի միջեւ, Պէյրութ, 1953, էջ 103:

մուտքի «աշխարհակալ զավթիչներին», Ռուսաստանն էլ պատրաստ է սատար կանգնել նրան, ուստի կուզենար, որ Հայաստանը թիկունքից չխփի թուրքերին:

Ստացվում է, փաստորեն, սևրյան հարցի անուղղակի շոշափում: Եղել է նաև ուղղակին. ռուսական կողմը հայտարարել է, որ իրենց երկիրը պատրաստ է միջնորդի դեր կատարել Հայաստանի և Թուրքիայի միջև, պայմանով, որ հայոց հարցը «դուրս բերվի օգոստոսի 10-ին գումարվելիք Սևրյան խորհրդաժողովի օրակարգից»: Երևանից դուրս գալուց առաջ հայ դիվանագետների մտքով նման հարցադրում չի անցել:

Այդուհանդերձ, հունիսի 10-ին Լևոն Զառաֆյանը հուսադրող խոսք է ասել ՀՀ կառավարությանը. «Օրերս կձևակերպվի մեր միսիայի քաղաքական մասը, որի մասին կհայտնենք կիրակի օրը»:[1] Նույն ոգով հեռագրել է նաև Լ.Շանթը:[2]

Դրան հակառակ, ՀՀ կառավարությանը հղած տեղեկությունները հեռու են եղել ուրախալի լինելուց: Պատճառը ՀՀ դեմ մայիսին բռնված հեղափոխական ընդվզումներն էին: Ադրբեջանում խորհրդային կարգեր էին հաստատվել և Հայաստանը ըստ հայ կոմունիստների նրանից ետ չպիտի մնար:

Հունիսի 23-ին Լ.Շանթին Թիֆլիսից անհանգստացնող լուր է հաղորդվել. կարմիր բանակի զորամասերը հարձակում են սկսել Դիլիջանի ուղղությամբ: Իսկ հաջորդ օրը ստացված հեռագիրը Լ.Շանթին պարտավորեցրել է Մոսկվայի կառավարությունից պահանջել, որ միջոցներ գործադրվեն Ադրբեջանում դաշնակցականների նկատմամբ հալածանքները դադարեցնելու համար:[3]

Ս.Վրացյանը ևս վկայում է, որ հունիսի 10-ին Լ.Շանթը նախապես հեռագրել է Երևան, թե արդեն կազմված է կողմերի միջև դաշնագրի տեքստը և «մի երկու օրից պետք է ստորագրվի»: Բայց ըստ Ս.Վրացյանի տվյալների Բաքվից աշխատում են խանգարել դաշնագրի կնքմանը: Ադրբեջանի և բոլշևիկների պնդմամբ դաշնագրի կնքումը ձգձգվում է: Այդ

---

[1] ՀԱԱ. ֆ. 200, գ. 769-ա, թթ. 154,157:
[2] Ս.Վրացեան, նշվ. աշխ., էջեր 101, 103:
[3] ՀԱԱ. ֆ. 200, գ.1,գ.769-ա, թթ. 92-93:

ընթացքում Ադրբեջանի վարիչները ձգտում են գրավել Ղարաբաղն ու Զանգեզուրը: Ի վերջո, «Ռուսաստանը ցանկանում է իրավարար լինել հայ-թաթարական վեջը հարթելու համար: Մոսկվայի կառավարությունը պատրաստվում է թուրքահայերի խնդրում հանդես գալ Հայաստանի և Քեմալի միջև դարձյալ իրավարարի դերում: Եվ դարձյալ հայ և ադրբեջանցի բոլշևիկները միացյալ խանգարիչ դեր են կատարում:[1]

Տեղեկագիր ասվածը հայ պատվիրակների կազմածն էր, որում զիջումներ են արվել ռուսական կողմի պահանջներին և որը, եթե պատվիրակները, իրոք, Մոսկվա էին հրավիրվել ի շահ գործի, այնուամենայնիվ կարելի էր քննարկել և բանակցել, կապ հաստատել Երևանի կառավարության հետ ու խորհրդակցել, միայն թե դեպքերը չհասունանային ի վնաս հայ և ռուս հարյուրամյա բարեկամության: Բայց, փաստաթուղթը չքացել է և այլևս ասպարեզ չի եղել:

Հայ քաղաքական գործիչների բանակցությունները միաժամանակ երկու ուղղությամբ էին ընթանում. Պողոս Նուբար պատվիրակությունը Եվրոպայում Անտանտի տերությունների դռներն էր բախում, իսկ մյուսը՝ ՀՀ-ն՝ Մոսկվայում: Արևմուտքից ոգևորող լուրեր էին գալիս. շուտով, օգոստոսի 10-ին կայանալու է Ազգերի Լիգայի նիստ, որի հաստատմանն է ներկայացված Հայաստանի մասին մեծ ու խոստումնալից վճռի տեքստը: Նման պարագայում, ՀՀ կառավարությունը գերադասելի է համարում բանակցությունները Մոսկվայում ընդհատել և տեղափոխել Երևան: Հարցին հիվանդագին տեսք չտալու համար, ՀՀ կառավարությունը հրահանգում է իր պատվիրակներին վերադառնալ՝ հաշվետվությունները լսելու և հետագա անելիքը ճշտորոշելու նպատակով:

Գ.Չիչերինը ևս նույն կարծիքին է եղել: Մանավանդ, այդ ընթացքում հայ բոլշևիկների հետ մտերիմ Բ.Լեգրանը նշանակվեց Ռուսաստանի դեսպան Հայաստանում և սպասվում էր նրա ժամանումը Երևան: Գ.Չիչերինը հուլիսի 19-ին հրահանգավորեց. քանի ՀՀ պատվիրակության լիազորությունները խիստ սահմանափակ են հարցերը լուծել տեղում:[2]

---

[1] Վրացեան, Հայաստանը բոլշևիկեան մուրճի եւ սալի միջև, էջ 103:
[2] РИХИДНИ, ф. 64, оп. 2, д. 1, л. 12.

Այդ նշանակում էր, որ հայ դիվանագետները Մոսկվայում սկսածը շարունակելու էին Երևանում: Մանավանդ, Մոսկվայում գործող որոշ հայ բոլշևիկների համար ցանկալի չէր, որ Արևմուտքի հետ հույսեր կապած քաղաքական գործիչները բանակցություններ վարեին մոսկովյան կառավարության հետ: Դա վերաբերում է Ա.Միկոյանին, Ա.Նուրիջանյանին, Ս.Կասյանին, Ա.Մռավյանին, որոնք դեմ էին Չիչերին-Շանթ բանակցություններին՝ եթե մի տեղ պետք է Սևրի «անհուսալի պայմանագիր» ակնկալվեր, հանուն ինչի պետք է Մոսկվայում էլ ընդառաջում լիներ սկզբունքով:

Մինչ Մ.Քեմալի հայտարարությունը, արդեն Բաքվում իրենց գործն էին կատարում նրա զինված ընդհատակյա գործակալները: Այդ փաստը անգամ հարկ եղավ որպես հեղափոխական դաշինքի բացառիկ նմուշ նշելու խորհուրդների 8-րդ համագումարում, Ռուսաստանի արտգործժողկոմատի 1920թ. տարեկան հաշվետվության մեջ. Քեմալի կողմնակիցները «աջակցել են հեղաշրջմանը և հեղափոխական Ադրբեջանի կառավարության կողմից ռուսական կարմիր զորքերի հրավիրմանը»:[1]

Ժամանակի տեսադաշտից դուրս, դեպքերի խորքում, այլ խմորումներ են եղել: 1920թ. ապրիլի 26-ին Մ.Քեմալը նամակ է հղել Լենինին՝ Անկարայում Թուրքիայի նոր իշխանության հաստատման և նրա հեռուն տանող խնդիրների մասին: Դրանում Հայաստանը հռչակվում է «իմպերիալիստական, որի դեմ «Թուրքիայի կառավարությունը իր վրա է վերցնում ռազմական գործողությունները»: Դրա և այդ շարքում ծրագրվող այլ գործողությունների նպատակով Մ.Քեմալը՝ որպես առաջին օգնություն, պահանջում է 5 միլիոն թուրքական ոսկե լիրա, մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Նամակի վերջում Ռուսաստանի ու նրա ղեկավար Լենինի նկատմամբ թուրքական պետության «խորին ակնածանքի և ամենաանկեղծ զգացմունքների» հավաստիացումն է: Այս նամակը Վ.Լենինին հանձնվել է 1920թ. հունիսի սկզբին: Ավելի վաղ՝ մայիսի սկզբին, արտգործժողկոմատի հետ կապերի հաստատման գործերով Մոսկվա է եկած եղել հայտնի երիտ-

---

[1] Документы внешней политики СССР, т. 2, с. 724.

թուրքական գործիչ Խալիլ Փաշան: Նա նույնպես Մոսկվայում զենքի ու դրամական օգնության պահանջ է ներկայացրել՝ խնդրելով, որ «Ռուսաստանը ապահովի Թուրքիայի ազգային շարժման թիկունքը Կովկասում»: Դրան ի պատասխան՝ Կովկասյան ռազմաճակատի ռազմհեղկոմի անդամ Գ.Օրջոնիկիձեն Բաքվից Մոսկվա Վ.Լենինին և Գ.Չիչերինին հայտնել է այն օգնության մասին, որը կարող էր ցույց տրվել թուրք հայրենասերներին»:[1] Դա մի կողմից ռուսաց պետությանը դաշինքի առաջարկ էր, մյուս կողմից՝ համատեղ ռազմական գործողությունների պարտավորության ստանձնում. «Մենք պարտք ենք ստանձնում, մեր ամբողջ աշխատանքը և մեր բոլոր ռազմական գործողությունները միավորել Ռուսաստանյան բոլշևիզմի հետ, որոնց նպատակը պայքարն է իմպերիալիստական կառավարությունների դեմ, և նրանց իշխանությունից բոլոր ճնշվածների ազատագրումը»: Սա ընդհանուր հարցադրումն է, բայց կար նաև ուղղակի հասցեադրում, որը ինչպես ասվեց վերևում, Թուրքիայի կառավարությունը իր վրա է վերցնում ռազմական գործողություններ Հայաստանի դեմ: Այդ ամենի դիմաց Մ.Քեմալը պարտավորվում էր «...ստիպելու Ադրբեջանի հանրապետությանը, որ մտնի խորհրդային հանրապետությունների շարքը»:[2] Հետո ոսկու, զենքի և զինամթերքի պահանջն է և դրա կատարումը Մոսկվայում, իսկ բուն Բաքվում էլ ապրիլի 28-ին Ադրբեջանը խորհրդային հռչակելը որպես բացառիկ դեպք... հեղափոխական հապճեպություն պատմության մեջ: Մ.Քեմալը լրացուցիչ հայտարարեց, որ Թուրքիայի նոր պետությունը իր տարածքի հաշվին Հայաստան ստեղծելու մասին չի ճանաչելու որևէ համաձայնագիր:[3] Եվ այս բոլորը այն դեպքում, երբ նա հայտարարում էր, որ այդ պետության փոքրամասնությունների համար ճանաչելու են այն իրավունքները, որպիսին կիրառվում է Եվրոպայում, ամենից ավելի ազատ կարգեր ունեցող երկրների փոքրամասնությունների համար:[4]

---

[1] А.Хейфец, указ. соч., с. 109
[2] АВП РФ, ф. 132, оп. 3, д. 1, л. 10. А.Хейфец, указ. соч., с. 107.
[3] М.Кемал. Путь новой Турции, т. III, с. 409.
[4] ДВП СССР, т. II, с. 555.

Մ.Քեմալի նամակը, թեև ճանապարհի բարդությունների պատճառով, բավական ուշ է տեղ հասել, արդեն հայ-ռուս բանակցությունների ժամանակ այն հայտնի էր: Պատասխանը, որը հունիսի 3-ին գրել է Գ.Չիչերինը՝ գոհունակության խոսք է, քանի որ Թուրքիայի ազգային մեծ ժողովը նաև «ընդունում է որոշում, որով Թուրքահայաստանին տրվում է սեփական ճակատագիրը որոշելու իրավունք»: Նա ընդգծում է, որ երկրի համապատասխան վայրերում անց է կացվելու հանրաքվե, գաղթականների և վտարանդիների մասնակցությամբ, «որոնք անցյալում հարկադրված են եղել իրենց հայրենիքը թողնել, հեռանալ իրենցից անկախ պատճառներով, և որոնք պետք է վերադարձվեն հայրենիք»: Այդ պարտավորությունը հիացրել է Չիչերինին: Նա հույս է հայտնել, որ դիվանագիտական ճանապարհով հնարավոր է լինելու Թուրքիայի և Հայաստանի ու Պարսկաստանի միջև ճշտորոշ սահմանագծեր հաստատել: Խորհրդային կառավարությունը պատրաստակամություն հայտնեց այդ վերամիավորումներում կատարել միջնորդի դեր: Հաճելի և հուսադրող բաներ են: Չիչերինը դրա համար դիտողության արժանի չէ: Սակայն, ի՞նչ ասել, որ նույն խորհրդային կառավարությունը, ուր որ է, մեղմ ասած, համբերատար ուշադրությամբ, հետևելու է հայոց ողբերգությանը, որի գլխավոր հեղինակի դերում հանդես է գալու դարձյալ նույն այդ մեծախոստում Քեմալ Մուստաֆան: Նրա նամակը Մոսկվա ուղարկելուց հետո, 1920թ. մայիսի 11-ին, Անկարայից Սվազով ճանապարհվեց և հուլիսի 19-ին Մոսկվա հասավ Թուրքիայի արտգործնախարար Բեքիր Սամի բեյը: ՀՀ պատվիրակությունը Երևան ճանապարհվեց հուլիսի վերջին և նրանք 12 օր Մոսկվայում եղել են նույն օրերին:

Թուրք պատվիրակության կազմը կանխամտածված կերպով քաղաքականացված է. արտգործնախարար Բեքիր Սամի բեյ, էկոնոմիկայի նախարար Յուսուֆ Քեմալ բեյ, պատգամավոր Օսման բեյ, պատվիրակության խորհրդականներ դոկտոր Իբրահիմ Թալի բեյ, գլխավոր շտաբի գնդապետ Սեֆի բեյ, նաև կոմունիստ Ֆուադ Սաբիթ և ուրիշներ:[1]

---

[1] А.Шамсудинов, Национально-освободительная борьба в Турции, 1918-1923, Москва, 1966, сс. 178-179.

Նկատենք, որ պատվիրակության անդամները ճանապարհին նախ կանգ են առել Բաքվում: Նորաստեղծ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարների հետ մշակվել է միասնական դիրքորոշում. դատապարտել Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստանին տարածքներ միավորելու պահանջը և Մոսկվային համոզել, որ Արցախն ու Նախիջևանը ի սկզբանե եղել են ադրբեջանական: Այդ նպատակով էլ Ադրբեջանի կառավարությունը Մոսկվա է ուղարկել իր ներկայացուցիչներին՝ Բ.Շահթախտինսկու ղեկավարությամբ:[1]

Մի քանի օր քաղաքը դիտելուց հետո, 1920թ. հունիսի 24-ին, թուրք պատվիրակները այցելել են Գ.Չիչերինին, որի հետ մինչ այդ հանդիպել էին Ջեմալ և Խալիլ փաշաները: Գ.Չիչերինը հայտնում է, որ «հիմնական խնդիրներին տեղյակ է, մնում է ճշտել մանրամասնությունները»: Փաստորեն, բանակցությունները պետք է գնային հօգուտ «նեղն ընկած» Թուրքիայի: Գ.Չիչերինի հետ առաջին իսկ հանդիպումից հետո Բեքիր Սամին հեռագրել է Անկարա, որ ընդունելությունը եղել է ջերմ, և բոլշևիկները խոստացել են նկատի ունենալ Թուրքիայի տեսակետը:[2]

Նույն օրը գիշերը հանդիպում է եղել Գ.Չիչերինի տեղակալ Լ.Կարախանի հետ: Հուշագիրը նկատում է, որ այստեղ ավելի նուրբ հարցեր են քննարկվել՝ Հայաստանի վրայով դեպի Թուրքիա տանող ճանապարհը բացելու, զենք ու պիտույք արագորեն Անատոլիա փոխադրելու մասին: Կարախանը հավաստիացրել է, որ առաջիկայում փոխանցվելու է «25 փութ ոսկի, 4-ական թնդանոթ, 2 մարտկոցով, 6000 հրացան և առատ ռազմամթերք»: Պարզ երևում է, որ այս հարցերը նախապես համաձայնեցվել են Մոսկվա եկած Խալիլ փաշայի հետ: Ըստ որում, թուրքական կողմին վաղօրոք, իբր «հրաման է եղել, որ ի նպաստ Ադրբեջանի գրավվեն Նախիջևանի, Ալագյազի և Զանգեզուրի շրջանները»: Ահա՛ թե ինչ: Բայց դա, ի միջայլոց, ըստ այս հուշագրքի, իբր թե Հայաս-

---

[1] Ю.Багиров, Из истории советско-турецких отношений 1920-1922гг., Баку, 1965, с. 38.

[2] Ըստ 1921թ. նոյեմբերի 21-ին Մոսկվայում դեսպան նշանակված Ալի Ֆուադ Ջեբեսոյի «Մոսկովյան հուշերի»:

տանից գաղտնի չի եղել: Կարախանը սա հայտնել է այն ժամանակ, երբ հայ պատվիրակությունը դեռ գտնվել է Մոսկվայում և նշված թուրք փաշաները նրանց հետ էին վերադառնալու: Իբրև թե մի գաղտնիք էլ է բացում Լ.Կարախանը: Թուրքերին նա որոշակի հավելումով շռայլորեն տեղեկացնում է. «Եթե Հայաստանը հարձակվի Օլթիի վրա, դա պատճառ պիտի դառնա, որ խորհրդային կառավարությունը խիստ քաղաքականություն որդեգրի»:[1] Այսինքն, ուժի դիմի Հայաստանի դեմ ոչ ավել, ոչ պակաս: Ըստ Ալի Ֆուադի Ռուսաստանի կողմից Լ.Կարախանը «հավաստիքներ է տալիս», որ խորհրդային կողմից «հրաման է տրված, որպեսզի ի նպաստ Ադրբեջանի գրավվեն Ղարաբաղի, Նախիջևանի, Ալագյազի և Զանգեզուրի շրջանները»:

Փակ դռներում եղած-չեղած բանակցություններ են, որոնք ոչ այնքան Լ.Կարախանի անհավանական խոսքերն են, որքան թուրք հուշագրի մոլեգին ցանկությունը: Ստորև կտեսնենք, որ նույն այդ ժամանակ եղել են հայ-ռուսական բանակցություններ, որոնց վճիռները տրամագծորեն հակառակ են Ալի Ֆուադի եզրակացությանը:

Ինչ վերաբերում է Օլթիին, ապա հարցը հետևյալն է: Այն Հայաստան-Թուրքիա պետական սահմանագլխին գտնվող քաղաք է, որի պատկանելիությունը տասնամյակներ շարունակ վեճի առարկա է եղել: Հայերը վաղ ժամանակներից ի վեր օգտվել են Օլթիի աղահանքերից, որպես սեփականություն: Այդ հետո է հարցը վիճելի դարձել: Երբ թուրքերը նվաճել են Հայաստանի արևմտյան հողերը՝ Օլթին էլ հայտնվել, կիսվել է վիճելի սահմանագծի վրա: Փաստորեն, նրա աղահանքերն ու ածխահանքերը հարևան երկու կողմերն էլ օգտագործել են: Ըստ Ալի Ֆուադի իբր թե Կարախանը ասել է. «Պատերազմ չուզենալով հանդերձ Հայաստանի դեմ պատրաստություններ ենք տեսնում: ... Դրա համար էլ մենք ձեռքի տակ փաստեր ունենք»: Դժվար է հավատալ: Ուրիշ բան, որ և Լ.Կարախանը և Գ.Չիչերինը կարող էին թուրք պատվիրակներին ասել ու հավաստիացնել, որ «մինչև այս ամսվա (օգոստոս - Հ.Կ.) վերջը ճամփա պիտի բացվի», ավելացնելով, որ

[1] Լազյան Գ., Հայաստան և հայ դատը, Երևան, 1992, էջ 250-251:

«խնդիրը գաղտնիք պետք է մնա. միայն ձեր կառավարությանը հայտնեցեք»: Իսկ ընդհանուր առմամբ Ալի Ֆուադը մեղմ ասած, հորինում է և դրանում ինքն էլ հավաստիացնում ընթերցողին տողերի արանքում հետևյալ կերպ: Գ.Չիչերինը օգոստոսի 13-ին կրկին ընդունել է Բեքիր Սամի բեյի պատվիրակությանը և ուղղակի առաջարկել. «Նախկին հարևան սահմաններից՝ Բիթլիսից, Վանից և Մուշից մաս տալ Հայաստանին, որը չի կարողանում հանգիստ շունչ քաշել»: Զայրացած թուրք պատվիրակությունը մի ֆրազ է բաց թողնում. «Թուրքիո մեջ երբեք հայկական նահանգ չի եղել»: Ըստ այդմ, նա չարանենգ դատողություն է անում. իբրև թե ռուսները թուրքերին պատկանող հողերի հաշվին «սակարկություններ են անում ի նպաստ Հայաստանի, որպեսզի հետագայում կուլ տան նրան»:[1]

Ակնհայտ է, որ Ռուսաստանը կցանկանար, որպեսզի Հայաստանը իր դաշնակիցը լիներ և հնարավորին չափ սերտ: Ըստ հրապարակված տեղեկությունների, քեմալականները 1920թ. ապրիլի 23-ից* ու 28-ից** վաղ էին վխտում ամենուր և ջանք գործադրում Ադրբեջանը խմորվող նոր Թուրքիայի հետ բարեկամ ու խորհրդային դարձնելու համար: Այդ էր, որ նրանց համարձակություն էր ներշնչում Վ.Լենինից զենք ու ռազմամթերք պահանջելու: Այդ գործողություններին օժանդակել է Ռազմհեղխորհրդի անդամ Գ.Օրջոնիկիձեն: Իսկ Մ.Քեմալը դեռևս 1920թ. հուլիսի 8-ին Թուրքիայի ազգային մեծ ժողովի նիստում հայտարարել է. «Խորհրդային հանրապետությունը խոստացել է մեզ ամեն տեսակի նյութական աջակցություն ցույց տալ, այն է՝ հրացան, թնդանոթ և փող»: Մոսկվայում ստացած 200, 6կգ ծուլածո ոսկին սեպտեմբերին հանձնվել է Երզրումում գտնվող պաշտոնական ներկայացուցիչներին: Դա այլևս բոլորովին ուրիշ ժամանակ էր:

* *
*

---

[1] Գ.Լազյան, նշվ. աշխ., էջեր 251-253:

* Քեմալի իշխանության գլուխ գալուց:

** Ադրբեջանում խորհրդային իշխանության հռչակվելուց:

1920թ. հունիսին Անտանտի տերությունների հրամանով և աջակցությամբ հունական զորքերը հարձակման էին անցել թուրքական ուժերի դեմ:

Քեմալական Թուրքիան անհանգիստ և անհագուրդ մոլուցքի մեջ էր: Հունական բանակը Է.Վենիզելոսի ջանքերով և Անգլիայի աջակցությամբ թուրքական բանակին մինչև օգոստոսի կեսերը ջարդում էր ու ետ մղում: Այդուհանդերձ, թուրքերին հաջողվում է այդ ճակատում կռիվը դադարեցնել: Ավելի ճիշտ հետաձգել, մինչև գալիք հարմար պահը, որովհետև առջևում ուրիշ ճակատ էր նա ծրագրում, որի համար արդեն քայլեր էին կատարվում: 1920թ. օգոստոսի 7-ին Ռոստով էր ժամանել Քեմալի Ռուսաստան գործուղած պատվիրակությունը, որը ռազմաճակատի հեղափոխական խորհրդից հրացան, գնդացիր և թնդանոթ ստանալու հայտ էր բերել. ասել է, թե մի ճակատում, որը Թուրքիան էր, և որտեղ նա պարտվում էր, նա իր գործողությունները մտածված ձևով հետաձգում է, գերադասելով առ այժմ մյուսը սկսելը: Եվ դա հայկականն էր լինելու, որի համար նա արդեն ջանք էր գործադրում և պատվիրակներ էր ուղարկել Մոսկվա: Սա միատեղ վերցրած այն էր, ինչը քաղաքականություն է կոչվում, թեև խոր ու թաքստոցային, բայց ոչ ընդհանրապես անըմբռնելի ու անկռահելի: Ռուսաստանասեր հայ ժողովրդի համար հեշտ չէր ամենաչնչին տարակուսանքն անգամ, ինչի կարիք չկար, քանի որ Ռուսաստանը ընդառաջ չէր գնում թուրքական կողմին: Այս այն դեպքն էր, երբ հայոց դիվանագիտությունը պետք է ավելի քան ճկուն լիներ, հեռատես: Թեև շատ հեռատես լինելու կարիք էլ չկար, քանի որ խմորվող դեպքերը մոտ էին: Քաղաքականությունը միշտ և բոլորի համար երկսայր սուր է, երկբևեռ կողմնորոշիչ ու բազմաբևեռ կողմնացույց: Նայած, որը կնախընտրես և ինչու՞:

Մոսկովյան բանակցություններին մասնակցած Հ.Տերտերյանը հուշերում վիճակի բարդությունն ըմբռնելու և բարդության հետ մեկտեղ ելքի հնարավոր ուղիներ է նշմարում. Գ.Չիչերինը խոստովանել է, որ Ռուսաստանը հայ պատվիրակներին Մոսկվա է հրավիրել, որպեսզի միջնորդի դեր կատարի և «հաշտեցնի տաճիկների հետ»: Որպես այդ բոլորի կարևոր երաշխիք՝ Գ.Չիչերինը համարում է սևրյան պայմա-

նագրից հայության հրաժարումը: Բայց դա ոչ թե անշրջանցելի ճշմարտություն է և անհրաժեշտություն, այլ դեպքերի և ուժերի հարաբերակցության արտահայտություն:

Այդուհանդերձ, Ռուսաստանը, ըստ ժամանակի ու հնարավորության, ջուշադիր և հոգատար է եղել հայ ժողովրդի ու նրա պետականության ձևի նկատմամբ:

Տարածքային և այլ հարցերում մոսկովյան բանակցությունները մնացել են մեռյալ կետի վրա: Այդ ընթացքում Ադրբեջանն էլ իր հերթին շարունակել է պնդել, որ Ղարաբաղը միացվի իրեն, իսկ Զանգեզուրը մնա վիճելի: Հայաստանը, բնականաբար, չի համաձայնվել, գտնելով, որ այդ հարցը կարող է քննարկվել միայն տեղում՝ հայկական կառավարության հետ անմիջապես բանակցությունների միջոցով:

* *
*

Վաղ թե ուշ նորաստեղծ ՀՀ պետք է որ հայ ժողովրդի կամքին ու պահանջին համապատասխան պատշաճ կապ հաստատեր Ռուսաստանի հետ: Որպես այդ համազգային ցանկության իրականացում, տվյալ հարցադրումը համապատասխան հղումով կատարեցին Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերի բնակիչները, պահանջ դնելով, որ կապեր հաստատվեն Հայաստանի և Ռուսաստանի միջև: Այդ ցանկությունը առաջ է քաշվել դեռևս Խորհուրդների համառուսաստանյան 3-րդ համագումարում 1918թ. հունվարին: Իսկ արդեն 1920թ. մայիսին ՀՀ կառավարությունը Ռուսաստանից ստացել է առաջարկ միմյանց անկախության և ինքնուրույնության ճանաչումը պաշտոնապես հռչակելու մասին: Ըստ այդմ, նրանց միջև հաստատվելու էին պայմանագրային հարաբերություններ: Վերը նշված քայլը հայոց պատմության կարևոր էջերից մեկն է, որը խմորվում էր զուգընթաց այն իրավիճակին, որ հայ քաղաքական ուժերը առաջ էին քաշում Արևմտյան Հայաստանի տարածքները ազատագրելու և ամբողջական Հայաստան ձևավորելու համար: Դեպքերի զարգացման այս փուլում հարցադրումը վերաբերվել է ՀՀ անկախությունը Ռուսաստանի կողմից ճանաչելուն և այդ մասին ի լուր ամենքի հռչակմանը: Դիվանագիտական փաստաթղթե-

ում պահպանվում է 1920թ. հունիսի սկզբին Գ.Չիչերինի կարծիքն այն մասին, որ «խոսք չի կարող լինել Հայաստան խորհրդային իշխանություն մտցնելու մասին» (դրական իմաստով) և, որ ծայրաստիճան աղքատության մեջ գտնվող հայ ժողովրդին փրկություն և բարօրություն կարող է լիել նրա պետական քաղաքական ինքնուրույնությունը:[1] Այդ տեսակետը հետագայում վերաճեց Հայաստանի խորհրդային հանրապետության հռչակմանը: Հավատանք, որ ժամանակը միշտ էլ համբերատար է եղել ճշտորոշման հարցում:

Միջանկյալ այդ ժամանակամիջոցում Հայաստանի անկախության դեմ որոգայթներ էր լարում վաղ խորհրդայնացված Ադրբեջանը: Վերջինս արտահայտվում էր բնարմատ հայկական տարածքներ զավթելու ոտնձգություններով և այդ մասին Մոսկվային օգնության հրավիրելու հավակնությամբ: Այս փաստերի մասին 1920թ. հունիսի 29-ին Գ.Չիչերինը պարտք է համարել տեղեկացնելու Վ.Լենինին և հայտնելու նաև, որ Ադրբեջանի ղեկավար Ն.Նարիմանովը հեռագրեր է հղում հապճեպորեն Հայաստանը խորհրդայնացնելու պահանջով, հավանաբար հուսալով այդ ձևով ևս նոր տարածքներ կորզել Հայաստանից: Գ.Չիչերինը դա որակում է «ծայրագույն հանցագործություն», որը զուգակցվում է հայերի ու Հայաստանի դեմ թաթարական զինված ուժերի հարձակումներով: Նա դա համարում է խստորեն դատապարտելի: Եվ առավել ևս այն պատճառով, որ Ադրբեջանը փորձել է նաև զավթողական այդ գործողությունները կատարել «ռուսական զորամասերի ձեռքերով»: Հայաստանի դեմ ադրբեջանական այդ ահաբեկչությունը նա որակում է այն ժամանակի համար թերևս ամենադատապարտելի բառերով՝ «անուղղելի հարված կոմունիզմի գործին»: Եվ նա Վ.Լենինին տեղեկացնում է, որ Ռուսաստանի ռազմահեղափոխական խորհուրդը վճռականապես դեմ է նման գործողությունների, և գտնում, որ պետք է անհապաղ պայմանագիր կնքել Հայաստանի հետ, բնականաբար, նման գործողությունները կասեցնելու նպատակով: Միաժամանակ, նա անդրադառնում է Թուրքիային

---

[1] Այդ մասին կառավարության հաղորդումը տես - ՀԱԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 107: Նաև՝ ԲՀԱ, N 3, 1967, էջ 35-36:

զենք տալու փաստին և գտնում է, որ դա պետք է լրջորեն կշռադատվի, որովհետև այդ զենքը վաղը կարող է ուղղվել, ինչպես գրված է՝ «ուղղակի, թե անուղղակի մեր դեմ»: Փաստերի համադրումը պարզ ու որոշակի ցույց է տալիս, որ Ալի Ֆուադի գրքից Գ.Լազյանի մեջբերումները բացահայտ թուրքական նենգափոխություններ են, որոնց կեղծիքը քննադատելու փոխարեն, դրանք բերվում են ուղղակի Ռուսաստանի նկատմամբ անարժան հակակրանք արտահայտելու համար: Եվ նույն տեղում էլ հիշատակվում է Բաքվի բոլշևիկ գործիչներից Բ.Լեգրանի անունը, ընդգծելով, որ նա գործից մի կողմ չպետք է մնա, պետք է «աշխատանքի ներգրավվի Երևանում, որից հետո գործի կընդգրկվի իրադրությունն իմանալուն համապատասխան»,[1] Բ.Լեգրանը իրեն դրսևորել էր ուղղամիտ գործարարության տեսակետից:

1920թ. հունիսի 29-ին, իր վերը նշված հղմանը զուգընթաց, Գ.Չիչերինը հեռագիր է հղել Երևան. «Հայաստանի Հանրապետությունում Մոսկվայի լիազոր ներկայացուցիչ է նշանակվել ընկեր Լեգրանը, որի խնդիրը խորհրդային հանրապետության և ՀՀ միջև բարիդրացիական հարաբերությունների հաստատումն է, բոլոր վիճելի հարցերի կարգավորումը, տարակարծությունների հարթումը և երկու հանրապետությունների միջև վերջնականապես հաշտության ամրապնդումը»: Տեղեկացվում է, որ առաջիկա օրերին Բ.Լեգրանի պատվիրակությունը կճանապարհվի Երևան: Հույս հայտնվեց, որ պատվիրակության աշխատանքը երկուսի համար էլ կլինի նպաստավոր և արդյունավետ: Նպատակահարմար է գտնվել, որ «Ռուսաստանի և Հայաստանի միջև պայմանագրի վերջնական մշակումը կայանա Երևանում՝ Ռուսաստանի պատվիրակության և ՀՀ կառավարության միջև»: Հուլիսի 1-ին Գ.Չիչերինին պատասխանեց Հ.Օհանջանյանը: Ողջունել է առաջարկը: Ցանկալի է գտել, որ նախապես լինեն զեկույցների փոխանակումներ և Մոսկվայի հետ հեռակապի հնարավորություն՝ Ռոստով-Թիֆլիս գծով:[2]

---

[1] Նախիջևան-Շարուրը 1918-1921թթ.: Փաստաթղթեր և նյութեր. ԲՀԱ, թ. 1-2, 1993, էջեր 223-227:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 117: ԲՀԱ, թ. 3-4, 1967, էջեր 37-38:

Դեռևս Մոսկվայում գտնվող Լ.Շանթը կապի մեջ է եղել Լ.Կարախանի հետ: Նրա հետ հանդիպումից հետո Լ.Շանթը հուլիսի 8-ին հաղորդեց Երևան, որ Բ.Լեգրանի ժամանումից հետո էլ, ինչպես հայտնել է Լ.Կարախանը, շարունակելու է Մոսկվայի ուղղակի կապը Երևանի հետ: Իսկ եթե ինքը Մոսկվայում հարցերի լուծման չհանգի, այդ գործը Երևանում շարունակելու է Բ.Լեգրանը:

Լ.Շանթը արևմտահայ կերպար է. խստապահանջ Ռուսաստանի նկատմամբ. պարզ և ուղղակի: Մանավանդ, որ նկատել է թե ինչպես «Լեգրանը իր հետ մեծ քանակությամբ բոլշևիկյան գրականություն է տեղափոխում, որի դեմ ինքը բողոքել է և պահանջել, որ գրքերը թողնվեն Բաքվում»: Ի վերջո, նրա խոսքը եղել է. «Ամենայն վճռականությամբ արգելեցեք ամեն մի պրոպագանդա. նրանք տեղի են տալիս միայն կամքի ու վճռականության դիմաց»: Մինչդեռ, Գ.Չիչերինը կատարյալ դիվանագետ էր: Նրա բառերն են. «Կովկասում Խորհրդային Ռուսաստանի բոլոր գործողությունների նպատակը հայ ժողովրդի հետագա խաղաղ զարգացմանը բարեկամաբար աջակցելն է: Հետևապես, բոլոր վիճելի հարցերը, որոնք եղել են Հայաստանի և մյուս Անդրկովկասյան երկրների ու նաև Թուրքիայի և Հայաստանի միջև, պետք է լուծվեն միայն խաղաղ բանակցությունների միջոցով. հավաստիացնում է և հռչակում Գ.Չիչերինը»:[1]

Նկատենք, սակայն, որ Գ.Չիչերինի ջերմագին հավաստիացման օրը, հուլիսի 19-ին, Հ.Օհանջանյանը խնդրել է Լ.Շանթին Լ.Կարախանին հայտնելու, որ Բ.Լեգրանին Հայաստանը ընդունի «ոչ թե որպես դեսպանի, այլ որպես պատվիրակության, որը գալիս է Հայաստանի հետ հաշտություն կնքելու մասին բանակցություններ վարելու»: Այլ կերպ, նա առաջնությունը տվեց բանակցությանը՝ նրա արդյունքներով հանդերձ, որին, բնականաբար, կհաջորդեն այլ գործողություններ: Գ.Չիչերինը լրացուցիչ տեղեկացրեց, որ ՀՀ «պատվիրակությունը պետք է լինի փոքրակազմ, և իր այդ կազմով կընդունվի միայն այն դեպքում, եթե միսիան կավարտվի ոչնչով և կվերադառնա Երևան»:

---

[1] ԲՀԱ, թ. 3-4, 1967, էջեր 38-40:

Հուլիսի կեսերին Բ.Լեգրանը իր գլխավորած պատվիրակությամբ ճանապարհվել է Բաքու, այնտեղից Թիֆլիսով Երևան գալու և տեղում խնդիրների կատարմանը ձեռնամուխ լինելու: Ամսի 24-ից մեկ երկու օր անց, նրա պատվիրակության գնացքը կանգ է առել Աղստաֆա կայարանում: Հուլիսի 28-ին Վ.Լենինը ստորագրել է Բ.Լեգրանին տված «արտակարգ լիազորագիր»-ը որում ասվում էր, որ նա «Ռուսաստանի կողմից նշանակված է բանակցություններ վարելու ՀՀ կառավարության հետ՝ զինադադարի և խաղաղության դաշնագիր կնքելու համար»[1]: Այդուհանդերձ, նկատենք, որ դեռ հունիսի 29-ին Գ.Չիչերինը Վ.Լենինին հայտնում էր, որ պետք է արագացնել Բ.Լեգրանի պատվիրակության առաքումը Հայաստան: «Ներկայումս, - գրել է նա, գլխավորը այն է, որ մեր ներկայացուցիչները որքան կարելի է շուտ տեղ հասնեն»[2]: Իսկ, երբ Բ.Լեգրանի դեսպան նշանակվելը ստորագրված էր, հուլիսի 29-ին, նույն օրը, Ռոստովի հեռախոսագծով նրա երթի մասին տեղեկացվել է Հ.Օհանջանյանին՝ խնդրելով մուտքի թույլտվություն դեպի Երևան: Այդ մասին հայտնվել է նաև Լ.Շանթին, որը նույնպես պետք է վերադառնար Երևան: Սակայն, Հայաստանի պահանջին հակառակ, Ադրբեջանի իշխանությունները փակում են Բ.Լեգրանի մուտքը Երևան: Եվ նա այդպես էլ կանգ է առնում սահմանամերձ Աղստաֆա կայարանում: Փակման պատճառաբանությունը այն էր, թե Հայաստանը դեռ պայմանագիր չի ստորագրել Ռուսաստանի հետ, և դեռ Հայաստանի և նրա միջև պաշտոնապես չէին հաստատվել դիվանագիտական հարաբերություններ: Եվ մյուսը, թե՝ Հայաստանը Ադրբեջանի ու Թուրքիայի հանդեպ կիրառում է բոլոր տեսակի թշնամական գործողություններ:[3]

Բ.Լեգրանը աղստաֆյան իր հեռավորությունից առնչվել է հայաստանյան իրադարձություններին: Շուտով նա հանգամանալից հեռագիր հղեց Գ.Չիչերինին և Գ.Օրջոնիկիձեին: Հանդիմանելով հայ զինվորականներին՝ որոնք թուրքերի դեմ Զանգիբասարի և Նախիջևանի շրջաններում պաշտ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 612, թ. 1: ԲՀԱ, թ. 3, 1967, էջ 32:
[2] ԲՀԱ, թ. 1-2, 1993, էջ 227:
[3] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 1, лл. 11, 18.

պանական կռիվներ են մղել, նա գլխավոր մեղավորը համարել է թուրքական զորամասերին, որոնք անխնա կոտորում էին անզեն հայ բնակչությանը: Նույնն է եղել նաև Օլթիում. թուրքական զորամասերի մահասփյուռ գործողություններ և լիակատար անուշադրություն ՀՀ հղած բողոքներին: Նման լարվածության պայմաններում Բ.Լեգրանը պահանջեց, որ դադարեցվեն Լ.Շանթի բանակցությունները Մոսկվայում, խնդիր դնելով, որ հարցերը լուծվեն տեղում: Սա այն դեպքում, երբ դեռևս Հայաստան մուտք չէր տրված: Սկզբում դա արվում էր, քանի դեռ տերությունները սևրյան վճիռը չէին կայացրել և որոշ ժամանակ մուտք տալը քաշքշվեց նաև օգոստոսի 10-ի ստորագրումից հետո: Նման պայմաններում թուրքերը ավելի հանդուգն են դարձել և վճռական: Նրանք ինքնագլուխ կերպով, առանց որևէ տեղեկացման, մտնում են Նախիջևան: ՀՀ զինված ուժերը իմանալով այդ մասին պատրաստվում են ինքնապաշտպանության: Վերջինիս մասին Ռուսաստանի ներկայացուցիչները անհապաղ հայտնում են Գ.Չիչերինին և խնդիր դնում, որ խորհրդային կառավարությունը հրաժարվի ռազմական գործողությունների մտքից: Եվ կրկին փայլատակում է Գ.Չիչերինի սթափ միտքը. «Ռազմական գործողությունները դադարեցնելը այնքան էլ հեշտ չէ, քանի որ չի կարելի կապել մեկի ձեռքերը, երբ մյուսը նրա վրա հարձակվում է, իսկ այժմ ամեն ինչ նման դրության մեջ է գտնվում Անդրկովկասում տիրող քաոսում»:[1]

Այդ պատճառով է, ահա, որ, որպես առաջին խնդիր Գ.Չիչերինը անհրաժեշտ է գտել, որ Բ.Լեգրանը մեկնի Երևան և տեղում զբաղվի հարցերի քննարկմամբ: Միևնույն ժամանակ նա հարմար չի գտնում, որ Լ.Շանթը տեղ հասնի: Հավանաբար, տեսնելով Լ.Շանթի համաձայնությունը, նա բավական է համարում, որ բանակցությունները տեղափոխվեն, առանց սպասելու Մոսկվայից Լ.Շանթի Երևան վերադարձին: Այդ դեպքում, հայտնում է Գ.Չիչերինը. «Շանթն ինքը կուզենա գալ Երևան, որի մասին նա արդեն ակնարկել է»: Բայց Լ.Շանթն էլ հասնում է Ռոստով, մնալով այնտեղ մինչև օգոստոսի 10-ի սևրյան արարողությունը: Ապա, Գ.Չիչերինը իր

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 1, лл. 23-24.

խոսքը ավարտում է հստակ պատասխան տալով պահի ամենահուզիչ հարցին. «Թուրքերը, վերցնելով Նախիջևանը, այնտեղ խորհրդային իշխանություն են մտցրել և առաջարկում են, որ մեր զորքերը դուրս գան այնտեղից: Նախիջևանը գրավելու մասին մեր հրամանը վաղուց տրված է մեր զորքերին, ես արդեն հայտնել եմ, բայց ընդհանրապես թուրքերի գործը չէ որոշել, թե մենք ուր ենք գնալու և որքան»:

Անձամբ զուտ չիչերինյան դիվանագիտությունը հարգալից է հայոց պետության նկատմամբ և ՀՀ հետ հարաբերվում է ինչպես անկախ մի երկիրը մյուսի հետ: Ուրիշ բան, որ Ռուսաստանի արտաքին քաղաքական կարևորագույն հարցերը լուծում էր քաղաքական այն մարմինը, որը ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրո էր կոչվում և որի կովկասյան հարցերի լուծման վերակացուն Ի.Զուղաշվիլի-Ստալինն էր:

Թուրքիայում բարձրագոչ ուժերն էլ իրենց հերթին հենարաններ էին որոնում և միջոցներ նախապատրաստում «Սևրի ծնունդը չեղյալ հայտարարելու համար»:

Ոմանք ուզում էին կառուցել, երբ մյուսները գործի էին դրել քանդիչ պտուտակը:

*

* *

Հայաստանի նկատմամբ ռուսական քաղաքականությունը դեպքերի ընթացքով էր խմորվում: Կովկասյան ճակատի Ռազմահեղափոխական խորհուրդը 1920թ. նախապես համբերատար է եղել, երկրամասում իր դիրքորոշումը իրականացնող Ն.Նարիմանովին, Ս.Կիրովին, Բ.Լեգրանին և Շ.Էլիավայիին հղելով իր մոտեցումը. «Ռուսաստանը պետք է բուրժուական պետություններ Վրաստանի, Հայաստանի և Թուրքիայի նկատմամբ պահպանի բարի դրացիական հարաբերություններ: Ներկայումս ոչ մի դեպքում պետք չէ Վրաստանում և Հայաստանում խորհրդային իշխանություն մտցնելու փորձ կատարել: Հարկավոր է անպայման ձեռնպահ մնալ Վրաստանում, Հայաստանում և Թուրքիայում ապստամբություն կատարելու փորձերից»:[1]

---

[1] ՀԱԱ, հավաքածու թ. 2, գ. 5:

Այդ բոլորը վերջին հաշվով, իրավիճակի դեպքերի ընթացքով է պայմանավորված եղել: 1920թ. մայիսի 20-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոն որոշել է «շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ ստանձնելով նրա անհապաղ խորհրդայնացման նախաձեռնությունը, խորհրդային զորքերի օգնությամբ»: Նախատեսվում է միաժամանակ ձեռք առնել միջոցներ Նախիջևանը թուրքական սուլթանական կառավարության և Անտանտի տերությունների ազդեցությունից զերծ պահելու համար: Ճիշտ է, սա դեռ Սևր չէ, բայց մեկից գաղտնիք չէր, որ մայիսին Անտանտի տերությունները ընդհուպ մոտեցել էին Հայաստանի նկատմամբ տարիներ առաջ սկսված «հոգատարությունը» ավարտական փուլի հասցնելուն: Նույն այդ որոշման մեջ տարօրինակ մի վճիռ կար. Անգլիային ամեն տեսակ օժանդակության երաշխիքներ տալ Արևելքում նրա վարած քաղաքականության ծավալմանը, իսկ Ֆրանսիայի հանդեպ մամուլում բացել կամպանիա նրա «բարբարոսական քաղաքականության» դեմ:[1]

Հայտնի է, որ այդ որոշումը ընդունվելու ընթացքում ռուսական բանակն իջնում էր դեպի հարավ՝ իր ուշադրության բևեռներից մեկը դարձնելով Հյուսիսային Կովկասն ու Անդրկովկասը: Բայց, Մոսկվայում Քաղբյուրոյի հունիսի 22-ի նիստում, վերը նշված քաղաքականությունը մի կողմ դնելով, որոշվել է «դադարեցնել ռուսական զորքերի շարժումը դեպի Հայաստան»: Անհրաժեշտ է համարվել «Կովկասի ընկերներին ներշնչել բացառիկ զգուշություն, արհեստականորեն թուրքերին հարձակման տեղիք չտալու համար»:[2]

Նման բորբոքման փոխարեն անհրաժեշտ է համարվել Հայաստանի և Անդրկովկասի մյուս հանրապետությունների հետ պահպանել «բարի դրացիական հարաբերություններ», հատուկ ընդգծելով, որ «խորհրդային իշխանությունը պետք է ձեռնպահ մնա ամեն տեսակի հրահրիչ գործողություններից»: Այլ կերպ ասած, եթե մի բան էլ լինելու էր, թող լիներ ժողովրդի հոժար կամքով: Թույլատրելի է համարվում, մասնավորապես Հայաստանի և Անդրկովկասի միջև եղած վիճե-

---

[1] ՀԱԱ, հավաքածու թ. 1, գ. 2, թ. 43:
[2] Նույն տեղում, թ. 59:

լի տարածքների զբաղեցումը, այդ էլ ի վերջո, ճշմարիտ լուծման համար:[1]

ՀՀ կառավարությունը իր գլխավոր ջանքերը կենտրոնացրել էր դաշնակից տերությունների հետ հարցեր լուծելու և փաստաթուղթը, որը Սևրի էր կոչվելու, օր առաջ հաստատելու և գործողության մեջ դնելու բնագավառում: Դրան լրջորեն խոչընդոտում էր վաղօրոք Ադրբեջանում հաստատված խորհրդային իշխանությունը: Վերջինս հավակնում էր միանգամից զավթել հայկական բնարմատ տարածքներ՝ Արցախը, Զանգեզուրը, Շարուրը, Նախիջևանը, օգտվելով այն հանգամանքից, որ խորհրդայնացել էր վաղօրոք և չարաշահում իր հանդեպ Մոսկվայի բարեացակամ վերաբերմունքը:[2]

Խորհրդայնացած Ադրբեջանի նման դիրքորոշումը լրջորեն խանգարում և վնասում էր ՀՀ արտաքին քաղաքականության կիրառմանը և, առավել ևս, արևմտյան տերությունների նկատմամբ ինքնուրույն նպատակային դիրքորոշման իրականացմանը:

ՀՀ կառավարությունն այս ամենի մասին տեղեկացնում էր Բ.Լեգրանին, ցանկանալով բարիդրացիական հարաբերությունների հաստատում Ռուսաստանի և անդրկովկասյան հանրապետությունների հետ: Դրան հակառակ, Մոսկվայից Երևան հասցեագրվում էին գնահատականներ, ակնարկելով նաև սաստիկ գործողություններ, երբ Հայաստանը խնդիր էր դնում Զանգեզուրի և Ղարաբաղի չեզոքացում կամ Հայաստանին պատկանելու ճանաչում: Մոսկվայի քաղաքականությունը կիրառող գործիչները դա որակում էին որպես «խորհուրդների մահ»:[3]

---

[1] ՀԱԱ, հավաքածու թ. 1, գ. 2, թթ. 67, 69:
[2] ԲՀԱ, թ. 1-2, 1993, էջեր 224-227:
[3] Նույն տեղում, էջ 243:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱԿԱՍԵՎՐՅԱՆ ՄԻ ՊԱՏՐՎԱԿ
(Հայաստանի տարածքով դեպի Ռուսաստան անցուղու հարցը և հակասությունների սրումը)

Ի վերջո, Ռուսաստանի պատվիրակությանը մուտք է տրվում, բայց ոչ թե միանգամից Երևան, այլ առայժմ՝ Թիֆլիս: Քաղաքական մթնոլորտի շիկացման պայմաններում Ռուսաստանի պատվիրակներին սահմանից հեռու պահելը, գուցե թե նույնպես դիվանագիտություն էր, բայց տվյալ դեպքում, ոչ թե պատշաճությունից, այլ քաղաքական հանգամանքներից բխող:

Պատվիրակներին ընդառաջ են գնացել ՀՀ հաղորդակցության,ճանապարհների, հեռագրի և փոստի նախարար Ա.Ջամալյանը և խնամատարության նախարար Ա.Բաբալյանը: Նախապես, երկու կողմերին էլ հայտնի էր սպասվող բանակցությունների խնդիրը, այն է. ստորագրել պայմանագիր Ռուսաստանի և ՀՀ միջև: Այցելության առաջին իսկ օրը, օգոստոսի 6-ին, հայ պատվիրակները մոսկովյան պատվիրակությանը վաղօրոք ծանոթացնելու համար, մատուցում են մի փաստաթուղթ, որում հակիրճ բացատրում են, թե իրենք ինչպես են հասկանում երկու երկրների միջև բարեկամական ամուր հարաբերությունների հաստատումը: Հասկանալի է, որ դա էլ հենց պետք է լիներ կողմերի միջև ընդհանուր ելակետը: Ըստ այդմ, թվարկված ութը կետերից որպես առաջնային, նախնական պայման պետք է լիներ այն, որ Ռուսաստանը ճանաչեր ՀՀ անկախությունը, նրա ներքին գործերին առանց որևէ միջամտության. անկախություն առանց վերապահության և լիակատար: Այդ պայմանը ընդունելուն պետք է հաջորդեր կողմերի միջև առկա ամեն տեսակի ռազմական գործողությունների անհապաղ դադարեցումը: Վերջ էին տրվում փոխադարձ հրամայական պահանջները տեղական իշխանությունների և ռազմական հրամանատարության կողմից: Մյուս պահանջներն այն էին, որ թե՛ խորհրդային զորքերը և թե՛ հայկական զորամասերը ետ քաշվեին և

չներխուժեին Ղարաբաղի և Նախիջևանի գավառները: Ապա ՀՀ կառավարությունը պետք է թույլ տար, որ Նախիջևանի սահմանը մտած զորքերը ազատորեն անցնեին Ադրբեջան, իսկ Հայաստանի սահմաններում էլ պետք է դադարեցվեր խորհրդային զորքերի կենտրոնացումը: Եվ, վերջապես՝ Իջևանի գավառում ձերբակալված հայ պաշտոնատար անձանց ազատ արձակում և վերադարձ դեպի Հայաստան:[1]

Սույն փաստաթուղթը հանձնելու պահին Բ.Լեգրանը վատառողջ է եղել: Նրա փոխարեն փաստաթուղթն ընդունել է պատվիրակության անդամ Սահակ Տեր-Գաբրիելյանը, որը հարկ է համարել ասելու, թե Հայաստանի նկատմամբ խորհրդային կառավարության մտադրությունը միանգամայն բարի է: Հայաստանի ներկայացուցիչները զարմացել են, թե ինչու՞ Տեր-Գաբրիելյանը չի աջակցել, որ բանակցությունները ավարտվեն Մոսկվայում:[2]

Կողմերի միջև անհապաղ սկսվել են բանակցությունները: Այդ մասին տեղյակ է պահվել Գ.Չիչերինին, որը հղել է իր նկատառումները: Այդ ընթացքում դեռևս Մոսկվայում գտնվող թուրք պատվիրակները ուշի ուշով հետևել են թիֆլիսյան բանակցություններին, վճռականապես պահանջելով, որ հայերը շուտ բացեն իրենց տարածքով դեպի Թուրքիա տանող սահմանային գիծը: Չի թաքցվել, որ դա լինելու է հատկապես Ռուսաստանից զենք ու ռազմամթերք տեղափոխելու համար: Հայերը խոստացել են դա անել երկու շաբաթ հետո, ինչը Բեքիր Սամիին չի գոհացրել. «Մեր ներկա կացությունը թույլ չի տալիս նույնիսկ երկու շաբաթ սպասել»: Լ.Կարախանը հավաստիացրել է, որ արդեն պատրաստ է բավականաչափ ոսկի, ռազմամթերք, հրացան և այլ զինամթերք, որոնք շուտով ուղարկվելու են Անկարա: Թուրքերը սահմանի այն կողմից հրաման են տվել, որ «ի նպաստ Ադրբաջանի, գրավվեն Ղարաբաղի, Նախիջևանի, Ալագյազի և Զանգեզուրի շրջանները», ապա, նաև, որ մինչև օգոստոսի վերջը բացվի Հայաստանի վրայով դեպի Մոսկվա տանող ճանապարհը: Եղել է նաև, որ Գ.Չիչերինը վճռական պահանջ

---

[1] РЦХИДНИ, ф.64, оп.2, д.11, л. 32. ԲՀԱ, թ. 1-2, 1993, էջ 277-278:
[2] ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1095, թթ. 1-2:

է դրել Բիթլիսից, Վանից և Մուշից տարածքներ մաս հանել Հայաստանի համար: Այդ և արված մի քանի առաջարկների կապակցությամբ, օգոստոսի 14-ին Վ.Լենինի հետ հանդիպման ժամանակ թուրք պատվիրակները բողոքել են: Վ.Լենինը բարեացկամ է և խոստանում է երեք-չորս օրում ուղղումներ կատարել: Այդ առթիվ Բեքիր Սամին հեռագիր հղել Անկարա. «Լենինին գտանք խիստ սիրալիր և սրտաբաց, իսլամության նկատմամբ բարեացակամ»:[1]

Իսկ մինչ այդ, օգոստոսի 10-ին, մի կողմից ՌԽՍՖՀ-ի, ի դեմս լիազոր ներկայացուցիչ Բ.Լեգրանի, և մյուս կողմից՝ ՀՀ ներկայացուցիչներ Ա.Ջամալյանի ու Ա.Բաբալյանի, միջև, «ելնելով Հայաստանի Հանրապետության անկախության և լիակատար ինքնուրույնության ճանաչումից», կնքվում է համաձայնագիր, որով տվյալ օրվա ժամը 12-ից ՌԽՍՖՀ-ի և ՀՀ միջև ռազմական գործողությունները համարվում են դադարեցված: Սա համաձայնագրի որպես առաջին հոդված:

<u>Երկրորդ հոդված:</u> Հայաստանի Հանրապետության զորքերը զբաղեցնում են Շահթախտ, Հոկ, Ազնաբյուրտ-Սուլթանբեկ և այնուհետև Կուկից հյուսիս ու Բազար չայից դեպի արևմուտք տանող գիծը:

ՌԽՍՖՀ զորքերն զբաղեցնելու էին Ղարաբաղ, Զանգեզուր և Նախիջևան վիճելի տարածքները, բացի այն տարածքից, որը տվյալ համաձայնությամբ որոշվել է տրամադրել ՀՀ զորքերի տեղադրման համար:

<u>Հոդված երրորդ:</u> Խորհրդային զորքերի կողմից տվյալ տարածքների զբաղեցումը դեռ չի նշանակում, թե այդպիսիք տրվում են Հայաստանի կամ Ադրբեջանի իրավասությանը: Ժամանակավոր այդ զբաղեցումը պետք է միջոց լիներ նրանց միջև տարածքային վեճերը հաշտ ու խաղաղ լուծելու համար, որը պետք է, ի վերջո, հաստատվեր ՌԽՍՖՀ-ի և ՀՀ միջև պայմանագրի կնքմամբ:

Չորրորդ հոդվածով կողմերը բացառում էին զորքերի կուտակումը վիճելի և սահմանային տարածքներում:

Կարևոր էր հատկապես հինգերորդ հոդվածը, որով մինչև ՌԽՍՖՀ-ի և ՀՀ միջև պայմանագրի կնքումը Շահ-

---

[1] Գ.Լազյան, նշվ. աշխ., էջ 250, Ալի Ֆուաադ Զեբեսոյի հուշերը:

թախտ-Ջուլֆա երկաթգծի շահագործումը տրամադրվում էր Հայաստանի երկաթուղիների վարչությանը, պայմանով որ չծառայեցվեր ռազմական նպատակների:

Վեցերորդ հոդվածով ՌԽՍՖՀ-ն թույլատրելու էր հայոց բոլոր այն զորամասերի վերադարձը Հայաստան, որոնք տվյալ պահին գտնվում էին խորհրդային զորքերի զբաղեցրած գծից դուրս:[1]

Վիճելի համարված տարածքներում արգելվում էր զորքերի տեղադրումը: Պարզ երևաց, թե որքան իրարից տարբեր էին սևրյան և թիֆլիսյան փաստաթղթերը: Դրանք անհամատեղելի են և անհամեմատելի: Հնարավոր է, որ թիֆլիսյան փաստաթղթի հեղինակները այն նաև հայ-ադրբեջանական ընդհարումները դադարեցնելու նպատակով: Պահպանված փաստաթղթերի, հուշագրությունների միջոցով, իր հեռավորությունից Բ.Լեգրանը մեզ հավաստիացնում է, որ կարելի է նման քայլի, գուցե և ավելիի գնալ, քանի որ ռազմական գործողությունները Ռուսաստանի և Հայաստանի միջև անհապաղ դադարեցվում էին: Իսկ Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի տարածքները ռուսական զորքերով զբաղեցնելն էլ գերադասելի է բարձիթողի ռազմական ընդհարումների համեմատ: Մանավանդ, որ առաջիկայում էլ Ռուսաստանի և Հայաստանի միջև հաշտության պայմանագիր էր կնքվելու: ՀՀ նկատմամբ ակնհայտ հավատի ու վստահության արտահայտություն էր Շահթախտ-Ջուլֆա երկաթուղու գործարկումը Հայաստանին վերապահելը:

Այդքանն էր ստեղծված բարդությունների շղթայում Գ.Չիչերինի և նրա գործակիցների ոչ այնքան կամեցածը, որքան կարողացածը: Չմոռանանք, որ դա Ռուսաստանի կարողանալուց կամ կամենալուց բացի, նաև սևրյան փաստաթղթից հրաժարվելու ունակության հարց էր: Գործին մոտ կանգնած Ս.Վրացյանը, որը ընդամենը մի քանի օրով ՀՀ վարչապետ էր դառնալու, վկայում է, որ Բ.Լեգրանը ՀՀ կառավարության առջև դնելով միջնորդության հարցը, միաժամանակ առաջարկեց հրաժարվել Սևրի պայմանագրից:[2]

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 63-64.

[2] Ս.Վրացեան, Խարխափումներ, Պոստոն, 1924, էջ 73-74:

Գուցե թե մեկն էլ կռահում էր մոտիկ ապագայում սպասվող կորուստների չափերը: Այս փաստաթուղթը ռուսական պատվիրակության կողմից ստորագրելու խորքում, վերջին հաշվով արևմտյան երկրների հրապուրանքներից ՀՀ կառավարությանը ետ պահելու մտահոգություններից մեկն էր:

Գ.Չիչերինը դեռևս 1920թ. հունիսի 3-ին Մ.Քեմալին հղած նամակում պարտք էր ստանձնել օժանդակել Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանների որոշմանը: Բայց արդեն հուլիսի 4-ին Բեքիր Սամին Գ.Չիչերինին հղած պատասխան նամակում դժգոհել էր, որ Հայաստանը հունիսի սկզբից փակել էր իր տարածքով Ռուսաստան տանող անցուղին և իր կառավարությունից խնդրել «հնարավորին կարճ ժամանակամիջոցում ստանալ Հայաստանի վրայով ազատ անցման թույլտվություն»:[1] Բեքիր Սամիի այդ բողոքը չի ահաբեկել Գ.Չիչերինին: Ս.Տեր-Գաբրիելյանին հղած նամակում նա հայտնել է. «Օգոստոսի 10-ի (Թիֆլիսի- Հ.Կ.) պայմանագիրը պետք է անփոփոխ պահպանվի: Անթույլատրել է Հայաստանի հետ հարաբերությունների որևէ խզում և ռազմական բարդություն: Դա է կառավարության տեսակետը»:

Մեջտեղում՝ մի Հայաստան, դրսում նրա ցավով «տառապող» քաղաքական երկու իրարամերժ բևեռ: Որ կողմն էլ նա ձգտեր, դարձյալ մեկի կամ մյուսի կողմից դժգոհություն ու հակառակություն էր լինելու: Մեծերի և ուժեղների համար նման դեպքերում հեշտ է գլուխ հանելը, դժվարը փոքրատարած Հայաստանի համար էր: Կովկասի անգլիական կոմիսար Լյուկկը զարմացել է. «թե ինչը դրդեց Հայաստանի կառավարությանը ստորագրելու օգոստոսի 10-ի Շահթախտի պայմանագիրը, այն բանից հետո, երբ հայերը բոլշևիզմի նկատմամբ արդեն բռնել էին ամուր քաղաքականություն», այսինքն ոչ բարեացկամ: Եվ Լյուկկը հապճեպ այս մասին հաղորդեց Քերզոնին:[2] Պատասխանը թերևս բոլորից լավ այդ պահին կռահում էր հենց Լյուկկը, հակառակ դեպքում նա անհանգստացած հարկ չէր համարի նման հեռագիր հղել: Անգլիան սիրում էր ավելի շատ ու շռայլ խոստումներ տալ:

---

[1] ДВП СССР, т. II, сс. 554 - 556.
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 2, գ. 91, թ. 5:

1920թ. մարտին Անտանտի տերությունները զբաղեցրել էին Կ.Պոլիսը և իշխանությունը գտնվում էր բրիտանական ռազմական հրամանատարության ձեռքին, մեջլիսը ցրված էր: Դրանից հետո սկսվել է Մ.Քեմալի ասպարեզ գալը և սերտ հարաբերությունների հաստատումը Ռուսաստանի հետ: Խորհրդային Մոսկվան Անտանտի տերությունների դեմ Քեմալի նորածագ իշխանությանը օգնելու շռայլ խոստումներ է տալիս: Եվ այս խառնաշփոթի մեջ Հայաստանը դեպքերի բերումով և իր կառավարության հաստատած կապերի շարունակական ընթացքով հայտնվում է անտանտյան բևեռում: Այդ ընթացքում քեմալականներին հաջողվում է վերակառուցել իրենց ուժերը Հունաստանի դեմ մղվող մինչ այդ պարտավորական, հետագայում հաղթական պատերազմում:

Թուրքերը շտապում էին: Օգնության կարիք ունեին: Դարձյալ ոսկի էր պետք: Զենք ու բազմապիսի այլ օժանդակություն: Ռուսաստանից լավ օգնական չէր երևում նրանց տեսադաշտում: Մնում էին բարեկամության բանակցությունները, օգնության չափերի պարզումը և ... անդրկովկասյան ճանապարհով գալն ու բարիքները տանելը: Եվ որպեսզի ճանապարհը Անկարայից դեպի Մոսկվա հնարավորին չափ կրճատ լիներ և դյուրին, թուրքերը պահանջում էին հօգուտ իրենց գրավել Շահթախտը, իսկ կարմիր բանակի հրամանատարությունն էլ հրաման էր արձակում ամբողջ Նախիջևանի գավառը զբաղեցնելու մասին: Ստացվում է, որ երկու կողմերից էլ ճնշում են ու պահանջում՝ հայոց հողը տրամադրելով թուրքերին, գուցե և որպես միաժամանակ նաև հարմար ճանապարհ դեպի Մոսկվա: Գուցե թե կարելի էր պահանջ դնել, բայց պատշաճ ձևով և անպայման փոխադարձ նպաստավորության պայմանով: Տվյալ դեպքում պահանջը դրվում էր, բայց որևէ այլ կերպ չէր ասվում, թե հանուն ինչի պետք էր այդ ճանապարհն էլ բացել, երբ առանց դրա էլ կար ադրբեջանական ճնշումը, իսկ ռուսաց զորքերն էլ ազատորեն շարժվում էին Ադրբեջանից դեպի Հայաստան բերող և վիճելի հռչակված բուն հայկական տարածքներով: Բ.Լեգրանի զայրույթը վճռական է: Գ.Չիչերինին հեռագրելու նույն օրը, օգոստոսի 18-ին, նա կովկասյան ճակատի ռազմհեղխորհրդի նախագահ Գ.Օրջոնիկիձեին հեռագիր է հղել, որի տեքստը

մեջբերում է նաև Չիչերինին հղած հեռագրում. «խնդրում եմ դադարեցնել 11-րդ բանակի ռազմահեղափոխական խորհրդի հրամանը Շահթախտը և Նախիջևանի գավառի հատվածը (անցուղու-Հ.Կ) գրավելու մասին, որը օգոստոսի 10-ի պայմանագրով, հատկացված է հայկական զորամասերի կողմից զբաղեցնելու համար, եթե դուք չեք գտնում, որ ժամանակն է կատարել այդ հրահանգը, որի մասին ինձ հայտնեցիք Բաքվում»: Բ.Լեգրանը գտնում է, որ անցուղու իրավունքի հարցը կարելի է լուծել խաղաղ բանակցությունների միջոցով և համոզված է, որ օգոստոսի 10-ի համաձայնագիրը ռազմական ճանապարհով խախտելը նպատակահարմար չէ տվյալ իրավիճակում: Նա նկատի ունի Վրանգելի հարձակման վտանգը, որի մասին մշտապես հոխորտում էին սևրյան տերությունները և դրանով էլ ձգտում հուսադրել հայոց կառավարությանը: Վերջին խոսքը այս է, եթե Գ.Օրջոնիկիձեն համառորեն պնդում է իր ծրագրի վրա, ապա ինքը անհապաղ կհեռագրի Երևան Նախիջևանի գավառից հայկական զորքերը դուրս բերելու պահանջով, կտեղեկացնի, որ հետագա բանակցությունները հայերի հետ կփոխադրվեն Վլադիկավկազ, որով իր միսիան կհամարի ավարտված և կմեկնի Ռուսաստան:[1]

Դրանից մեկ օր անց թուրք պատվիրակները այցելել են Վ.Լենինին և հիացել նրա բարեացակամ վերաբերմունքից: Ըստ թուրք պատվիրակության, իրենց հարցերի լուծմանը խանգարում է Վրանգելի հարձակողական գործողությունը: Ուստի, ռուսները Անդրկովկասի նկատմամբ սպասողական են, չեն ուզում Վրանգելի հարցը լուծելուց առաջ Հայաստանի և Վրաստանի հետ բարդության տեղիք տալ:[2]

Հարցը, վերջին հաշվով, վճռվում էր ոչ այնքան մարդկանց կամքով, որքան դեպքերի ընթացքով: 1920թ. օգոստոսի 22-ին Գ.Չիչերինը Վլադիկավկազում գտնվող Բ.Լեգրանին հեռագրել է. «Հայաստանի վրայով անցուղին պետք է ձեռք բերել դիվանագիտական ճանապարհով: Վրանգելի դեսանտը, կուբանցիների ապստամբությունը մեզ համոզեցին, որ անհնար է օգոստոսի 10-ի պայմանագրից ավելիին հասնել:

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 72.
[2] Գ.Լազյան. նշվ. աշխ., էջեր 254-255:

Դրա համար էլ Սերգոյի այստեղ եղած ժամանակ գիծը փոխելու մասին ընդունված որոշումները փոխվեցին»:[1]

Իսկ Բ.Լեգրանի վերը նշված հրաժարականը դիվանագիտական խնդրի նկատմամբ բարոյականության նմուշ է, գուցե ոչ հազվագյուտ, բայց անպայման բացառիկ:

ՀՀ իշխանության գլուխ կանգնած մարդիկ խնդրին մոտենում էին այն տեսակետից, որ քեմալականներին իրենց երկրով ճանապարը տալը, այսօր նշանակելու է ավելի դյուրին ու արագ Ռուսաստանից զենք ու ռազմամթերք հասցնել Հունաստան, վաղն էլ՝ իրենց ժողովրդի դեմ մղվող կռվին:

Բ.Լեգրանը սեպտեմբերի 15-ին Գ.Չիչերինին հուշում է Հայաստանով Թուրքիա տանող երկու ճանապարհ. «1) Սարիղամիշ-Էրզրում և 2) Նախիջևան-Շահթախտ-Բայազետ-Ղարաքիլիսա-Էրզրում: Առաջինն, ասում է, տանում է ուղիղ դեպի Անկարա և պակաս վտանգավոր է Հայաստանի համար, քանի որ պաշտպանված է բնական պատնեշներով և Կարսի ամրոցով: Ապա, բացատրելով, որ երկրորդ ճանապարհը, ոլորապտույտ ձևով դուրս է բերում դեպի նույն Էրզրումյան ուղին, մինդեռ փոքր Ասիայի հյուսիս-արևելյան և Հայաստանի դեմ ինքնուրույն գործողությունների համար այդ ուղղությունը կարող է վճռական նշանակություն ունենալ: Նույն ձևով Նախիջևանից ճանապարհ է բացվում ուղիղ դեպի Պարսկաստան և Թավրիզ: Անհրաժեշտ է քիչ թե շատ ճշգրիտ կերպով սահմանել մեր այն քաղաքական նպատակները, որոնք կապված են հաղորդակցության ճանապարհների վերաբերյալ Հայաստանի նկատմամբ մեր պահանջների հետ: Եթե Մոսկվան իր նպատակը համարում է ինքնուրույն գործողությունների զարգացումը մեզ մոտիկ Թուրքիայում և Պարսկաստանում, հարկ կլինի տարածքային հարցերի լուծումը հետաձգել մեր տնօրինության տակ Նախիջևանի հանգույցը պահելու համար և մի շարք քայլեր կատարել Շահթախտի հանգույցին ու նեղգիծ երկաթուղուն տիրելու համար: Այս դեպքում պարզ միամտություն կլիներ հուսալ, թե Հայաստանը կտա իր համաձայնությունը Կարս-Սարիղամիշ ուղիով մեզ անցման-տրամադրելու հարցում: Դա հարկ կլինի

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 80.

հետաձգել մինչև Հայաստանի խորհրդայնացումը: Եթե առաջադրանքը քեմալական կառավարության հետ ուղղակի կապի հաստատումն է նրան անհրաժեշտ պաշարներով մատակարարելու համար, ապա ինձ թվում է, որ կարելի էր սահմանափակել Սարիղամիշի ուղղությամբ, մանավանդ որ Կովկասում մեր ունեցած ուժերի ճշգրիտ հաշվարկի դեպքում, մենք չենք կարող հուսալ, թե կկարողանանք, իրոք, օգտագործել Թավրիզի և Բայազետի ուղղությունները: Այդ դեպքում հնարավոր կլիներ որոշ տարածքների զիջմամբ Հայաստանի հետ անհրաժեշտ համաձայնության հասնել և անցուղու հարցը լուծել խաղաղ ճանապարհով»:[1]

Բ.Լեգրանի այս մի նամակը քաաքականության ավելի շատ նրբերանգներ բացահայտեց, քան հայ պատմագրությունն ի վիճակի էր լույս աշխարհ հանելու այդ օրերից հետո անցած մի քանի տասնամյակներում. երբ այդ փաստաթղթերից ամեն մեկի վրա կողպեք էր դրված:

«Զիջման և խաղախ ճանապարհի» դիրքորոշման մասին տվյալ օրերի ռուսական փաստաթղթերում վերը բերված առկայծումը միակը չէր: Այդ մասին ժամանակին կովկասյան ճակատի ռազմահեղափոխական խորհուրդը հատուկ հրահանգ է հղել գործերը տեղում տնօրինող Ն.Նարիմանովին, Ս.Կիրովին, Բ.Լեգրանին, Շ.Էլիավային. «Ռուսաստանը պետք է խաղաղ և բարի դրացիական հարաբերություններ պահպանի Հայաստանի և Թուրքիայի հետ: Ներկայումս ոչ մի դեպքում չպետք է Վրաստանում և Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու փորձ անել: Անպայման հնարավոր է խուսափել Վրաստանի, Հայաստանի և Թուրքիայի կառավարությունների դեմ ապստամբության փորձերից»:[2]

Բ.Լեգրանը հիշատակում է նաև ՀՀ տնտեսության զարթոնքի նշումներ. կառավարությունը որոշել է ձեռնամուխ լինել երկաթուղու Շահթախտ-Զուլֆա հատվածի գործարկմանը, Օլթու շրջանում քարածուխի հանույթի աշխատանքներին: Կա նաև խոսք քաղաքական նախաձեռնության մասին. վերջ էր տրվել կոմունիստների գնդակահարություններ-

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 11, лл. 128-130.

[2] ՀԱԱ, Հավաքածու թ. 2, գ. 5:

ին և Ադրբեջանի հետ պատրաստվում էր համաձայնության Հայաստանում՝ կոմունիստների, Ադրբեջանում՝ դաշնակցականների հալածանքները դադարեցնելու մասին:

Դեսպանը, այնուամենայնիվ, չի բացել խաղաթղթերը ու տառացի-բառացի ասել, թե ինչու՞ էր ռուսաց դիվանագիտությունը Թուրքիայի նկատմամբ այդպես մտերիմ դարձել, որը ցարի օրոք ոչ լսված էր, ոչ էլ տեսնված:

Իսկ Գ.Չիչերինը դարձյալ նույնն է պնդում, 1920թ. հուլիսի 28-ին Վրաստանում Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Ս.Կիրովին՝ (Բ.Լեգրանին հանձնելու համար) ուղարկված հեռագրում. «Պետք է առանձնապես պնդել մեզ Հայաստանի վրայով առանց որևէ մի օտար հսկողության, անցման իրավունք տրամադրելու վրա: Հարկավոր է, որ մենք կարողանանք մեր կնքած, մեր իսկ վագոններով տեղափոխել մեր ապրանքները»:[1]

Այդուհանդերձ, Հայաստանի արտաքին քաղաքական դրությունը և դրա հետ կապված ներքին իրավիճակը բարդանում էին նրանով, որ տրանզիստի հարցին միայն Ռուսաստանն ու Թուրքիան չէր, որ առնչվում էին: Արևմուտքից արևելք նույն երթուղով անցման ճանապարհ էր ակնկալում նաև Անգլիան: Բնական է, որ ներքուստ ուրիշներն էլ կուզենային: 1920թ. օգոստոսի 31-ին Երևան ժամանած Կովկասի անգլիական գերագույն կոմիսար Լյուկկը ՀՀ վարչապետին է հանձնել մի նախագիծ, որը Սևրի պայմանագրի համաձայն Հայաստանի կառավարությունը պիտի կնքեր տերությունների հետ: Նրանում հայտարարվում էր, որ «պայմանագիրը նախատեսում է այն դրույթները, որոնք պիտի աջակցեն անգլիական վաճառականության զարգացմանը»: Ըստ այդմ, պիտի տարվեր «մի երկաթուղագիծ Հայաստանի սահմաններից մինչև Բաքում, Ճորոխ գետի հովիտով»: Լյուկկը խնդրել է, որ պայմանագրի այդ նախատեքստը «ուսումնասիրվի և ստորագրվի» մինչև Հայաստանից իր գնալը, որը լինելու էր երեք օր հետո: Այդ ճանապարհը Թուրքիայով չէր անցնելու, այլ «հայկական նավահանգիստներով ու երկաթուղագծերով»:[2]

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 24.
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 35:

Իսկ եթե Հայաստանն ինքն էլ իր հերթին վերցներ ու թե Հայաստանի, թե Թուրքիայի նկատմամբ բարեգործի տեսք ընդունելով. նրանց երկուսի առջև էլ բացե՞ր Շահթախտը: Եվ, վերջապես, չէ՞ր կարելի, արդյո՞ք, որ Հայաստանը դաշնակից տերություններին հրավիրեր, թե եկեք, տիրեցեք Շահթախտով բացվող ու փակվող ճամփաներին: Հայաստանը քաղաքական քաշքշուկի առանցքում էր: Մանավանդ, որ դեռ կիսատ էր մնում Թուրքիայի հետ պայմանագրի հարցը: Բեքիր Սամիի Անկարա վերադադարձից հետո Մոսկվա է եկել վերը հիշատակված թուրք դիվանագետ Յուսուֆ Քեմալ բեյը, որի հետ պայմանագրի դադարեցված տեքստի մի օրինակ, որպես սևագիր, ուղարկվել է Անկարա: Ընթերցեք հոդված առաջինը. «Ստորագրող կողմերը սկզբունքորեն ընդունում են չճանաչել որևէ համաձայնագիր, որը բռնությամբ պարտադրված է մյուս կողմին: Ռուսաստանի հանրապետությունը ընդունում է բացարձակապես չճանաչել պետական որևէ համաձայնագիր, որը վերաբերվում է Թուրքիային և, որը վավերացված չէ Թուրքիայի ազգային կառավարության ներկայացուցիչ Ազգային Մեծ Ժողովի կողմից»:[1]

Այդ նշանակում է Հայաստանի և հայ ժողովրդի առջև փակել սևրյան որոշման դռները որպես քաղաքական դիրքորոշում և որպես նրա դեմ ընբոստացման բարոյաքաղաքական և տարածքազավթման ակտ: Սևրյան վճռում նշված հողերը հայ ժողովրդի սեփականությունն էին, որպես նրա կյանքի և աշխատանքի բնարմատ օրրան:

Եվ Գ.Չիչերինը Յուսուֆ Քեմալին, որի ձգտումը Մոսկվայում լիակատար հավանության չի արժանացել, վերադարձից հետո հարցում է հղել Անկարա: «Մենք ուզում ենք իմանալ, թե Թուրքիայի կառավարությունը ստացե՞լ է, արդյոք, Բեքիր Սամիի հետ մեր մշակած պայմանագրի նախագիծը, որը ուղարկել ենք Անկարա Յուսուֆ Քեմալի հետ: Թուրքական կառավարությունը արդյոք այն համարու՞մ է ընդունելի և ինչպես է նա վերաբերվում մեր և Բեքիր Սամիի միջև տարաձայնություն հարուցող այն կետերին, որոնց վերաբերյալ նա չէր կարողանում որոշում կայացնել»:

---

[1] Գ.Լազյան, նշվ. աշխ. էջ 255:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՆԱԽ ԱՌԱՋԳԱԿԱՆ ՎԻՃԱԿ, ԱՊԱ՝ ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ ԿՐՃԱՏՎԱԾ ՀՈՂԻ ՎՐԱ

Մոսկվայից Շանթի դուրս գալուց հետո Ռուսաստանում ՀՀ ժամանակավոր դիվանագիտական ներկայացուցիչ է նշանակվել քաղաքական թատերաբեմում բավական համեստ մի անձնավորություն՝ մոսկվայաբնակ Եղիազար Եղիազարյանը: Ըստ եղած փաստաթղթերի նա հիմնականում լրատվական դեր է կատարել՝ արժանանալով տեղի իշխանությունների հարգալից վերաբերմունքին: Մինչդեռ, ՀՀ կառավարությունը այդ ընթացքում բոլորովին այլ դիրք էր բռնել Երևան առաքվող մոսկովյան պատվիրակների նկատմամբ: Գ.Չիչերինը ստիպված է եղել Ս.Տեր-Գաբրիելյանին հաղորդելու, թե «ինչպիսի վերաբերմունք որ ցույց կտրվի Լեգրանին, նույն էլ կլինի Եղիազարովի նկատմամբ Մոսկվայում փոխադարձ պետք է լինի»:[1]

Մոսկվայի հետ Երևանի կապը եղել է հիմնականում հեռախոսի միջոցով: Այդ ընթացքում դեռ պատշաճ չի եղել ՀՀ իշխանությունների վերաբերմունքը Բ.Լեգրանի պատվիրակության նկատմամբ: Պատահական չէր, որ վերը նշված օգոստոսի 10-ի բանակցությունները ընթացան Թիֆլիսում, քանի որ Երևան մտնելու թույլտվություն դեռ չկար: Միայն սեպտեմբերի 1-ին՝ այն էլ պատվիրակության կազմից մի հոգու, Երևան մուտք թույլատրվեց: Դա եղել է Իստոմինը, որը զբաղվելու էր տեղում սոսկ պատվիրակության անդամների՝ Երևան գալուց հետո, տեղավորման հարցերով:

Ռուսաստանի ղեկավարությունը, մասնավորապես Վ.Լենինը, գտել են, որ Ադրբեջանից հետո Հայաստանի խորհրդայնացման հարցում չպետք է շտապել, որպեսզի նոր Ադրբեջանը ամրապնդվի և, ապա, ուշադրությունը Արևմտյան

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 33.

ճակատի վրա բևեռվի:[1] Լ.Կարախանը Գ.Օրջոնիկիձեին հեռագրեց. «Հայաստանը առայժմ իրենից մերձավոր հետաքրքրություն չի ներկայացնում, բայց կարող է շատ անհանգստություն պատճառել: Ուստի պետք չէ սահմանն անցնել»: Դա թելադրվել է նաև հայ-թաթարական լարված հարաբերություններով, ինչը լուրջ վտանգ էին ներկայացնում:

Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո Նախիջևան ներխուժած քեմալական զորքերը փաստորեն զավթեցին ամբողջ գավառը: Սերտ համագործակցություն է հաստատվում Ադրբեջան եկած ռուսական զորամասերի և նրանց միջև: Այդ ժամանակի գրագրություններում Թուրքիան սկսում է անվանվել՝ մինչև իսկ «Կարմիր Թուրքիա»:

Խորհրդա-թուրքական հարաբերությունների հաստատման սկզբնափուլում Գ.Չիչերինը համառուսաստանյան կենտգործկոմի նիստում 1920թ. հունիսի 17-ին հայտարարել է, որ Հայաստանի հետ Ռուսաստանը բարեկամական հարաբերություններ է հաստատում, որպեսզի երկու երկրների միջև խաղաղարար լինի և վերջ տրվեն մինչ այդ անհանդուրժելի հակասություններին:[2] 1920թ. ամռանը խորհրդա-թուրքական բարեկամության նախնական փաստաթուղթ է ստեղծվել, ըստ որի Ռուսաստանը պարտք է ստանձնել «Թուրքիային օգնել զենքով, զինամթերքով և ոսկով»: Սակայն, համապատասխան գրականության մեջ ասվում է, որ այդ ժամանակ խորհրդային Ռուսաստանը ի վիճակի չի եղել բավարարելու Թուրքիայի բոլոր պահանջները, բայց և այնպես «արել է այն ամենը, ինչ հնարավոր է եղել նրան ռազմական տեխնիկայով մատակարարելու համար»:[3] Զենքի առաջին խումբը հասցվել է Տրապիզոն 1920թ. ամռանը, իսկ սեպտեմբերին էրզրումում Թուրքիայի կառավարության և ռազմական հրամանատարության ներկայացուցիչներին (ինչպես նշվեց վերը), հանձնվել է 200.6 կգ ձուլածո ոսկի», դարձյալ Մոսկվայից:[4]

---

[1] РГВА , ф.4, оп.1, д.158, л.169. РЦХИДНИ, ф.85, оп.14,д.29, л.1.
[2] Г.Чичерин. Статьи и речи, с. 168.
[3] А.Шамсутдинов, указ. соч., с. 179.
[4] ДВП СССР, т. III, с. 675.

Գ.Չիչերինը բարին է ցանկացել, մինչդեռ, դեպքերը, ողբերգական, հակառակն են եղել: Փաստորեն, զենքը տրվել է, երբ այն կարող էր ազատորեն օգտագործվել հայկական ճակատում: Եվ, իրոք, թուրք հրամանատարությունը այդ «օգնությունը» սկզբում օգտագործել է Հայաստանի դեմ սկսած կռիվներում, իսկ մնացյալ մասն էլ 1921թ. հունվարից ճակատ է նետել հույների դեմ կռիվների վերսկսման փուլում: Փաստորեն, նրան ոչ հանդիմանող կար, ոչ սաստող: Նա շարունակում էր մտերմանալ Մոսկվայի հետ: Արդեն 1920թ. հունիսի 9-ին ձևավորվել էր արևելյան ճակատը, իր զորա-կազմով և ակնկալվում էր Մոսկվայի խոստացած ոսկու ստացումը՝ և զենք, և զինամթերք և հանդերձանք: Նույն տարվա հուլիսի 7-ին Քեմալի կառավարությունը ՀՀ կառավարությունից պահանջել էր զորքերը դուրս բերել Բրեստի և Բաթումի պայմանագրերով խոստացված տարածքներից: Այն է, ըստ Բրեստի՝ Կարսից ու Արդահանից, իսկ ըստ Բաթումի՝ Սուրմալուի գավառից, Ալեքպոլի և Էջմիածնի գավառների մեծ մասից և Երևանի ու Շարուր Դարալագյազի գավառների մի մասից:[1] Չնայած նրան, որ այդ տարածքների մասին կայացած վճիռները ժամանակին հայտարարվեցին անվավեր:

Խորհրդային Ռուսաստանը այդ ժամանակ միակ պետությունն էր, որը և ճանաչել էր Քեմալի կառավարությանը և նրա հետ հաստատել էր դիվանագիտական հարաբերություններ:[2] Դա Քեմալի համար միաժամանակ ուժ էր և հենարան: 1920թ. հունիսին դիվանագիտական կապեր հաստատվեցին Թուրքիայի և Ադրբեջանի միջև: Առաջին իսկ պահից Ադրբեջանի կառավարությունը հավաստիացրել է, որ «մահմեդական կոմունիստները կգործադրեն բոլոր ջանքերը Թուրքիայի ազգային շարժման հաղթանակի համար»:[3]

Ստեղծված էր «Ռուսաստանի Խորհրդային Սոցիալիստական ֆեդերատիվ Հանրապետության և Կարմիր Թուրքիայի միացյալ զորքերի հրամանատարություն», որի հրա-

---

[1] Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшей времени, ч. 2, Москва, 1926, с. 437-438.
[2] А.Шамсутдинов, указ. соч., с.177.
[3] Бакинский рабочий, 08.06.1920.

մանով 1920թ. հուլիսի 28-ին նրանք մտել են Նախիջևան և գրավել քաղաքն ու նրա շրջակայքը, լրջորեն անհանգստացնելով տեղի հայ բնակչությանը: Հայաստանի կառավարությունը հարկադրված բողոք է հղել Գ.Չիչերինին: Անհապաղ Երևանից Նախիջևան պատվիրակություն է ժամանել՝ իր հետ բերելով Նախիջևանը Հայաստանին ենթարկելու նոր պայմաններ: Հայաստանի ռազմական նախարարը հայտարարել է, որ Նախիջևան խորհրդային զորքեր մտցնելը առիթ է ստեղծում հայկական զորքերին հրաման տալ «բոլշևիկներին Նախիջևանից դուրս մղելու մասին»: Կարմիր բանակի հրամանատարությունը իր հրապարակած հատուկ փաստաթղթում հռչակել է, թե նշված զորամասերը գավառ են մտել որպեսզի վերջ տան «երկպառակտչական» այն պատերազմին, որը հայերը մղում են Թուրքիայի և թաթարների դեմ, և գավառում հաստատեն խաղաղություն: Նաև զգուշացվում է, որ եթե հայերը չդադարեցնեն իրենց եռանդուն գործողությունները կարմիր բանակի դեմ, ապա վերջինս ստիպված կլինի դիմելու «կործանարար հակահարվածի»: Պահանջվում է, որ հայկական զորքերը մինչև օգոստոսի 5-ը դադարեցնեն կրակը:[1]

Յուրատեսակ նախապատերազմ էր: Կովկասյան ճակատի ռազմիեղխորհուրդը, որին ենթարկվում էր 11-րդ կարմիր բանակը, չէր կարողացել ապահովել Շուշի-Գորիս-Էնգելյուրտ-Կառմելինովկա-Նախիջևան գծի գրավումը: Դրանից հետո էլ Հայաստանի զորքերի հրամանատարությանը նա ներկայացրել է հռչակվող խորհրդային ընդհանուր քաղաքական գծի հետ, ըստ էության, չհամընկնող պահանջներ՝ հետո էլ Հայաստանի զորքերի հրամանատարությանը նա ներկայացրել է հռչակվող խորհրդային ընդհանուր քաղաքական գծի հետ ըստ էության չհամընկնող պահանջներ՝ հետո էլ հոխորտալից սպառնալիքներ: Բանկի տեղական հրամանատարությունը փորձել է վերադաս մարմինների հետ պայմանավորվել և գրոհով վերացնել «Արարատյան Հանրապետությունը», ինչպես որ իրենց գրագրության մեջ անվանում էին Հայաստանը: Բ.Լեգրանը բանակային հրամանատարության խնդիրը, ոչ թե ինքնուրույնաբար այդ հավելյալ գործողու-

---

[1] РЦХИД.НИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 27.

թյունների քաղաքականություն մշակելն է համարում, այլ, ինչպես ասվեց, սոսկ Նախիջևանը և նշված գիծը ապահովության նպատակներով թուրքերի հարձակումից հաստատապես զբաղեցնելը: Նրա այդ պահանջների հետ հիմնականում համընկնում էին օգոստոսի 10-ի քննարկման համար Ա.Ջամալյանի և Ա.Բաբալյանի ներկայացրած ութ դրույթները, որոնք բերվեցին վերևում:[1]

Բ.Լեգրանը հիացած է «թուրք հեղափոխականների նոր, լիովին ժողովրդական քաղաքականությամբ և դեմոկրատական սկզբունքներով», ինչպես որ ինքը գրում է: Ըստ որում, դա բացառիկ այն «դեմոկրատիան» է, որ թուրքերը հռչակել են ազգերի ինքնորոշում և թուրքահայերին էլ անկախություն են շնորհում իրենց բնարմատ հողի վրա բավականաչափ տարածքով հանդերձ: Գ.Չիչերինը այդ առնչությամբ, առանց վարանման, հիացմունքի խոսք է ասել. «Արևելյան հարցերի մեր լուծումը ուժգին կերպով առաջ է գնում»:

Իրոք, որ ուժգին, ինչպես քաղաքական «միամտությունից» բխող կորստաբեր դիվանագիտությունը:

Թուրքիայի հարցը համարվում է խրթին, զգուշություն պահանջող: 1920թ. սեպտեմբերի 15-ին Գ.Չիչերինը բացատրեց. «Կենտրոնում գտնվում է Թուրքիայի նկատմամբ մեր վերաբերմունքի հարցը: Նրա վրա է տեղափոխված մեր արևելյան քաղաքականության ծանրության կենտրոնը: Ուստի պետք է գործադրել բոլոր ջանքերը, Թուրքիայի պահանջը բավարարելու համար այնքան, որքան մեր սեփական դրությունը դա թույլ է տալիս»: Եվ հետևում է հիացմունքը Թուրքիայով ու նրա քաղաքականությամբ. «Նախադրյալը թուրք հեղափոխականների նոր, միանգամայն ժողովրդական քաղաքականությունն է և նրանց դեմոկրատական սկզբունքներն՝ մասնավորապես ժողովուրդների ինքնորոշումը և թուրքահայերին անկախություն տրամադրելն ու Թուրքահայաստանում բավարար չափով տարածքով ապահովելը»:[2]

Նույնն էլ շարունակվում էր Շահթախտի հետ: Թուրքերը չեն մոռացել իրենց պահանջը: Գ.Չիչերինին նրանք

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 39, 58.
[2] Там же, лл. 124-126.

հայտնել ու պնդել են, որ եթե չի լինում գրավոր վճռով, կանեն գործնական քայլով: Գ.Չիչերինը Գ.Օրջոնիկիձեին տեղյակ է պահել, որ թուրքերն ասում են, թե իրենք կգրավեն ոչ միայն Շահթխտը, այլ հետն էլ նաև Սարիղամիշը՝ առանց որևէ թույլտվություն հարցնելու: Եվ նա այժմ գրեց, որ դա օգոստոսի 10-ի «խախտում չի լինի, քանի որ մենք չենք պարտավորվել այդ վայրերը պաշտպանել թուրքերից»: Գ.Օրջոնիկիձեն, ստանալով այդ մասին Գ.Չիչերինի հեռագիրը, չառարկեց և Բաքու հեռագրեց. «Ստիպված պետք է Շահթախտը վերցնել»: Այսինքն՝ զորամասերից մեկին սովորեցնել, հրել, որ շարժվի առաջ, մտնի Շահթախտ, դիրքավորվի այնտեղ ու էլ դուրս չգա, տեսնենք, թե ինչ է լինելու վերջը ով և ինչպես է Շահթախտը ետ գրավելու: Մինչդեռ, նույն օրերին, վարչապետ Հ.Օհանջանյանը շարունակում էր ենթականերից պահանջել, որ օգոստոսի 10-ի որոշման խախտումներ չլինեն: Իսկ Բ.Լեգրանն էլ, եթե բախտը չէր ժպտալու իր ստորագրած փաստաթղթին, պատրաստվում էր հրաժարական տալ: Այս ընթացքում Կուբանում Վրանգելը ապստամբություն էր բարձրացրել: Թե մեկ, թե մյուսը հարկադրել են Գ.Չիչերինին օգոստոսի 22-ին հայտնելու Բ.Լեգրանին, որ այդ ամենը «համոզել են, որ անհնար է օգոստոսի 10-ի պայմանագրից հեռանալ», ուստի Գ.Օրջոնիկիձեի հետ «գիծը փոխելու մասին կայացված որոշումները վերանայվել են»:[1]

Հարցերի հարցը դարձյալ մնացել է տրանզիտ կոչված անցուղի՝ Նախիջևանի, Զանգեզուրի, Ղարաբաղի հարցերը կարող էին հաջողությամբ լուծվել հիմնական այդ հարցի հաջող լուծման դեպքում, հայտնում է Բ.Լեգրանը Գ.Չիչերինին հղած իր նամակներից մեկում:

Ի՞նչ է ստացվում:

1. Թեև դժվարություններ առկա էին, բայց Հայաստանը խանդավառված էր իր մայրարմատ արևմտյան տարածքների վերամիավորման սևրյան վճիռներով:

2. Անկարայում Քեմալի իշխանության գլուխ անցնելով, 1920թ. ապրիլից ի վեր Հայաստանի դեմ խմորվում էր թուրքական նոր սպառնալից աղետը:

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 11, л. 68-74.

3. Քեմալի իշխանության ասպարեզ գալուց 5 օր անց, Ադրբեջանը խորհրդային է հռչակվում և անհապաղ սկսվում են Հայաստան-Ադրբեջան սահմանային ընդհարումները:

4. Զուգընթաց Հայաստանին Ռուսաստանի թիկունք կանգնելու քաղաքական տրամադրություններ են բորբոքվում: Հայաստանում տեղի են ունենում նաև հեղափոխական ընդվզումներ հանուն խորհրդայնացման: Դժվար կացություն էր. դրսից քեմալական վտանգն էր սպառնում, իսկ ներսից, արևելքից՝ սահմանային կռիվները:

Հայոց ինքնապաշտպան ուժերը 1920թ. օգոստոսի 19-ին ադրբեջանական ռազմական ուժերին կանխել են մինչև իսկ Ախտայի շրջանում հետազոտություն կատարելիս: Փոխհրաձգությունից հետո նրանք ստիպված են եղել ետ քաշվել: Այդ մասին Հ.Օհանջանյանը հեռագրեց Բ.Լեգրանին:

Աստիճանաբար Հայաստանի հարցում տրամադրության փոփոխություններ են դրսևորվում: Բ.Լեգրանը իր ստացած գրություններում նկատում է, որ Գ.Օրջոնիկիձեն, մերթ ընդ մերթ նաև Գ.Չիչերինը, հակված են թորքերի առջև դեպի Ռուսաստան Հայաստանով տանող երթուղու մուտքը բացելուն: Նա 1920թ. օգոստոսի 20-ին Գ.Չիչերինին հայտնում էր հետևյալը. «Եթե դուք Սերգոյին, իրոք, ասել եք թուրքերի պնդմամբ Շահթախտը գրավելու անհրաժեշտության մասին, որը հակառակ է Հայաստանի հետ օգոստոսի 10-ին խորհրդային կառավարության անունից իմ ստորագրած համաձայնագրին, ուրեմն ինձ այլևս ոչինչ չի մնում, բացի նրանից, որ համառորեն խնդրեմ Ձեզ և Կենտկոմին ինձ անհապաղ պաշտոնից ետ կանչել»:[1] Շարունակության մեջ խորին հուզմունքով ու ափսոսանքով Բ.Լեգրանը հայտնում է. «Ես ենթադրում էի, որ Ձեր որոշ աջակցության շնորհիվ ինձ կհաջողվեր ամրապնդել հայոց կառավարության այն վստահությունը, որը վերջերս սկսել է առաջանալ մեր քաղաքականության նկատմամբ, և հասնել նրան, որ հայերը ճանաչեն Հայաստանի տարածքով ազատ անցման մեր իրավունքը»: Բավական խիստ, բայց և ճշմարիտ խոսքեր է հղել դեսպանը. «Նախիջևանի գավառը քեմալիստներին հանձնելը և Շահթախտի

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 68, л. 71.

գրավմամբ օգոստոսի 10-ի համաձայնության բացահայտ խախտումը հավասարազոր է Հայաստանի հետ խաղաղ հարաբերությունների վերացմանը և ենթադրում է Հայաստանի նկատմամբ հետագա միջոցառումների մի ամբողջ շարք, որը ինձ թվում է ոչ տեղին է և ոչ էլ ժամանակին»: Զարմացած է դեսպանը: Պարզ չէ, ասում է, թե «ո՞վ է կիրառում Հայաստանի հանդեպ քաղաքականությունը մե՞նք, թե Բաքուն»:[1] Զարմանում է նաև, թե այդ ինչպես է պատահել, որ Նախիջևանը, որը համարվում էր մինչ այդ վիճելի, վերջին այդ օրերին, դարձել է Ադրբեջանինը: Ո՞վ է ղեկավարում, ո՞վ է որոշում, ո՞վ է ցուցումներ տալիս և վճռում: Եվ դրան ի հակառակ, Բորիս Լեգրան դիվանագետի ու դեսպանի տիպար, որի մտապահ այդ հարցականներն անգամ հազիվ թե նրան դուրս թողնեին 1937թ. ստալինյան ամենակուլ երախից... Շփոթություն էր, գոռում-գոչում, սեփական հայացքների ու համոզմունքների հեղձում: Հեղափոխական պարտքի ու անաղարտության մասին ստալինյան բարձրագոչ հրամանների անհասկանալի խառնակցության մեջ հայտնվել է նաև կովկասյան հարցերը կենտրոնի լուծմանը հասցեագրող Ս.Օրջոնիկիձեն: Եվ, երբ հայերը, ստեղծված իրավիճակից ելնելով, ինքնապաշտպանական զորքեր էին տեղափոխում դեպի արևելյան սահմանները, կովկասյան ճակատի ռազմեղխորհրդի անդամ Գ.Օրջոնիկիձեն հայերին հեռագրով սպառնում էր, որ հայոց զորքերի նկատմամբ կկիրառվեն «համապատասխան միջոցներ»:[2] Մյուս կողմը մինչ այդ կարող էր հայոց հողերը բռնակցել վաղ խորհրդայնացած Ադրբեջանին:

Ոտնահարվում էր նաև օգոստոսի 10-ի համաձայնագրի այն հոդվածը, որը վերաբերվում էր Զանգեզուրը, Նախիջևանը և Ղարաբաղը վիճելի հռչակելուն: Ըստ այդմ, համաձայնագրի կնքումից հետո նշված այդ տարածքները Ադրբեջանում տեղակայված զորքերը զբաղեցրել են և հռչակել չեզոք գոտի: Սա «հասկանալի» է: Բայց անհապաղ սկսվել են հայ քաղաքական անձանց հալածանքները: Օգոստոսի 17-ին Հ.Օհանջանյանը Բ.Լեգրանին բողոքել է: Այլ կերպ ասած,

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 68, л. 75.
[2] Там же, л. 82.

ոչ թե չեզոք գոտի է հռչակվել, այլ որոշակի քաղաքական գոտի, խաղաղ ժողովրդին ճնշման ու հարկադրման միջոցներով հանդերձ: Հ.Օհանջանյանը պահանջում էր այդ բոլորի մասին անհապաղ տեղեկացնել խորհրդային ղեկավարությանը և խնդիր դնել, որ նշված վայրերից դուրս բերվեն հայ բնակչության նկատմամբ հաշվեհարդար տեսնող ադրբեջանական զորամասերը:[1]

Տեղում այս դեպքերն էին, իսկ կենտրոնից Գ.Չիչերինը դարձյալ հրահանգներ է հղում օգոստոսի 22-ին «օգոստոսի 10-ի պայմանագիրը պետք է անշեղորեն պահպանվի, Հայաստանի հետ անթույլատրելի է որևէ խզում և ռազմական բարդություն: Այդ է կառավարության տեսակետը, որը, ամենուր և վճռականապես հաստատվում է կուսակցական կենտկոմի կողմից»: Պահանջվում էր, որպեսզի Բ.Լեգրանը գնա Երևան, բոլոր ջանքերը գործադրի Հայաստանով դեպի Թուրքիա անցուղին բացելու համար, անհապաղ դիվանագիտական սուրհանդակներ ունենալու իրավունք ձեռք բերի, որ նրանք ուղարկվեն Հայաստան, այդտեղից էլ Թուրքիա, անձամբ Քեմալի հետ հեռախոսային կապ հաստատի:[2]

Բ.Լեգրանը գտել է, որ Հայաստանի երկաթուղիների (գրավման կամ օգտագործման), որպես հիմնական հարցի, լուծումից առաջ, Սարիղամիշի գրավումը իմաստ չի ունենա: Իսկ թուրքերը շտապում էին: Նա պնդել է, որ դա թույլ տալը շատ վատ «կանդրադառնա Ռուսաստանի ընդհանուր քաղաքականության վրա», ուստի նախ պետք է ամեն ինչ անել թուրքերին հանգստացնելու համար:

Սակայն, այդ ընթացքում, Օլթիի շրջանում և Զանգիբասարում տեղի են ունեցել հայ-թուրքական ընդհարումներ, հայկական զորամասերը առաջ են շարժվել դեպի Նախիջևան, երբ որ թուրքական բանակը մտել, գրավել է այն: Բ.Լեգրանը դեռևս հուլիսի 21-ին Չիչերինին հղած հեռագրում գտել էր, որ տարածքների մասին վճիռները լուրջ դիմադրությանկհանդիպեն, ուստի գրչի թեթև մի շարժումով առաջնահերթ մի խնդիր է համարվել «Ադրբեջանի և Թուրքիայի

---

[1] РЦХИДНИ, ф. 64, оп. 2, д. 68, лл. 83-85.
[2] Там же, лл. 37, 87.

դեմ Հայաստանի թշնամական գործողությունների դադարեցումը»: Եվ դեռևս այդ ժամանակ էլ հարց է դրվել Լ.Շանթի բանակցությունները կանխել Մոսկվայում և տեղափոխվել Վլադիկավկազ: Եվ միթե՞ սա արդարացի էր:

Նկատենք, որ վերը նշված «ՌԽՖՍՀ-ի և Կարմիր Թուրքիայի միացյալ զորքերի հրամանատարություն» անվանված իրեն իրավունք էր վերապահում մուտք գործելու ցանկացած վիճելի գավառ վճիռներ կայացնելու և ռազմական գործողություններ իրականացնելու: 1920թ. հուլիսին նշված զորամասի հրամանատարը եղել է թուրք Թարխանովը, որը և գլխավորել է ամսի 30-ին Նախիջևան քաղաքը և մարզը գրավելու գործողությունը:[1]

Ինչպես նշված փաստը, այնպես էլ օգոստոսի 10-ի թիֆլիսյան համաձայնագիրը, հայոց մեջ մի տարակուսանք հարուցել: «Ժողովուրդ» թերթը հայտնում էր, որ դրանով «Ռուսաստանը ճանաչում է Հայաստանի անկախությունը, Շահթախտ-Զուլֆա երկաթուղագծի շահագործումը հանձնվում է Հայաստանին»: Այս նույն տեղում էլ անհասկանալի է համարվում, թե ինչու պետք է Հայաստանի մարմնից պոկվեն Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը և վերածվեն ինչ որ «չեզոք շրջանի»:[2]

1919թ. կեսերից սկսած, Հայաստանի սահմանների թուրքական խախտումներն ու ռազմական ընդհարումները 1920թ. ամռան սկզբից դարձել են ամբողջական ու շարունակական: Սակայն, հայերի համար անսպասելի է եղել, որ դա կարող է վերածվել համահավաք ծրագրված պատերազմի: Կ.Սասունին այդ բացթողումը համարում է «Հայաստանի կառավարության մեծ սխալներից մեկը»:[3]

1920թ. հունիսի 6-ին Մ.Քեմալը հայտարարել է, որ իր արևելյան բանակին հրաման է տրված պատրաստվել Հայաստանի վրա հարձակման: Ի պատասխան այդ հանդգնության, 1920թ. հունիսի 18-ին Օլթիի շրջանում սկսված հայ-թուրքական ընդհարման ժամանակ հայերը հակահարձակ-

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 249, թ. 527, ԲՀԱ, թ. 1-2, 1993, էջ 274-275:

[2] «Ժողովուրդ», Թիֆլիս, 1920, օգոստոսի 14:

[3] Կ.Սասունի,Հայ-թուրքական պատերազմը, «Հայրենիք»,1926, թ. 4:

ման են անցել և շրջանից դուրս մղել Կարաբեքիր փաշայի զինվորներին: Ժամանակի, նաև այս և համանման մյուս դեպքերով է բացատրվում Բեքիր Սամիի պատվիրակության Մոսկվա մեկնելու վճիռը: Ավելի ուշ՝ օգոստոսի 14-ին, Քեմալը հարկ է համարել հայտարարելու, որ իր կառավարությունը լիազորված է առիթն ստեղծելու դեպքում գրավելու Կարսը:

Պետք էր արագ կերպով հակառակ միջոցի դիմել: Փաստորեն, հայ-թուրքական սահմանագծում ռազմական ընդհարումները գնալով խորանում էին, ընդգրկելով Զանգիբասարը, Բոյուք Վեդին, Շարուր Դալալագյազի մեծ մասը, Ղազախի սահմանագիծը: Նկարագրելով նման իրողությունը և գումարելով հաջորդած դեպքերը, Կ.Սասունին Սևրի պայմանագիրն իր ընթացքի մեջ որակում է որպես «թուղթե զենք», քանի որ դաշնակիցներից ոչ մեկը չի կամեցել օգնել Հայաստանին, գտնելով, որ «Ամերիկայեն կապված հույսերը ամենեն շատ վնասեցին հայերուն»:[1]

ՀՀ ռազմական նախարարության փաստաթղթերում պահպանվում են տվյալներ 1920թ. սեպտեմբերի 3-ի վիճակով կովկասյան ճակատում տեղակայված թուրքական ռազմական ուժերի մասին: Ըստ այդմ, Մ.Քեմալի զորամիավորումներից մեկը, որի շտաբը գտնվել է Օլթիում, իր կազմում ունեցել է հինգ գունդ: Դրանից բացի, դարձյալ եղել է առանձին մի դիվիզիա, որի կազմում Կարսի օկրուգի սահմանային տարածքում կային վեց հազար հետևակային, մեկ հրետանային գունդ: Բայազետում գտնվել է 11-րդ դիվիզիայի շտաբը, հինգ հազար հետևակայիններով՝ Իգդիրի ուղղությամբ ռազմական գործողությունների անցման նպատակով: Երզրումում գտնվել է թուրքական բանակի կովկասյան ճակատի գլխավոր շտաբը: Տեղեկացնողը հայ գեներալ Քիշմիշևն է՝ Վրաստանի հայկական դեսպանատան ռազմական ներկայացուցչության ղեկավարը: Նշենք և այն, որ ռազմական լարվածության այդ օրերին Ղազախում էլ լուրեր էին շրջում, որ սպասվում է կարմիր բանակի հարձակում կամ մուտք Հայաստան և՝ խորհրդայնացում: 1920թ. հոկտեմբերի առաջին օրերին Վրաստանի բանակի գլխավոր շտաբից հայոց բանա-

---

[1] Կ.Սասունի, նշվ. աշխ., էջ 62:

կին տեղեկացրել են. «Ադրբեջանի երկաթուղով բերվում են խորհրդային զորքեր»: Թովուզ կայարանում իջեցվում են խորհրդային բանակի 20-րդ դիվիզիայի զորամասեր և շարժվում են դեպի Նոր Բայազետի գավառի սահմանը. նպատակը Քարվանսարայի և Դիլիջանի վրա ճնշում գործադրելն է և դիվերսիոն գործողությունը...[1]

Ընդհանուր առմամբ ՀՀ արևելյան սահմանը ապահով չի եղել: Մանավանդ, որ արևելյան և հարավային կողմերից ադրբեջանական զինված ուժերը ձգտում էին կապ հաստատել թուրքական զինված ուժերի հետ, ինչը հայերին միշտ ստիպում էր մնալ արթուն պահպանի դիրքերում:

Մի հարց պատասխան է պահանջել: Ինչպե՞ս Քեմալը հանդգնեց անցնել բանակային պատերազմի: Թյուրիմացության մեջ գցեց Ռուսաստանին, իր զինվորների գլխարկներին կարմիր աստղ փակցրեց որպես թե Հայաստանը խորհրդայնացնում է և դարձի է բերում դեպի Ռուսաստան: 1920թ. ամռանը նա դեռ կանոնավոր բանակ չուներ: Ըստ որում, հունիս-հուլիսին ընթանում էր հույն-թուրքական պատերազմը, և թուրքական զորքը պարտություն պարտության հետևից էր կրում: Իսկ հունական կողմը պարտավոր էր շարունակելու պատերազմը: Հունական բանակին օժանդակելու պարտք էին ստանձնել դաշնակիցները և,մասնավորապես,Անգլիան: Այդ մասին հստակ կերպով ասվում է գրականության մեջ. «Անտանտի տերությունները Անգլիայի նախաձեռնությամբ և Անգլիայի ղեկավարությամբ դիմում են բացահայտ պատերազմի և ուղղակի զինված ներխուժման (Թուրքիայի դեմ-Հ.Կ.), դրա իրականացումը դնելով Հունաստանի վրա, որին խոստացվել էին նվեր բերել Իզմիրն ու Իզմիրի շրջանը»: 1920թ. հունիսի 22-ին հունական բանակն անցել է հարձակման և հաղթահարելով թուրքական ջոկատների դիմադրությունը, գրավել է Բալիքեսիրը (հունիսի 30-ին), Բուրսան (հուլիսի 8-ին) և Արևմտյան Անատոլիայի այլ քաղաքներ: Հույն զորքերի մյուս մասը մտել է Արևելյան Թրակիա».[2]

---

[1] ՀԱԱ, ֆ. 276, ց. 1,գ. 184, թթ. 118-121:

[2] Корсун Н. Греко-турецкая война 1919-1922гг., Москва.

Ռազմի դաշտում կրած այդ պարտությունները և ունեցած կորուստները իրենց հերթին հարկադրել են սուլթանին և նրա համախոհ աջակիցներին ստորագրելու Սևրի պայմանագիրը: Եվ, այդուհանդերձ, սևրյան փաստաթուղթը չստորագրած Մ.Քեմալը, որպես հակասևրյան քայլ, հանդգնել է զենքի դիմել Հայաստանի դեմ, որին իրենց դաշնակից էին համարում Անտանտի տերությունները և նրան տարածքներ շնորհելու հույս հորդորում: Իսկ հայերի դեմ թուրքական հարձակման խմորման փուլում դաշնակից տերությունները սաստել էին Քեմալի զորքերի դեմ հաջող պատերազմ մղող է.Վենիզելոսին՝ հարկադրելով նրան դադարեցնել իր գործողությունները հույն-թուրքական ճակատում: Ըստ որում, դա արվել է այն պահին, երբ Քեմալն ինքն էլ պատրաստակամ էր պատերազմն ընդհատելու և խույս տալու, մանավանդ, երբ նրա կես բանակային-կես պարտիզանական ուժերը ի վիճակի չէին հաջող մարտ մղելու, և պատերազմը Հունաստանի դեմ, փաստորեն, տանուլ էր տրված:

Եվ, դարձյալ, շեշտում ենք հարցը. ինչպե՞ս է, որ թուրքերին հաջողվել է պարտություն բերող պատերազմից խույս տալ և ինչու՞ պետք է՝ 1) հաղթող է.Վենիզելոսը ետ քաշվեր կռվի դաշտից և արդյո՞ք՝ 2) այդ նրա երազած ցանկությունն էր՝ մտնել պատերազմի դաշտ, իր ախոյանի դեմ հաջող մարտեր մղել ու կես ճանապարհին դադարեցնել կռիվը: Եթե դա, դիցուկ, եղել է այն պատճառով, որ Վենիզելոսի ուժերը նվազել են կամ վերջին փամփուշտներն էին մնացել, ապա էլ ո՞ր օրվա համար էին դաշնակիցները և նրանց ղեկավարների թվում այդ պատերազմով այնպես շահագրգռված է.Վենիզելոսին դեպի ռազմի դաշտ քաջալերած Դ.Լլոյդ Ջորջը...

Հունաստանի հետ պատերազմը ընդհատելուց հետո պարտված Քեմալի ձեռքերն ազատվում են արևելյան ճակատում Հայաստանի դեմ նվաճողական ծրագրեր իրականացնելու համար: Այդտեղ վիճակը «հրատապ» էր և Քեմալը չէր ուզենա Հայաստանի նեղն ընկած լինելու առիթը ձեռքից բաց թողնել: Չմոռանանք, Մոսկվայից գալիս էր ոսկին, ուղարկում էին զենք ու զինամթերք: Միջոցները պատրաստ էին, մնում էր գործողությունը: Հունական ճակատն էլ դեռ կարելի էր առժամապես հետաձգել: Այս դեպքում թուրքերը հայտնվել

էին Հայաստանի նկատմամբ շուտափույթ, առանց հետաձգելու, քանի դեռ պահը ձեռքից բաց չէր թողնվել, հաշվեհարդար տեսնելու հնարավորության առջև:

Բացառված չէր, որ Հունաստանի հետ հապճեպ պատերազմի դադարեցումը գլուխ բերելը կարող էր կապված լինել նաև երկու ճակատում միաժամանակ կռվելու աննպատակահարմարության կամ անկարողության հետ: Հույն-թուրքական կռիվը ընդհատվել է 1920թ. հուլիսին ու վերսկսվել ուշ, 1921թ. հունվարի 10-ին, երբ նոր զենքով ու հանդերձանքով հագեցած Քեմալի զորքը, որն այլևս բանակ էր, այլ ոչ խաժամուժ, կանգնեցրել է հույների առաջխաղացումը:

1920թ. սեպտեմբերի վերջին օրերին նախընթաց փուլի մերթ ընդ մերթ դադարեցվող կռիվներին հաջորդում է Հայաստանի դեմ թուրքական բանակի հարձակումը անհամեմատ լայն ճակատով: Այդ ժամանակ արդեն Քեմալի ջանքերով հայթայթված զենքերը արևմտյան ճակատից տեղափոխվում էին արևելյան, իսկ սևրյան փաստաթուղթն ստորագրած գլխավոր հեղինակային կազմը մոռացել էր Հայաստանի վերամիավորվող տարածքների նկատմամբ իր ստորագրության ինքնապարտավորեցումը: Դա թերևս, բացի Մեծ Բրիտանիայից, քանի որ նա պատերազմի թեժ ժամին, օգտվելով հանգամանքից, հայ զինվորին ծանոթ ռուսական «Մոսին»-ի փոխարեն թանկ գնով, նրա համար անվարժ կարաբին պոչատ հրացանն էր վաճառում:

Եվ դարձյալ եղել է շփոթություն, քանի որ հստակ չէր որտե՞ղ քեմալականները, ովքե՞ր են բուն ճակատային զորամասերից բացի Նախիջևանի, Զանգիբասարի, Աքսիբաբայի, Գյուղահովտի, Փարախլիի, Մազմալիի կողմերից զինված խմբերով, բուն ճակատային զորամասերից բացի, վխտողներն ու կրակ արձակողները:

Այդուհանդերձ, 1920թ. ապրիլի 23-ից Անկարայում Քեմալի իշխանության գլուխ անցնելուց մինչև Հայաստանի խորհրդայնացումը ու 1921թ. մարտի 16-ի Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը սևրյան վճռի ոտնահարման պայմաններում Հայաստանն ու հայ ժողովուրդը շարունակել են տարածքներ կորցնել:

Դա եղել է ՀՀ-ին խոստումներ տալու, հուսադրելու պայմանով: Ամեն ինչ եղել է, բացի խոստումները կատարելուց: Հուսամոլոր հայ զորականը մահու և կենաց կռվի է նետվել: Նրա շարքերը սկսել են երերալ, առանց Ռուսաստանի ու իրենց սովոր ռուս զինվորների: 1920թ. սեպտեմբերի 29-ի Սարիղամիշը հանձնելուն հետևել է 30-ին Արդահանի գրավումը և ապա հոկտեմբերի 30-ին Կարսի, նոյեմբերի 7-ին Ալեքսանդրապոլի հանձնումը: Հայ բանակն ու հայ ժողովուրդը մնացել էին առանց Ռուսաստանի աջակցության:

* *
*

ՀՀ կառավարությունը հարկադրված դիմեց դաշնակիցների շուտափույթ օգնությանը: Եթե դաշնակիցները հայոց բարեկամներ էին և Սևրի պայմանագրի իրենց ստորագրության տերը, պետք է որ նրանք Հայաստանին օգնության հասնեին և սաստեին Քեմալին: Ժամանակին նման ոգով ու պահանջով դիմումներ են հղվել Թիֆլիսում Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի դեսպաններին: Դիմումներ են հասցեագրվել նաև Վենիզելոսին՝ առաջարկով, որ Հայաստանի արևմտյան կողմում թուրքերին սաստիչ ահազանգեր լիեն: Ի պատասխան, եղել են հատ ու կենտ օգնելու խոսքեր, հայությանը ոգեշնչման հուսադրումներ և մանավանդ նրա որդիներին բարի ցանկություններ:[1]

Դաշնակիցները մտահոգ էին, որ դժվարին պահին Հայաստանը չհակվի դեպի Ռուսաստանը: 1920թ. օգոստոսի 24-ին ֆրանսիական գնդապետ Կորբելլը Հ.Օհանջանյանին դժգոհեց պայմանագրի առթիվ: Դժգոհ ոգով են արտահայտվել նաև ֆրանսիական բարձրագույն կոմիսար Մարտելը, անգլիական գերագույն կոմիսար Լյուկկը: Բավական ժամանակ անց, 1920թ. սեպտեմբերի 14-ին, Մոսկվայից Երևան վերադարձավ Լ.Շանթը, իսկ հոկտեմբերի 11-ին Թիֆլիսից՝ Բ.Լեգրանը:[2] Հաջորդ օրը սկսվեցին բանակցությունները:

---

[1] Այս պատմության 1920թ. հունիսից մինչև հոկտեմբերի 2-ի նյութերի հանգամանալից հավաքածուն տես- ԲՀԱ, թ. 3, 1967, էջ 60-98:
[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թթ. 29-37, 85; ֆ. 276, ց. 1, գ. 191, թ. 68:

1920թ. հոկտեմբերի 28-ին Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվել է համաձայնություն, որը հռչակում է. «Ռուսաստանը անվերապահորեն ճանաչում է հայկական պետականության ինքնուրույնությունն ու անկախությունը և կամովին հրաժարվում է Հայաստանի ժողովրդի և նրա տարածքի նկատմամբ Ռուսաստանի ունեցած բոլոր սուվերեն իրավունքներից: Ռուսաստանը արդարացի է համարում Թուրքահայաստանի մարզերի միացումը ՀՀ և պատրաստ է բարեկամաբար ազդել դաշնակից տերությունների վրա զանազան մարզերը կամ դրանց մասերը Հայաստանին փաստական միացման նպատակով»:[1] Սա արդեն երևույթ էր դիվանագիտության և քաղաքականության պատմության մեջ. երբ կողմերի միջև դեռ շարունակվում է պատերազմը և արդեն Թուրքիան հաջողացրել է ՀՀ նոր տարածքներ զավթել, երբ հայկական կողմը նահանջում է տարածքներ հանձնելով, և հանկարծ ստորագրվում է փաստաթուղթ, որում Ռուսաստանը արդարացի է համարում անցյալում Թուրքահայաստանի գրավված տարածքների միավորումը ՀՀ-ին և վերջերս գրավված հողերի լրիվ կամ մասամբ վերամիավորմանը օգնելու պատրաստակամություն ստանձնում: Երևույթ, երբ, ինչպես ասում են, երկաթը տաք-տաք է ծեծվում:

Նման իրավիճակում Հայաստանին մնում էր ընդամենը ճիշտ կողմնորոշվել և այն էլ ճիշտ ժամանակին:

Սևրը ստորագրելը անչափ հրապուրիչ էր: Սակայն, խնդիրը լուծվեց դեպքերի թելադրանքով ...

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 869, թ. 1-2:

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔԸ ԵՎ ՀԵՐԹԱԿԱՆ ԽԱԲԿԱՆՔԸ

Սևրյան փաստաթուղթը ստորագրելուց կարճ ժամանակ անց, դաշնակից տերությունները սկսել էին Թուրքիայի նկատմամբ ներողամտություն հանդես բերել: Իսկ հայության գաղթական դարձած զանգվածները դեգերում էին դարձյալ սովի ու անօթևանությանը մատնված: Անտանտի տերությունները չէին զլանում հայությանը բարեգործական օգնության հույսեր ներշնչել:

Սևրյան փաստաթուղթը ստորագրված էր, Արևելյան Հայաստանին Արևմտյան Հայաստանից վերամիավորելու ենթակա տարածքները՝ Սևրով պարզորոշված:

Սևրյան վճիռները ևս առիթ են ծառայել Ռուսաստանի հետ Քեմալի դիրքորոշման մշակմանը: Քեմալը հզորանալ էր ցանկանում և միջոցների մեջ խտրություն չէր դնում: Մոսկվան նրա համար դիտվում էր որպես հենարան և հրապարակորեն արդեն ակնհայտ էր դառնում, ինչպես ասվել է «Թուրքիայի բոլշևիկացումը»՝ իրականություն կեղծ: Ժամանակին փարիզյան թերթը այդ մասին հստակ շեշտել է, որպեսզի. «դադարեցվի բոլշևիկացումը»:[1] Ինչպե՞ս: Թերթը պատասխանում է. «Այդ բոլորը հնարավոր է միայն Սևրի պայմանագրի վերականգնմամբ»: Դա նշանակում էր՝ հրաժարվել այդ փաստաթղթում առկա Թուրքիային կաշկանդող, նրա դիրքերը թուլացնող, ավելացնենք նաև՝ տարածքներ վերադարձնող հոդվածներից ու պարտավորություններից: Պարզ ու որոշ է, որ առաջին հերթին վերաբերվում է Սևրի պայմանագրի Հայաստանին մասին հոդվածներին, չնայած նրան, որ դրանք ոչ մի իրական արձագանք չէին ստացել և Հայաստանին համար նպաստավոր որևէ պահանջ չէր իրականացվել:

Միակ իրականը այն էր, որ Ֆրանսիայի արտգործնախարար Ա.Բրիանը համաձայնվել էր հապճեպ Կիլիկիայից

---

[1] Вестник НКИД, 1921, N 1-2, с.132.

հանել ֆրանսիական զորքերը: Այդ նշանակում էր անգեն հայերին մատնել յաթաղանի հովանավորությունը:

Նկատենք, որ հայերը միշտ հավատ են տածել Ֆրանսիայի ու նրա առաջադեմ գործիչների խոստումների նկատմամբ: Ավ.Ահարոնյանը 1920թ. հոկտեմբերի 23-ին Փարիզում այցելել է Ֆրանսիայի վարչապետ Ժ.Լեյգին և լսել հավատարմության բառեր. «Լեյգը շատ սիրալիր էր, շատ քաջալերիչ կերպով ինձ լսեց ու ասաց, թե «Ձեր միտքը» արժանի է խորին ուշադրության և ես դրանով լուրջ զբաղված եմ: Իրավունք ունիք, Հայաստանի վտանգը մերն է: Հավատացեք, որ մենք չենք լքի նրան: Դուք գիտեք, թե ես անձնապես որքա՜ն համակիր եմ ձեզ»:[1]

Ժամանակին եղած կարծիքների մեջ գերակշռողն այն էր, որ ԱՄՆ պարտավորություն ստանձներ ՀՀ նկատմամբ: Այդ հարցը պահանջում էր վաղօրոք հանգամանալից քննարկում: Այս հարցը մանրակրկիտ հետազոտող Ա. Նասիպյանը բրիտանական նյութերի հիման վրա եզրակացնում է. «Բրիտանիան տրամադիր չեղավ դրամը վատնելու կամ մարդ ղրկելու հեռավոր և անմատչելի մի երկրի վրա, որը և ոչ էլ տնտեսական տեսակետով, իրեն չէր շահագրգռում: Ամայի մի երկիր էր այն, որը միայն թշվառությամբ էր հարուստ »:[2]

Բրիտանական հայտնի գործիչ էյր Գրոուն կանխագգացել է, որ «հետագա հայկական ջարդերի դեմ պետք է, որ մի շարք երաշխավորություններ պահանջվեն», իսկ Ռոբերտ Սեսիլը պնդել է, որ որոշ նախատեսություններ «պետք է կատարվեն հայությունը պաշտպանելու համար»: Մարկ Սայքսը անհրաժեշտ է գտել, որպեսզի դաշնակիցները գրավեն Կիլիկիան, և առաջարկել, որ բրիտանական մամուլը տուրք չտա թուրքասիրության և թերթերն էլ աջակից լինեն հայկական վիլայեթների բնակչության ինքնապաշտպանությանը:[3]

Սակայն, իրադարձությունների փոփոխմանը զուգընթաց Անտանտի տերությունները հասկանում էին, որ իրենց

---

[1] Ավ.Ահարոնեան, Սարդարապատից մինչև Սևր եւ Լօզան, էջ 94:
[2] Նասիպեան Ա., Բրիտանիան եւ հայկական հարցը, Պեյրութ, 1994, էջ 127:
[3] Նասիպեան Ա., նշվ. աշխ., էջ 130:

շահերից ծռնտու չէ Քեմալի հետ կապի բացակայությունը: Ակնհայտ է դառնում, որ Սևրի պայմանագրի, մասնավորապես,«Հայաստան» բաժնի վրա պնդելը նշանակում էր իրենց դեմ ավելի սրել Մ.Քեմալի թշնամական վերաբերմունքը:

1920թ. հոկտեմբերի 5-ը հայ-թուրքական պատերազմի թեժ կործանարար ժամն է: Հայերը պարտվում են, դռներ բախում, օգնություն հայցում և ակնկալում:

Վրաստանում ՀՀ դեսպան Տիգրան Բեգզադյանը այցելում է բրիտանական ներկայացուցիչ գնդապետ Ստոքսին: Վերջինս իսկույն սեղանի դարակից հանում է մի ամբողջ գործ, ցույց տալիս հեռագրերի մի կույտ և ասում, որ ինքը շարունակ հեռագրում է օգնության մասին և մինչ այժմ ոչ մի պատասխան չի ստացել: Նրա կարծիքով դա նշանակում է, որ Եվրոպան կամ անկարող է և կամ չի ուզում օգնել. «Երկու դեպքում էլ, սակայն, հետևանքը մեզ համար նույն է, որովհետև այն այդպես է, ուրեմն դուք ազատ եք անելու այն ամենը, ինչ որ հարկավոր կգտնեք ձեր ժողովրդին փրկելու համար»:[1] Ըստ էության, նույն կարծիքը հայտնեց նաև Ֆրանսիայի ներկայացուցիչ Կորբելը, իսկ Իտալիայի ներկայացուցչին հարկ չի եղել դիմելու, քանի որ նրա անհուսալի կարծիքը արդեն հայտնի է եղել: «Այդպիսով բոլորը, - գրում է Տ.Բեկզադյանը, պարզ և կտրուկ կերպով մեզ հայտարարեցին, որ մենք պետք է մեր գլխի ճարը տեսնենք»: Հաջորդ անգամ Ստոքսը առիթ է ունեցել կարծիք հայտնելու 1920թ. նոյեմբերի 11-ին. «Եթե ինքը լիներ Անգլիայի կառավարիչը, ապա կաջակցեր քեմալական շարժմանը և աջակցելով Քեմալին, Անգլիան կբարձրացներ իր ընկած հեղինակությունը մահմեդական աշխարհում»:

Իզուր էր Ստոքսը շտապում: Արդեն խմորված էր նրա տերության մահմեդական սիրավեպը: Տ.Բեկզադյանը կառավարությանը եզրափակիչ խոսք հայտնեց. «Պարզ էր, որ մենք անգլիացիներից այլևս սպասելիք չունենք»:[2]

1920թ. նոյեմբերի 11-ին ՀՀ կառավարությանը Ռուսաստանը առաջարկեց նրա և Թուրքիայի միջև միջնորդ լինել:

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թթ. 10-13:
[2] ԲՀԱ, թ. 3, 1967, էջ 77:

Միաժամանակ, Թուրքիայի կառավարությունն էլ Հայաստանի հետ բանակցելու համար դիմել էր Ռուսաստանին: Հայտնի է և այն, որ Ռուսաստանն էլ Հայաստանի հետ բանակցելու համար իր հերթին, տվել էր իր համաձայնությունը, և անհապաղ գործողությունների վայր ուղարկել իր լիազոր ներկայացուցիչ Բուդու Մդիվանին:

Հայոց դիվանագետների ու քաղաքագետների համար խրթին վիճակ է սկսվում: Այսուհետ, նրանց կողմից, Սևրի պայմանագրից հրաժարվելը չէր նշանակում սոսկ մի պայմանագրից հրաժարում:

Քաղաքական այս խառնաշփոթի պայմաններում Ռուսաստանը ջանում էր նպաստավոր քայլեր կատարել կործանման եզրին հասած ժողովրդի գոյատևման համար: Ետին թվով նկատենք, որ ըստ այդմ, դեռ 1920թ. հոկտեմբերի 28-ին ՀՀ և Ռուսաստանի միջև հաշտության պայմանագրի մի տեքստ է ստեղծված եղել, հավանաբար հայոց համար այդ թոհ ու բոհի օրերին մեջտեղ բերելու նպատակով: Դրա 4-րդ հոդվածում Ռուսաստանը ընդունում է, որ ՀՀ կազմում անվերապահորեն մտնում են նախկին Ռուսական կայսրության հետևյալ նահանգներն ու մարզերը Երևանինն ու Կարսինը իրենց բոլոր գավառներով և օկրուգներով հանդերձ, Ելիզավետապոլի նահանգի Ղազախի գավառը, Քարվանսարայով և Դիլիջանով: Կողմերը տվյալ պահին ճանաչել են, որպես Հայաստանի բաղկացուցիչ մաս կազմող, այնպիսի տարածքներ, որոնք արդեն թուրքերի կողմից զավթված էին:

Հարցը 1920թ. նոյեմբերի 4-ին քննարկվել է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղ.բյուրոյի և ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի միացյալ նիստում: Այդտեղ Բ.Լեգրանը հանդես է եկել ՀՀ դրության վերլուծությամբ: Սպասվող շրջադարձային պահի շեմին, քննարկվել է դարձյալ Հայաստանի տարածքների հարցը: Առաջարկ է եղել Հայաստանին Նախիջևանը և Զանգեզուրը վերդարձնելու մասին, ինչը սակայն տվյալ պահին դեռևս նպաստավոր չի համարվել «թե՛ քաղաքական, թե՛ ստրատեգիական տեսակետից, որպեսզին կարելի էր ընդունել միայն ծայրահեղ դեպքում»:[1]

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ. 623, թ. 2:

Ի միջայլոց՝ Բ.Լեգրանը լրացուցիչ տեղեկացրել է. «Եթե հայերը հրաժարվեն Սևրի պայմանագրից, Ռուսաստանը իր ռազմական միջամտությամբ կստիպի, որ Թուրքիան ետ դառնա մինչև Ռուսաստանի նախկին պետական սահմանները՝ խոստանալով, որ Հայաստանի անկախությանը ձեռք չի տրվի և Հայաստանը չի խորհրդայնացվի»:[1]

Բ.Լեգրանը նախապես Թիֆլիսում Տ.Բեգզադյանին, հույս էր ներշնչել, որ Ռուսաստանը թերևս կարողանա դժվարին այդ պահին, օժանդակություն ցույց տա Հայաստանին: Բայց հետևանքները իրական չեն եղել: Պարզվել է, որ այդ օժանդակությունը կարող էր իրոք լինել, եթե Հայաստանը խոստանա Սևրի պայմանագրից հրաժարվել և ընդունել Ռուսաստանի հովանավորությունը: Այդ դեպքում, Ռուսաստանը խոստանում է առաջարկել Թուրքիային, վերադառնալ մինչև Ռուսաստանի նախկին պետական սահմանները, որոնք՝ փաստորեն՝ Հայաստանի պատմական և իրական տարածքներն են: Դրա հետ մեկտեղ Բ.Լեգրանը, խոստացել է, որ Հայաստանի անկախությանը ձեռք չի տրվի և նրան սովետականացման չեն ենթարկի:Պահանջվել է միայն «պատասխանը շտապ տալ»:[2]

Թիֆլիսում գտնվող դիվանագետները, հատկապես Ստոքսը, խուսանավում էին՝ աշխատելով Թուրքիայի շահերին չդիպչել և հայոց պահանջներն էլ՝ ըստ էության՝ շրջանցել:

Ստոքսը սոսկ մի անձ չէր, նա հետպատերազմյան օրերի ելևէջներով ընթացող անգլիական արտաքին քաղաքականության խուսափողն էր: Այսպես է նրան բնութագրել Հ.Օհանջանյանը 1920թ. նոյեմբերի 24-ին: Ստոքսի կիրառածը, տվյալ պահի անգլիական քաղաքականությունն է: Այս առումով, ուշագրավ նշվում էր. «Ստոքսը անպայման կապ կունենա քեմալի գործակալների հետ»:[3]

Քաղաքականությունը մերթ բարոյականությունն է ու անբարոյականությունը, մերթ ճիշտ է ու սխալ՝ նայած երբ և ինչ պարագայում, մերթ խաբուսիկ է ու հավանական, մերթ

---

[1] ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ.107, թթ. 35-37; ֆ. 276, գ. 191, թ. 68:
[2] ՀԱԱ, ֆ. 276, g.1, գ. 19, թ. 64:
[3] ՀԱԱ, ֆ. 276, g. 1, գ. 19, թ. 55:

հրապուրիչ է, մերթ վանող և բոլորն էլ ճիշտ են և սխալ, նայած ժամանակին, տեղին ու դերին:

Լոնդոնում 1920թ. դեկտեմբերի 4-ին Հայաստանի հարցը քննարկվել է Ազգերի Լիգայի կազմում ընդունման առումով և մերժվել, իսկ անդրադառնալով Սևրի պայմանագրին պատճառաբանվել է, որ այն «դեռևս վավերացված չէ», ուստի դեռ վաղ է Հայաստանը անկախ պետություն ճանաչելու հարցադրումը (տարօրինակ է. հարցը քննարկել, վերջում են կռահել, որ պետք է վավերացված լիներ): Հարցականի տակ դնելով Հայաստանի սևրյան տարածքների Վիլսոնի գծագրման օրինականությունը ու հաստատումը՝ պատճառաբանվել է, որ դրանք պետք է դեռ առկա պայմաններում հանգամանորեն քննարկվեն, քանի որ վստահություն չի եղել, թե Ազգերի Լիգային անդամակցող տերությունները՝ տվյալ պահին պատասխանատվություն կստանձնեն երաշխավորելու կամ պաշտպանելու դրանք»:[1]

Սևրյան վճիռները, դրանց ընդունման օրից անցած ժամանակամիջոցում շատ են իմաստազրկվել:

Հարց քննողները նկատում են, որ պահանջվող տարածքները Հայաստանին շնորհելը, կնշանակի իրենց իսկ Լիգայի անդամներին դնել անհարմար դրության մեջ:

Այդ կապակցությամբ, պարզորոշ նշվել է «ներկայումս Հայաստանը չպետք է ընդունվի Ազգերի Լիգա»: Սա էլ մի նոր, արգելակիչ վճիռ: Որպես Ֆրանսիայի կարծիք հնչել է. «Տվյալ պահին Հայաստանի ընդունումը Լիգա՝ մեծապես վտանգավոր և անխոհեմ քայլ է»:[2]

Բայց չէ որ օգոստոսի 10-ի Սևրյան փաստաթղթի տակ դրված էին նաև խորհրդաժողովին մասնակցող Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի կառավարությունների ստորագրությունները, որոնք պետք է, որ վերը նշված չորս վիլայեթների սևրյան հանձնման վերաբերյալ տերությունների վավերագրորեն հռչակելու մասին իմանային: Համենայն դեպս, Վ.Վիլսոնի առաջարկի մասին երաշխիք չի տրվել, գտնելով, որ դա «անհեթեթ վիճակ կստեղծի», քանի որ հնարավոր է

---

[1] Հայաստանը .... փաստաթղթերում, էջեր 688-691:
[2] Հայաստանը .... փաստաթղթերում, էջեր 688-689:

կարծել, որ Լիգայի անդամները սխալ տարածքներ կառաջադրեն, «որոնք չէին կարող զենքի ուժով պահպանել»: Այդ էլ անլուրջ բացատրություն է: Եթե նախապես ենթադրվում էր, որ վճիռները կարող են խրթին լինել, ապա վաղօրոք ջանք գործադրեիք դրական արդարացիության և իրականացման գործնական ձևերի ու միջոցների ապահովման մասին:

Այդ քննարկման օրերին՝ 1920թ. նոյեմբերի 26-ից դեկտեմբերի 4-ը, հազիվ թե աշխարհի տիրակալները հայ-թուրքական պատերազմի ավարտի և արդյունքների մասին լսած չլինեին: Սակայն, փաստ է, որ ոչ մի առաջարկ չի արվել: Անտեղյակի կեցվածքով, քննարկվել է Հայաստանին Ազգերի Լիգայի մեջ ընդունելու հարցը և անուշադրության է մատնվել «քանի որ Հայաստանի սահմանները, դեռևս որոշված չեն եղել»: Դա էլ որպես իբրև պատրվակ:

Բայց ի վերջո, ո՞վ էր ետ վերադարձնելու գրավված տարածքները և դրանք›ըստ էության›ինչպես էին վերամիավորվելու: Ոչ մի տեղ և ոչ մի ձևով դա չի արծարծվել: Ընդհակառակը, քեմալականների ձեռքերը այդ ընթացքում և դրանից հետո ևս ազատ էին մնացել՝ մինչ այդ ունեցած զենքի պաշարների և բանակային կազմի զգալի ավելացմամբ: Դարձյալ տարօրինակ հարց՝

Մի՞թե Վիլսոնը չգիտեր թուրքերի հարձակման, հայոց հողերի նվաճման, հայ ժողովրդի ողբերգության մասին: Սահմաններ գծագրելու իր պարտավորությունը կատարելու հետ մեկտեղ, գոնե մի հեռագիր հղեր, ողբերգությունը հասցնելու և հանձնվող հողերը գծագրելու իր աշխատանքի մասին: Այլապես ու՞մ համար և ինչո՞ւ էր դա կատարվում:

Հարցը սրվել է և նոր փուլ մտել: Կարծես թե վճիռ կայացնողները սթափվում և նոր են քնից արթնանում: Հայաստանին իր ազգային տարածքները վերադարձնելը, այլևս համարվում է աննպատակահարմար և անգամ վտանգավոր: Ըստ որում, դա այն դեպքում, երբ փաստաթղթում ակնարկ անգամ չի արվում ՀՀ զգալի մասը Թուրքիայի կողմից զավթելու և միացած տարածքը Ռուսաստանի հովանավորությանը հանձնվելու մասին: Ստացվում է, որ այդ զավթումից հետո անգամ, զգուշանալով, դաշնակից տերությունները Հայաստանին օժանդակելու և ապավեն կանգնելու որևէ ակնարկ

չեն անում: Եվ Հայաստանը Ազգերի Լիգայի կազմում չընդգրկելը ի վերջո պատճառաբանվում է, որպես թե՝ Սևրի պայմանագրի 88-րդ հոդվածից բխող դժվարություններով և «Հայաստանի սահմանները դեռևս որոշված» չլինելով: Հայաստան ասելով նկատի են առնվում արևմտյան վիլայեթները, չանելով փաստաթղթում որևէ ակնարկ Արևելյան Հայաստանի մասին: Հայաստան հռչակվածը այն վիլայեթների ամբողջությունն է, որ մատնացույց արվեց սևրյան փաստաթղթում:

Միաժամանակ, խորհուրդը գտել է որ, հին վճիռները, իբրև թե, սպառել են իրենց և անհնար է Արևմտյան Հայաստանի բնարմատ տարածքում վերականգնել, վերահաստատել հայության զանգվածային վերաբնակությունը: Այնուհանդերձ, հարկ է համարվել մտածելու այդ ուղղությամբ և առաջարկներ կատարելու, «որպեսզի հետագայում խորհրդին միջոց տրվի նոր որոշումներ կայացնելու»:[1]

Հին վճիռները այլևս դակվում են, որպես իրենց սպառած: Այսուհետ խոսքը վերաբերվում է նոր որոշումներ կայացնելուն:

Ահա, այդ պարագայում է, որ Ազգերի Լիգայի 1921թ. սեպտեմբերի ընդհանուր ժողովում, վճռվելու է Սևրի պայմանագիրը վերանայել և «աչքի առջև ունենալ հայերի համար ազգային օջախ ստեղծելու գաղափարը»: Եվ այսուհետ, «օջախ» բառն ու գաղափարը, ժողովուրդների պատմության մեջ, թեև առաջին անգամ, հրապարակ են հանում նաև այդ նոր իմաստով: Այն դեպքում, երբ ենթադրվում էր, որ առաջիկայում ծագելու է թուրքերի հետ դաշնակիցների պայմանագիր կնքելու հարցը:

Իսկ մինչ այդ, 1921թ. մարտի 12-ին, դաշնակիցների համաժողովի հաստատմանը մատուցվել է բուն սևրյան փաստաթղթի իմաստափոխված մի տարբերակ, ըստ որի թուրքահայերի պահանջները պիտի իրականանային երկրի արևելյան սահմաններում, ազգային օջախի ստեղծմամբ, որը հաստատվելու էր «Ազգերի Լիգայի Խորհրդի կողմից և

---

[1] Ալ.Խատիսեան, Հայաստանի հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 352:

բաղկացած էր լինելու այնպիսի հողամասերի պահանջով, «որոնք արդարացի կլինեին այդ նպատակի համար»:

1921թ. սեպտեմբերի 21-ին Ազգերի Լիգայի բացատրությամբ օջախ կոչվածը լինելու էր Թուրքիայից միանգամայն անկախ, իսկ հետագայում՝ 1923-ին, այն ենթադրվում է և դրակցվում, որպես թուրքական հողամաս:[1]

Նկատենք և այն, որ 1921թ. փետրվարի 25-ին Ազգերի Լիգայի Խորհուրդը քարտուղարությանը հանձնարարած է եղել. «Հետևելով Հայաստանում դեպքերի ընթացքին՝ նոր առաջարկներ ներկայացնել, իրական Հայաստանի նկատմամբ, համապատասխան վճիռներկայացնելու համար»: Այնուամենայնիվ, հանձնարարություն եղել է: Այսքանը:

Ժողովրդի մտամոլոր այդ պահին, հարցի լուծման ինքնին հայտնի այդ, նախապես խոստումներ տալու ձևը, նոր թյուրիմացության մեջ է գցում հայությանը: Դրանից թուրքերն օգտվում են ավելի հեշտ ու ըստ հնարավորին, շատ հողեր զավթելու համար:

1921թ. Թուրքիան երկու անգամ պայմանագիր է ստորագրել, որը ծանր անդրադարձ է ունեցել Կիլիկիայի հայության ճակատագրում: Մեկը 1921թ. մարտի 9-ին, Լոնդոնում, Ֆրանսիայի հետ: Դրանում թուրքական կողմը Կիլիկիայի հայության կյանքի ու գոյության ծանր պայմաններ է առաջարկել, իսկ Ֆրանսիան էլ դրանց տակ ստորագրել է: Կիլիկիահայությունից պահանջվում էր լիակատար զինաթափում, որից հետո թուրքական կողմը կկարողանար զենքի ուժով ահաբեկել երկար դարեր Կիլիկիայում ապրած հայությանը և նրանց իրենց բնօրրանից դուրս մղել: Այդ նշանակում էր, որ նյուն կիլիկիահայությունը, զրկվում էր Ֆրանսիայի հետ այլևս հույսեր կապելուց, որին նա այնքան հավատացրել էր ու վստահել: Չնայած նրան, որ ստորագրված փաստաթղթում ֆրանսիական կողմը պարտք է ստանձնում հոգատար լինել Կիլիկիայի հայկական օջախների բնարմատ հայության նկատմամբ, նույն Կիլիկիայում տեղակայված ֆրանսիական ռազմական ուժերի ներկայությամբ, թուրքերը այդ վայրերից հայությանը զենքի ուժով դուրս էին մղում: Կարճ ժամանա-

---

[1] Ալ.Խատիսեան, նշվ.աշխ., էջ 352:

կում, նշված վայրերում, հայ բնակչության թիվը 35 հազարից իջնում է 12 հազարի: Իսկ Ֆրանսիայի վարչապետ Արիստիդ Բրիանը լուռ անտարբերություն էր պահպանում:

Նույն թվի հոկտեմբերի 20-ին դարձյալ Ֆրանսիայի հետ Քեմալը Անկարայում կնքեց նոր պայմանագիր:

Առաջին իսկ հոդվածով Թուրքիայի պատերազմը և Ֆրանսիայի միջև հռչակվում էր ավարտված: Իսկ ինչպես որակել Կիլիկիայի հայության արտաքսումն ու կոտորածը, որը լեռների հեռվից դեռ շարունակվում էր: Եվ ապա, որպես 2-րդ հոդված, պատերազմող կողմերի գերիները, ինչպես նաև ձերբակալված թուրքերն ու ֆրանսիացիները, որոնք դեռ բանտերում էին ու աքսորավայրերում, «ազատագրվելու և ուղարկվելու էին, դրա համար նախատեսվող մոտակա քաղաքները»: Բայց միթե Թուրքիայում միայն ֆրանսիացի գերիներն էին բանտարկված: Փաստաթուղթը այդ մասին լռում է: Մինչդեռ հայերի թիվը մեծ էր: 6-րդ հոդվածով հղում էր կատարվում սոսկ «ազգային փոքրամասնություններին», որից դժվար թե եզրակացվեր, թե դա նաև հայերին է վերաբերվում: Եվ այդ լռության պայմաններում, անէացվում է «Կիլիկիան Հայաստանի» ազգային պատկանելության այդ անէացվումը, ակնհայտորեն նկատվում է 6-րդ հոդվածում, որտեղ անորոշ ձևով նշվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները, որոնք հանդիսավոր կերպով ճանաչված են Թուրքիայի Ազգային ուխտում, հաստատվելու են նույն այն հիման վրա, որ հաստատված է Անտանտի տերությունների և նրանց հակառակորդների կողմից»:[1]

Այս բառերի տակ անէացված է խնդրի բուն էությունը: Դեպքերի ընթացքը ցույց տվեց, որ այդ շարադրության խորքում, Թուրքիան իր համար պարտք է համարել «Կիլիկիայի բնակչության զինաթափումը», ինչը ուղեկցվել է ահավոր կոտորածով»:[2] Սկսված պատերազմով էլ լրացուցիչ տարածքներ զավթեց հայերին խոստումներ տվող փաստաթուղթը ստորագրող-չիրականացնողների թողտվության և

---

[1] Р.Саакян, Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923гг., Ереван, 1986, сс.151-152.

[2] Р.Саакян, указ. соч., с. 155.

անուշադրության պայմաններում, որոնք, փաստորեն, նույնպես նվաճողական գործողությանը մասնակից ու աջակից պետք է համարվեն:

Սակայն, այդ ստորագրությունները հայոց համար ճակատագրական եղան: Ցուցադրվեց, թե ուր որ է խոստացված տարածքները շնորհվելու են Հայաստանին, մինչդեռ իրականում կատարվեց հակառակը տրվեցին թուրքական կողմին: Ապա, կարճ ժամանակ անց, Անտանտի տերություններից ոչ մեկը, նշանակություն չտալով Սևրում իր ստորագրությանը, Հայաստանին աջակից լինելու պարտքի նշույլ անգամ չցուցաբերեց, ինչից ազատ շունչ քաշած Մուստաֆա Քեմալը իր զորքերն ուղղեց դեպի Արևելյան Հայաստան:

Փոխված իրավիճակում, դաշնակից տերությունների հոգսը հետևյալն էր. կասեցնել Հայաստան-Ռուսաստան մերձեցումը և Թուրքիայի նկատմամբ Հայաստանի պահանջները ծառայացնել մերձավոր Արևելքում Թուրքիայի դիրքերի թուլացմանն ու իրենց ազդեցության հետագա ուժեղացմանը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ բրիտանական արտգործնախարար Քերզոնը նշում էր, թե Կովկասը այժմ «գործողության երկրորդական թատերաբեմ է», իսկ ռազմածովային նախարար Ու.Չերչիլը պնդում էր երկրամասից իրենց արագ հեռացման պարագայի վրա, քանի որ այնտեղ բրիտանացիները այլևս շահեր չունեին»[1]: Ճիշտ չէ՝, շահեր ունեին, բայց Ռուսաստանի սարսափն էր նրանց դուրս մղում, և քաղաքական դիրքորոշման կտրուկ փոփոխումը:

1920թ. հոկտեմբերի 13-ին Ֆրանսիայի վարչապետ Ժորժ Լեյգը Ավ.Ահարոնյանի հետ տեսակցության ժամանակ համաձայնվել է նրա այն մտքին, թե Ֆրանսիան այսուհետ իր առանձին ներկայացուցիչն է ունենալու Երևանում և նկատի ունենալով Հայաստանի դե ֆակտո ճանաչումը, գտել է, որ այսուհետ իր երկիրը պետք է «աշխատի ավելի ևս սերտացնել» ՀՀ հետ բարեկամական հարաբերությունները»:[2]

Այդ բոլորով հանդերձ, դեռ 1919թ. ամռան վերջերից դաշնակիցները սկսել էին իրենց զորքերը մասնակիորեն

---

[1] Ա.Նասիպեան, նշվ. աշխ., էջ 170:
[2] Ավ.Ահարոնեան, նշվ. աշխ., էջեր 97-98:

հանել Անդրկովկասից՝ իբր ծախսերի մեծության պատճառով: Թերևս ավելի կարևոր պատճառ է եղել իրենց համար, Կովկասի նշանակության անկումը:

Սևրի պայմանագիրը ստորագրած տերությունները Հայաստանին տարածքներ խոստանալով և մի կողմ քաշվելով, փաստորեն, կրկակի հետ էին խաղում: Ի՞նչ էր նշանակում, թե հարցի լուծման որևէ երաշխիք չապահովելով՝ խոստում տալ, փաստաթղթեր ստեղծել ու ետ քաշվել, մի ամբողջ ժողովրդի դառը թյուրիմացության մեջ գցել ու դեռ կամենալով շեղել նրան իր պատմականորեն արդարացված ռուսաստանյան կողմնորոշումից...

Այդ բարդ իրավիճակում, ցավոք սրտի, Ռուսաստանի դիվանագիտության շահը հանգամանքների բերումով սևրյան վճռին չէր համընկնում: Սակայն Անտանտան էլ երկդիմի էր ու ամպամած:

1921թ. մարտի 3-ին մոսկովյան թերթը գրել է, որ խորհրդա-թուրքական «դաշինքի ուրվականը եվրոպական պարագլուխներին ստիպել է փորձել նոր խաղ խաղալ թուրքերի գլխին, զիջումներ կատարել Քեմալին, խափանել ռուս-թուրքական դաշինքը, ձախողել այդ ժողովուրդների բարեկամությունը: Քեմալին լարել Ռուսաստանի դեմ»: Եվ ավելացվել է. «Այսպիսին են Լոնդոնի խորհրդաժողովի հիմնական իմաստն ու նպատակը»:[1]

Հայությունը, թերևս դյուրահավատ չլինելով, այնուամենայնիվ, խոր, անտարակուսելի համոզմունք ուներ. «Օսմանյան կայսրությունը, անկասկած, կործանված է: Նա ստացավ պատիժ, որին լիովին արժանի էին»,- գրել է հայոց մեծավաստակ պատմաբան Նիկողայոս Ադոնցը, 1920-ի հոկտեմբերի 20-ին»: Եվ պատմաբանն էլ շարունակել է, անառարկելի կռահումը. «Հայկական հարցի ամեն մի անորոշությունը, ամեն մի հետաձգումը հղի է սարսափելի հետևանքներով հայ ժողովրդի ճակատագրի համար»:[2]

1921թ. փետրվարի 26-ին դաշնակիցների Լոնդոնի համաժողովում այսպես է արտահայտվել Պողոս Նուբարը.

---

[1] Известия, Москва, 1921, 3 марта.

[2] Ն.Ադոնց, Հայկական հարց, Երևան, 1989, էջեր 12-13, 17:

«Այդքան զոհողություններից հետո հայ ժողովուրդը չի կարող հրաժարվել Սևրի դաշնագրով իրեն տրված իրավունքներից»: Դա նաև այն դեպքում, որ ղեկի մոտ բոլշևիկներն էին. «Սա չի կարող թուլացնել հայ պետություն կազմելու մեր իրավունքները, քանի որ Թուրքահայաստանի հողերը կան: Այդ հողերն են, որ կազմում են հիմքը հայ պետության, նրանց հետ էլ կապված է եղել հայկական հարցը, իր ծագումով»:[1]

Գրականության մեջ ընդունված է ասել, թե խորհրդային կառավարությունը կանգնած էր արդարացի պայմանագիր կնքելու դիրքերի վրա: Թուրքերը խուսափելով Արևմուտքից, եկել էին ճնշում գործադրելու Արևելքի վրա:

1921թ. մարտի 16-ի ռուս-թուրքական պայմանագրում ասվում էր. «Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրն սկզբունքորեն համաձայնվում է չճանաչել ոչ մի հաշտության պայմանագիր կամ միջազգային որևէ այլ ակտեր, եթե պայմանավորվող կողմերից մյուսին ուժով են հարկադրում ընդունել այդպիսիք»: Սա և հռչակման բնույթով և ամբողջական բովանդակությամբ թե՛ հարկադրանք էր, թե՛ սպառնալիք Հայաստանի նկատմամբ: Մանավանդ առանձնակի նշվում էր, որ Ռուսաստանի «Կառավարությունը համաձայնվում է չճանաչել Թուրքիային վերաբերվող և նրա ազգային կառավարության կողմից չճանաչված որևէ միջազգային ակտ»:[2]

Նշանակում է՝ կարևոր չէ, որ պայմանագիրը կնքվում է միայն Թուրքիայի և Ռուսաստանի միջև առանց հանձնվող տարածքների բնարմատ սեփականատեր Հայաստանի մասնակցության:

Սա ևս՝ցավոք սրտի՝բացառիկ դեպք էր տերությունների միջև հարաբերությունների բնագավառում: Թերևս որքան բացառիկ, բազմապատիկ, ավելի անօրինական, անարդարացի: Պայմանագրի հոդված 15-ում լրացում է կատարված. «Ռուսաստանը պարտավորվում է Անդրկովկասյան հանրապետությունների նկատմամբ դիմել քայլերի, որպեսզի նրանց կողմից թուրքերի հետ կնքվելիք պայմանագրերում անպատ-

---

[1] Ավ.Ահարոնեան, Սարդարապատից մինչև Սեւր եւ Լոզան, էջ 109:
[2] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 500:

ճառ ճանաչվեն սույն պայմանագրի այն հոդվածները, անմիջաբար վերաբերվում են իրենց»:[1]

Չլինի՞ թե շփոթություններ լինեն: Սրա իմաստը զգուշողական պարտավորեցում է. չլինի՞ թե մեկն էլ շրջանցի ու չկատարի: Հայաստանի վրա թուրքերի հարձակումից հետո Թուրքիան վստահ է եղել, որ տվյալ իրավիճակում Հայաստանը մնալու է առանց աջակցության:

1920թ. վերջին և 1921թ. առաջին ամիսներին անտանտյան մամուլը այլևս հարմար չէր գտնում Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերվող հոդվածների իրականացման օգտին արտահայտվելը, ուստի տվյալ հարցը պահանջվող տեսադաշտից հեռացվում էր: Սա մի կողմից: Մյուս կողմից, Քեմալը այլևս միայն Ռուսաստանի մտերիմը չէր: Նրան բացահայտ և անուղղակի աջակից պաշտպաններ կային արդեն Անտանտի շրջանակներում:

Իսկ Ազգերի Լիգա կոչվածը հագիվ թե չէր նկատում, թե ինչ է կատարվում: Ընդամենը ամիսներ առաջ Սևրյան գերազանց փաստաթղթով չորս վիլայեթ էր շնորհում Հայաստանին, ապա կարճ ժամանակ անց ուշադրություն չդարձնելով, որ ոչ միայն այդ հողերի վերադարձում չի եղել, այլև հայոց լրացուցիչ տարածքներ էր զավթվել թուրքերի կողմից:

Մնում էր, որ կամ «հաղթական դաշնակիցները ուժով ստիպեին Թուրքիային, որ ընդունի և կատարի Սևրի պայմանները կամ բռնեին զիջումների և իրավախոհության ճանապարհը», ըստ որում զիջումները պետք է լինեին նվազագույն դիմադրության գնով»: Ուրեմն, կամ ուժ չէր մնացել Հայաստանին օժանդակելու, կամ այլևս, անկախ ամեն ինչից, հայոց հարցը անիրավի լուծված էին համարում: Հավանականը վերջինն է: Տեսնենք: Դա էլ իր հերթին առիթ է ծառայում, որ Թուրքիան նպատակահարմար գտնի հայտարարելու «իր անհամաձայնությունը Սևրի դաշնագրի պայմաններին», որ Թուրքիան «իրապես արդեն տիրում է ոչ միայն Թուրքահայաստանին, այլև Կարսի նահանգին և Սուրմալուի գավառներին»:[2]

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 504:

[2] Ալ.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 337:

Մինչդեռ, Ավ.Ահարոնյանն ու Պողոս Նուբարը շարունակում էին տերությունների առջև դնել Սևրի պայմանագրի տեքստը նույնությամբ պահպանելու և կիրառելու պահանջը:

Թուրքիան հյուծված էր և պարտված: Նա ի վիճակի չէր դաշնակից տերություններին դիմադրել, եթե չլիներ նրանց բացահայտ թողտվությունը և օժանդակությունը:

Այս ամենին զուգընթաց Լոնդոնում Բեքիր Սամի բեյը Դ.Լլոյդ Ջորջից ծառայական պատվիրակություն էր ստանձնում: Եվ դա որպես հատուցում այն բանի, որ դաշնակիցները արդեն խուսանավում էին Սևրյան վճռի իրենց իսկ ստորագրությունից: Ստացվում էր հերթական տարօրինակությունը. թուրքերը ուզում էին ջնջել Սևրը մինչև իսկ այն ստորագրողների հետ համագործակցելու գնով: Մոսկվան էլ համերաշխ վում էր թուրքական պահանջների հետ և ըմբոստանալով Սևրի դեմ՝ ստորագրումի Կարսը, Սարիղամիշը, Արդահանն ու Արդվինը թուրքիային ամրակցող փաստաթուղթը: Եվ արդյունքում, դարձյալ մի տարօրինակություն., այլևս Սևրը մերժում էին և Անտանտի տերությունները, և Ռուսաստանը ոչ քաղաքական տարբեր բևեռներով, ըստ հավաստիացումների, ձգտելով մնալ որպես Հայաստանի բարեկամներ:

Եվ այսպես, երեկվա հակաթուրքական ուժերը, միավորվել ու ջանք են գործադրում թուրքիային իրենց ենթակայության տակ գցելու և Ռուսաստանի դեմ նրան ըմբոստացնելու համար: Դարձյալ ու դարձյալ խնդիրը լուծելու էր Սևրը: Եթե Ռուսաստանը սկզբից ևեթ սևրյան տարածքները Թուրքիայի հովանավորության տակ էր տեսնում, ապա դաշնակից տերությունները պարզապես սկսում են հեռանալ և հրաժարվել Սևրում իրենց իսկ ընդունած վճռից՝ այդ ձևով սևրյան տարածքները անձեռնամխելի դարձնելով Թուրքիայի տիրապետության ներքո»:[1]

Դրանից ակնկալիքը այն էր լինելու, որ Քեմալը վարձահատույց լիներ Ռուսաստանի հետ իր մերձեցման դիրքերից հրաժարվելով: Դա արդեն, ինքնին, դարձյալ նշանակում էր, բացարկ հայտարարել Սևրի պայմանագրի, մասնավորապես Հայաստանին վերաբերվող հոդվածներին:

---

[1] Вестник НКИД, 1921, 15 марта.

Իրադրությունը հայոց համար բարդ էր, բայց ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնի համար դժվար չէր դեռ 1920թ. օգոստոսի 26-ին հավաստիացնել, որ հայերը կարող են վստահ լինել, որ նրանց «իղձերի իրականացման համար կարվի ամեն ինչ»: Իսկ 1920թ. հոկտեմբերի 4-ին Ռումինիայի արտգործնախարար Տակո-Իոնեսկուն Ավ.Ահարոնյանին հավաստիացնում էր, թե Հայաստանի հոգսերի համար մեր երկիրը պատրաստ է 4-5 հազար ռուսական հրացան «անվճար ընծայել»:[1] Խոստումների մեջ պակաս շռայլ չէին նաև Ֆրանսիայի դիվանագետները: Այն պահին, երբ հայոց կառավարությունը ի պատասխան Ֆրանսիայի պահանջարկի բամբակ էր ուղարկում, հավաստիացվում էր, որ Փարիզը կանի ամենայն անհրաժեշտ հայերի օգտին Կիլիկիան պահելու համար:

Շարունակվող հայ-թուրքական պատերազմում՝ Կարսի անկումից հետո, Սևրի պայմանագրի նշանակությունը լրջորեն տատանվում է և Ավ.Ահարոնյանը ստիպված է լինում համոզմունք հայտնել, թե՝ եթե «Դաշնակիցները Հայաստանին օգնության չհասնեն, բոլշևիկները Թուրքիայի հետ կստիպեն Հայաստանին ընդունել խորհրդային *իշխանություն*»: Չենք կարող չխոստովանել Ավ.Ահարոնյանի՝ ապագան կռահելու ընդունակությունը, որը դիվանագետի բարձրագույն արժանիքն է: Փարիզը հետազոտելուց հետո, Ավ.Ահարոնյանը, զորավար Բագրատունու հետ, 1920թ. նոյեմբերի 11-ին մեկնած է եղել Լոնդոն «խնդրելու Մեծ Բրիտանիայի միջամտությունը»: Դիվանագետ Ջ.Տիլլին Ավ.Ահարոնյանին պատասխանել է. «Մենք էլ անկարող ենք: Ձեզ մնում է քարշ տալ մի որոշ ժամանակ: Մենք պատրաստ ենք ձեզ տալ ռազմամթերք, վառելիք երկաթուղիների համար: Չհուսահատվեք»: Փաստորեն, այդպես էլ եղել է. չեն հուսահատվել: Սա դեռևս 1920թ. նոյեմբերի 12-ին: Հաջորդ օրը Ավ.Ահարոնյանի ականջին հնչել է Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ի արևելյան գործերի տնօրեն Օսրոդնի ամփոփիչ խոսքը. «Հայաստանում մենք միայն մարդասիրական տեսակետից կարող ենք գործել, ուրիշ շանս չունենք»:[2]

---

[1] Ավ.Ահարոնեան, նշվ. աշխ., էջ 90-93:
[2] Ավ.Ահարոնեան, նշվ. աշխ., էջ 100-103:

Քիչ չէ, գոնե վերջին ժամին ասվել է, այն էլ ոչ թե մասմաս, այլ լիովին, ամբողջ ճշմարտությունը:

Նոյեմբերին Քեմալին տեղեկացվել է Լոնդոնից վերադարձած Ստամբուլի կառավարության արտգործնախարար Իզզէթ փաշայի հաղորդումը, որ Օսմանյան կայսրության համար Հայաստանի հարցի բարենպաստ լուծումը լիովին ապահովված է, ուստի պետք է օգտվել ստեղծված նպաստավոր վիճակից: Այլ կերպ ասած՝ լուծման ուրիշ ոչինչ չի մնացել, մնում է գայլի պես հոշոտել Հայաստանին, ընդհանրապես հայկական հարցը ուղղակի այլոց միջոց է ծառայեցնել սեփական խնդիրներ լուծելու համար:[1]

Առանձնապես շատ է հիշվել ու կրկնվել «Ազգային օջախ» հասկացությունը, որը դիտվում և առաջարկվում էր որպես հայկական պահանջների իրականացման ձև, որն էլ ըստ էության իրականում մերժում էր նշանակում: ԱՄՆ-ի ներկայացուցիչ Չայլդը, որը ելույթներ ունեցավ Լոզանում հայոց հարցի քննարկումների ժամանակ, հիշատակում է, թե ընդհանրապես խոստացել են, բայց միաժամանակ անիրականալի են եղել հայոց հարցի լուծման համար հայությանը օջախ տրամադրելու մասին չիրականացված առաջարկները:

Այսինքն, արևմտյան դիվանագիտությունը վերջ ի վերջո ցույց տվեց իր սին խոստումների մերկապարանոց լինելը:

---

[1] М.Кемаль. Путь новой Турции, т. III, с. 136.

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1918թ. սկզբից 1920թ. ավարտական փուլը հայ ժողովուրդը աշխատեց, ստեղծագործեց ու կառուցեց զտարյուն Հայաստան աշխարհի մի նորապսակ բեկոր: Վերջինիս հաջորդեց Խորհրդային Հայաստանը, որին փոխարինելու եկավ Հայաստանի Հանրապետությունը՝ առայսօր ապրողը, աշխատողն ու ստեղծագործողը: Սրանք դատողություններ էին, անգամ փաստից բխող, կիրառական ասպարեզ չէին մտնում, որովհետև հայկական կողմի ուժերը բավարար չէին, իսկ օգնություն խոստացողները ավելի շատ իրենց հոգսերով էին զբաղված և որոնումները հայոց կողմում չէին բևեռացվում, մինչդեռ հակառակն էր շարունակվում կատարվել:

Պետք է նկատել, որ այդ տեսակետին համակիր չեն եղել մայր Հայաստանից դուրս ապրող և գործող հայ ազգային գործիչները:

Բնորոշ է Ալ.Խատիսյանի արտահայտած կարծիքը: Նա հակասությունների այդ իրավիճակում հարցի լուծման ելք է նշմարում հետևյալը. «Ընդարձակված Հայաստան, մինչև նրա վարչաձևի փոփոխությունը՝ պետք է կանոնավորվեր բոլշևիկների ձեռքով: Կամ կցվող հողամասերը (օրինակ, Կարսի նահանգը, կամ թուրքահայկական վիլայեթների մասերը) պետք է կառավարվեին առանձին իշխանությամբ, որը գտնվեր Ազգերի Լիգայի կամ որևէ պետության հսկողության տակ: Կամ, վերջապես, այդ հողամասերի վրա պետք է մնար թուրքական իշխանությունը՝ անվանապես»:[1]

Դաշնակիցների գործողությունների ընթացքում Սևրի պայմանագիրն, ինչպես արդեն նկատվեց, ըստ էության, աստիճանաբար զրկվում է իր նախնական իմաստից, նշանակությունից և ազդեցությունից: Թուրքիան գնալով ամրապնդում է իր զավթիչ դիրքերը: Հայաստանի համար դա ունենում է ակնհայտ այն անիրավացի ազդեցությունը, որ Սևրի պայմանագիրը՝ փաստորեն՝ կիրառության ոլորտ չի մտնում: Հայաստանի խորհրդայնացված տարածքն էլ մինչ այդ եղածի

---

[1] Ալ.Խատիսեան, նշվ. աշխ., էջ 348:

համեմատ, զգալիորեն կրճատվում է՝ հայ-թուրքական պատերազմի բռնազավթիչ արդյունքում:

Այդուհանդերձ, անդրդվելի է մնում և իր վճռի մեջ հաստատ ԱՄՆ-ի նախագահ Վ.Վիլսոնը, որը գուցեև Հայաստանի վերջին օրերի դեպքերից անտեղյակ 1920թ. դեկտեմբերի 3-ին Լոնդոնում ընթացող տերությունների խորհրդակցությանն է հղում իր առաջարկը՝ պնդելով, որ «Հայաստանին նշանակալից չափով ավելի լայն սահմաններ պետք է տալ, քան նա է պահանջում»:[1]

Ինչևէ, կրկին անգամ սոսկական խոստումներ՝ գուցե բարի ցանկություններից դրդված: Սակայն, այդ ամենը սովորականի պես մնում էին միմիայն զուտ խոստում: Մինչև վերջ էլ տերություններ կոչվածները որևէ իրական աջակցություն այդպես էլ չցուցաբերեցին հայ ժողովրդին՝ նրան կրկին միայնակ թողնելով դարավոր թշնամի թուրքին դեմ հանդիման:

Սակայն, հայ ժողովուրդը այս էլ որ երրորդ անգամ Փյունիկի պես հառնեց աշխարհավեր պատերազմից ու քեմալական հորդանների արշավից հետո: *Հազարամյակների հերոսական մաքառումից հետո նա ի զորու եղավ պահպանել ու ամրապնդել իր պետականությունը, և այժմ այդ նույն տերությունների հետ արժանապատիվ ձևով պայքարում է իր պատմական պահանջների իրականացման համար : Եվ նա հաղթանակի կհասնի՝ Արցախ աշխարհի ազատագրումն էլ՝ ասվածի առհավատչյա* :

---

[1] Հայաստանը ... փաստաթղթերում, էջ 688:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Էջեր մինչ Սևրյան պատմությունից

ա. 19-րդ դար 4

բ. 1914-1918թթ. աշխարհամարտը 7

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Տարածքաշնորհ փաստաթղթի խմորումը (1918-1920թթ.) .. 16

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերվող
հոդվածներն ու առնչվող հատվածները 51

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Հայաստան-Ռուսաստան հարաբերությունների
հաստատման բարդությունները 60

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Հակասևրյան մի պատրվակ 82

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

Նախ առածգական վիճակ, ապա՝ պատերազմ
և քաղաքական հեղաշրջում կրճատված հողի վրա 93

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

Տերությունների դիրքը և հերթական խաբկանքը 109

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՍԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱԳՐՈՒՄ

Ստորագրված է տպագրության 2004թ. նոյեմբերին 16-ին:

Չափսը 60x84 $^{1}/_{16}$: Ծավալը 8 մամուլ:
Թուղթը օֆսեթ: Տպաքանակը 300:

«Գրիգ տպագրատուն» ՍՊԸ տպարան:
Երևան, Վ.Վաղարշյան 12ա:

[1000m]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220090031

A II 90031

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՆԻԿՈԼԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Հ. Կարապետյանը ծնվել է 1927թ. հոկտեմբերի 2-ին Արագածի շրջանի Գեղադիր գյուղում: Վանաձորի (Կիրովականի) 6-րդ միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Երևանի Պետական Համալսարանի Պատմության ֆակուլտետը և, այն 1949թ. բարձր առաջադիմությամբ ավարտելով, մի կարճ ժամանակ ղեկավարում է մայրաքաղաքի խոշորագույն գործարաններից մեկի կոմերիտական կազմակերպությունը: Այս ընթացքում էլ նա գրում է իր առաջին մենագրությունը՝ նվիրված հայ երիտասարդության հեղափոխական շարժումների պատմությանը:

Հայպետհրատի խմբագրության վարիչի պաշտոնավարության տարիներին Հ. Կարապետյանը շարունակում է մնալ գիտության ոլորտում, հանդես է գալիս մի շարք նոր ուսումնասիրություններով, իսկ 1960թ. սկսած՝ լիովին նվիրվում գիտական և դասախոսական գործունեությանը:

1960-1970-ական թվականները պատմաբանի համար եղան ամենաբեղմնավոր տարիները: Արդյունքը՝ շուրջ 30 գիրք և գրքույկներ, հարյուրավոր հոդվածներ: Դրանց թվում առանձնահատուկ արժեք ունի «Մեծ պայքարի մարդիկ» երկհատոր աշխատությունը: 1969թ. նա պաշտպանեց դոկտորական ատենախոսություն, իսկ 1973թ. ստացավ պրոֆեսորի կոչում:

1992թ. լույս տեսավ նրա «Անդրանիկ» երկը՝ երեք գրքով: Այդ մեծարժեք գործը պատմաբանի տարիների քրտնաջան աշխատանքի արգասիքն է: Աշխատության մեջ պատշաճ պատմաբանական վերլուծության են ենթարկված հայ ժողովրդի ազգային հերոսի ապրած հերոսական ու մաքառումներով հարուստ կյանքին զուգորդված բոլոր կարևոր իրադարձությունները և դեպքերը:

Հ. Կարապետյանը ավելի քան 40 տարի դասավանդել է հանրապետության տարբեր բուհերում, 1976-1989թ.թ. գլխավորել է Հայկական Գյուղատնտեսական ինստիտուտի պատմության ամբիոնը:

Կյանքի վերջին 10 տարիներին նա աշխատում էր ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում, ուներ բազմաթիվ մտահաղացումներ, սակայն հասցրեց ավարտել միայն սույն մենագրությունը:

Անվանի պատմաբանը վախճանվեց 2004թ. հունիսի 28-ին: